



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

372
u - 23



372
G-23

ՀՐԱ. «ԵՎՐՈՒՍԻԱՆ ԳԳՐԵԿՈՅՆ»

Ես իսակիծ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԾՐԱԳԻՐ

Հ Ա Յ Ա Յ

ՎԵՐԱԲԵՐՅԱՆ ՏԱՐԱԿԱՆ ՊՐԵՄԻԱՄ
ԱՌԱՋՐԱՎԱՐ ԱՎԱՐԱՐ ԱՆՔ
12 ԽԱՅՐ. 1918 թ. ԹԱՎԱՐ.

Են է Յ Յ Յ.

Թ Ի Ֆ Լ Ի Զ

Տպություն Պետ. Մատուցան վր. № 15.

1906

(188)

- MAR 2010

-23

vi

ՀՐԵՑ. ԵԵՐԱԿՈՒԵԵԴ ՊՊՐԵՆԱՑԻ

B.C.	N.H.
+ N.J.	- Y.
B.T.	C.S.S.
<u>340</u>	
<u>9931-200</u>	



ԿԱՆԱԴԻՐՈՒԹԵՒՆ ԵՒ ԾՐԱԳԻՐ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊԸՑՈՑՆԵՐԻ

θ h g l h g

Գաղտն ՀԵՐՄԱՆ ԲԺԿ. Մասմարեան փող. № 15.

1908

(188)

10 JUL 2013

50.766

Անցեալ 1905-թւի յուլիսի 20-ին Վեհափառ Հայրապետի
№ 623 կոնդակով նշանակւեց մի Յանձնաժողով նախագահութեամբ
Սրբազն Նահապետ եպ. Նահապետեանի և անդամակցութեամբ
Տ. Տ. Մեսրովը վարդ. Տէր-Մովսիսեանի և Յուսիկ վարդ. Զոհ-
րաբեանի և պ. պ. Ալէքսանդր Քալանթարի, Լ. Սարգսեանի, բժ.
Կար. Ստեփանեանի, Համբ. Առաքելեանի, Յովհ. Սաղաթէլեանի
Սամս. Յարութիւնեանի, Սիրակ. Տիգրանեանի, Սոկր. Մելիք-Ա-
դամեանի, Ստ. Լիսիցեանի և Տիգր. Յովհաննիսեանի «վասն մը-
շակելոյ կանոնադրութիւն (ծխական դպրոցի) և ծրագիր մի և յետ
պատրաստելոյ առաջի առնելոյ դայն ի տես և ի հաստատութիւն»
Նորին Օծութեան:

Յանձնաժողովը յուլիսի 21-ին ունեցաւ իր առաջին նիստը:
Թէ այդ և թէ յաջորդ նիստերում նա մշակեց կանոնադրութեան
մի քանի հիմնական կէտերը, իսկ գալով ուսումնական ծրա-
գրին՝ Յանձնաժողովը որոշեց «Նրաւիրել մի բազմամարդ ժո-
ղով ուսուցիչներից և ձեռնհաս անձերից և յանձնել նրան ուսում-
նական ծրագիր կազմել և Յանձնաժողովի մշակած վարչական կա-
նոնադրութեան սկզբունքները քննել ու կարծիք յայտնել այդ
մասին»:

Այդ բազմամարդ ժողովը հրաւիրւեց նոյն թւի օգոստոսի
վերջերին: Հրաւիրւած էին ա. Նախկին թեմական տեսուչները,
ք. թեմական դպրոցների նախկին և ներկայ տեսուչները, նոյն
պէս և ձեմարանի տեսուչը. գ. թեմական դպրոցների ուսուցչա-
կան խմբի և հոգեբարձութիւնների երկու-երկու ներկայացուցիչ-
ները և դ. Կովկասի գլխաւոր հայաբնակ քաղաքներում գտնւած
հայ ուսուցիչների և ուսուցչուհների երկու-երկու ներկայացու-
ցիչները:

Այս Ուսուցչական համագումարի նիստերը բացւեցին օգոստոս-
սի 28-ին մասնակցութեամբ 33 անձնաւորութիւնների և տեսեցին
մօտ երկու շաբաթ: Համագումարը քննեց Յանձնաժողովի կա-
նոնադրութեան հիմնական սկզբունքները և յայտնեց իր հա-
յեցքները կանոնադրութեան և դպրոցական ծրագրի մասին և,
իսկ թէ կանոնադրութեան և թէ դպրոցական ծրագրի մասնա-
մասն մշակման համար ընտրեց մի Մասնաժողով, պատւիրելով

աշխատութիւնների արդիւնքը նախ քան նորին Օծութեան հայեցողութեան ներկայացնելը ուսուցչական նոր Համագումարի վերջնական քննութեանը առաջարկել:

Մասնաժողովի անդամ ընտրւեցին հետեւեալ տասնեւմէկ անձնաւորութիւնները. Աղայեան Դ., Լիսիցեան Ս., Մալխասեան Ս., Մանաղեան Յ., Մանդինեան Ս., Յարութիւնեան Ի., Ռաշմաճեան Տ., Սահակեան Ս. Ք., Սարգսեան Լ., Տէր-Միրաքեան Յ. և Տիգրանեան Ս.:

Այս Մասնաժողովը՝ նախագահ ընտրելով պ. Ստ. Մալխասեանին, սեպտեմբերի 4-ից մինչև յուլիսի 15-ը ունեցել է 58 նիստ և մշակել է ծխական-եկեղեցական տարրական գալոցների կանոնադրութիւնն ու ծրագիրը: Ընտրւած անդամներից 1) պ. Ռաշմաճեանը բոլորովին չէ մասնակցել Մասնաժողովի զրադանքներին՝ քաղաքիցո բացակայ լինելու պատճառով. 2) պ. Սարգսեանը երկու նիստի ներկայ լինելուց յետոյ՝ բոլորովին հրաժարւել է մասնակցելուց «չափազանց զրադւած լինելու պատճառով.» 3) պ. Մանդինեանը նոյնպէս չորս նիստից յետոյ հրաժարւել է անդամակցութիւնից, առարկելով թէ՝ «անօգուտ գտայ իմ մասնակցութիւնը Մասնաժողովին». 4) պ. Տիգրանեանը ներկայ է եղել միայն ութը նիստ՝ քաղաքիցո բացակայելու պատճառով. 5) պ. Մանաղեանը նոյնպէս զրադւած լինելու պատճառով բաւականին ժամանակ հրաժարւեց նիստերին ներկայ լինելուց—ներկայ է եղել քսանութից նիստի:—Մնացած անդամներից նիստերին ներկայ են եղել՝ պ. պ. Աղայեան 42 անգամ, Լիսիցեան 56, Մալխասեան 45, Յարութիւնեան 52, Սահակեան Ք. 27, Տէր-Միրաքեան Թիֆլիզ փոխադրւելուց յետոյ 53:

Ծրագրի մշակելու ժամանակ նիստերին իրեկ մասնագէտ և փորձառու ուսուցիչներ հրաւիրւել են պ. պ. Զոհրաբեան և Սպարապետեան (թւաբանութեան), Շամշինեան, Թադէստեան և Լիոնեան (նկարչութեան), Քափանակեան (ուսուց լեզուի), տ. Կուզանեան, օր. Սունդուկեան և օր. Բաստամեան (ձեռագործի), Մուշայեան (բնագիտութեան) և բժիշկ Արծրունի (առողջապահութեան համար):

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԵԽ ԾՐԱԳՐԻ
ՄՇԱԿՈՂ ՄԱՍՆԱԺՈՂՈՎ

Թ ի Ֆ Լ ի Պ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ.

ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ

Յօդ. 1. Տարրական գպրոց կոչում են երկամեայ, չորսամեայ և վեցամեայ գասընթացը ունեցող ուսումնարանները:

Ծանօթ. Ամեն մի գպրոց կամ եկեղեցի կարող է առանձին մանկապարտէղ ունենալ:

Յօդ. 2. Տարրական գպրոցի նպատակն է տալ երկու սեռի սաներին տարրական ընդհանուր ուսում և կրթութիւն՝ համապատասխան աստիճանի գպրոցի համար սահմանած ծրագրի ծաւալով:

Յօդ. 3. Տարրական բոլոր գպրոցները կարող են լինել խառն, այսինքն՝ երկու սեռի սաների համար:

Յօդ. 4. Դպրոցական կառավարութեան անպարէզում ընտրել ընտրւելու, այլ և պաշտօն վարելու իրաւունք ունեն Հայոց եկեղեցու բոլոր իրաւասու անդամները, առանց հոգեորականի ու ժողովրդականի և սեռի խարութեան, բացի այս կանոնադրութեան մէջ յատկապէս յիշւած գէպքերից:

II. ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՆՄԻԶԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Յօդ. 5. Իւրաքանչիւր տարրական գպրոցի ընթացիկ գործերի անմիջական վարիչներն են նոյն գպրոցի ա) Հոգաբարձութիւնը, բ) Մանկավարժական խորհուրդը, գ) Խառն ժողովը և դ) Տեսուչը:

Ա. Հոգաբարձութիւն

Յօդ. 6. Հոգաբարձութիւնը կազմում է երէցփոխանից և 2--4 հոգաբարձուներից, որոնց ընտրում է ծխական ժողովը 3

տարի ժամանակով և հաստատում թեմական Ուսումնարանիական Խորհուրդը: Բացի հոգաբարձուներից ծխական ժողովը ընտրում է նոյն թւով անձնափոխանորդներ: Հոգաբարձուները իրենց միջից մէկին ընտրում են նախագահ:

Յօդ. 7. Դպրոցի ամբողջ տնտեսական մատակարարութիւնը հոգաբարձութեան գործն է. նա կազմում է դպրոցի նախահաշիւը և իւրաքանչիւր տարւայ վերջը ներկայացնում է տնտեսական մասի տեղեկագիր թեմական Ուսումնարանական Խորհրդին և ծխական ժողովին: Հոգաբարձուները իրաւունք ունեն ներկայ լինելու գասերին, քննութիւններին և մանկավարժական խորհրդի նիստերին առանց ձայնի իրաւունքի, այլ և իրաւունք ունեն հարցապնդումներ անելու Մանկավարժական խորհրդին՝ ուսումնական հարցերի վերաբերմամբ:

Բ) Մանկավարժական խորհուրդ

Յօդ. 8. Մանկավարժական խորհուրդը կազմում է դպրոցի բոլոր ուսուցիչներից տեսչի նախագահութեամբ:

Ծանօթ. Այս կանոնադրութեան մէջ «ուսուցիչ» բառը գործ է ածում անխտիր բոլոր դաստուների համար:

Յօդ. 9. Մանկավարժական խորհուրդը տնօրինում է դպրոցի ուսումնական վիճակը, հսկում է ուսումնական ծրագրի, կանոնադրութեան ուսումնական մասի և իր որոշումների ճիշտ գործադրութեանը, քննում է ուսումնական տեղեկագրի նախագիծը և վերջնականապէս խմբագրելով ուղարկում է մի-մի օրինակ Հոգաբարձութեան և թեմական Ուսումնարանական Խորհրդին:

Գ) Խառն ժողով

Յօդ. 10. Խառն ժողովը կազմում է բոլոր հոգաբարձուներից և ուսուցիչներից՝ տեսչի նախագահութեամբ: Տեսչի բացայութեան, այլ և նրան վերաբերեալ գործերի քննութեան դէպում՝ Խառն ժողովը իր միջից ընտրում է մի այլ ժամանակաւոր նախագահ:

Յօդ. 11. Խառն ժողովի իրաւասութեանն են պատկանում—

ա) միաժամանակ թէ ուսումնական և թէ տնտեսական բնաւորութիւն ունեցող խնդիրները.

բ) ուսումնական հարցերի առթիւ Հոգաբարձութեան և Մանկավարժական խորհրդի միջև ծագած թիւրիմացութիւնները:

գ) դպրոցի պաշտօնեաների դէմ յարուցած բողոքները:

դ) տեսչի և ուսուցչի ընտրութիւնը և պաշտօնից արձակելը:

Ծանօթ. Նոր դպրոց բացւելու ժամանակ կամ ամբողջ ուսուցչական կազմի լուծելու դէպրում՝ տեսչի ընտրութիւնը կատարում է Հոգեբարձութիւնը:

ե) Կազմել տարեկան ակտեր, որոնց ժամանակ կարդացւում են դպրոցի անտեսական և ուսումնական տեղեկագիրները:

Դ) Տեսուչ

Յօդ. 12. Տեսչին ընտրում է Խառն ժողովը և տեղեկացնում է Ուսումնարանական Խորհրդին: Եթէ երեք շաբաթւայ ընթացքում մերժում չստացվէ, ընտրութիւնը համարւում է վաւերական:

Ծանօթ. 1. Տեսչի ընտրութիւնը սովորաբար կատարւում է ուսումնական տարւայ վերջին (մայիս-յունիս):

2. Թեմական Ուսումնարանական Խորհրդի մերժումը պիտի պատճառաբանւած լինի:

3. Եթէ Խառն ժողովը համակերպւում է մերժման պատճառաբանութեանը՝ անմիջապէս ձեռնարկում է նոր ընտրութեան:

4. Թեմական Ուսումնարանական Խորհրդի մերժման դէմ Խառն ժողովը կարող է բողոքել կենտրոնական Ուսումնարանական Խորհրդին օգոստոսի 25-ից ոչ ուշ:

5. Բողոքելու դէպրում՝ մինչև կենտր. Ուս. Խորհրդից պատասխան ստանալը Խառն ժողովը ժամանակաւոր տեսչի պաշտօնակատար է ընտրում Մանկավարժական խորհրդի անդամներից մէկին, բայց ոչ տեսչացու ընտրածին:

Յօդ. 13. Տեսչի պաշտօնից արձակելու առաջարկը կարող է անել Խառն ժողովի իւրաքանչիւր անդամը և Շրջանային տեսուչը: Առաջարկը պիտի լինի գրաւոր և պատճառաբանւած: Խառն ժողովը քննում է առաջարկը, գաղտնի քէարկութեամբ որոշում է անում, և եթէ որոշում է արձակել, այս որոշումը պատճառաբանւած ուղարկում է թեմական Ուս. Խորհրդին ի հաստատութիւն:

Ծանօթ. Այսպիսի որոշման համար պահանջւում է Խառն ժողովի ամբողջ կազմի (հաշւելով նաև նիստից բացականերին ձայների մեծամասնութիւնը):

Թեմական Ուս. Խորհրդից ստացւած վճիռը անմիջապէս ի կատար է ածում, նոյնիսկ այդ վճու դէմ բողոք լինելու դէպրում:

Յօդ. 14. Տեսուչը նախագահում է Մանկավարժական խորհրդին, վերահասու է լինում կանոնադրութեան ուսումնական մասի, ծրագրի և Մանկավարժական խորհրդի որոշումների ճիշտ գործադրութեանը և իր տեսածի մասին զեկուցանում Մանկավարժական խորհրդին, հսկում է դպրոցի կարգապահուէ

թեանը, կազմում է տարեկան ուսումնական տեղեկագրի նախագիծը և ներկայացնում Մանկավարժական խորհրդին:

Տեսուչը պարտաւոր է դպրոցում դասեր ունենալ՝ ըստ կարելոյն սահմանափակ թւով, և գպրոցական պարագմունքի ժամանակ դպրոցում գտնել: Բացառիկ և ծայրայեղ դէպքերում տեսուչըն իրաւունք ունի ուսուցիչներին ժամանակաւորապէս հեռացնելու պաշտօնավարութիւնից՝ մինչև Խառն ժողովին զեկուցանելը, որը պէտք է անմիջապէս հրաւիրի կարգադրելու:

b) Ուսուցիչներ

Յօդ. 15. Ուսուցիչներին ընտրում է Խառն ժողովը տեսչի տուաջարկութեամբ և առաջարկում է Թեմական Ուսումնարանական Խորհրդին ի հաստատութիւն:

Ծանօթ. Ուսուցչական պաշտօն վարել կարող են, բացի Հայոց եկեղեցու անդամներից, նաև օտարադաւան հայ կամ օտարազգի անձեր:

Յօդ. 16. Ուսուցիչները արձակուում են նոյն կարգով, ինչպէս տեսուչները (Յօդած 13): Գրաւոր ու պատճառարանւած առաջարկը պէտք է տրվի տեսչին՝ իրեկ Խառն ժողովի նախագահին:

Յօդ. 17. Քառամեայ և վեցամեայ Խառն դպրոցները պիտի ունենան առնւազը մի ուսուցչունի, իսկ երկամեայ խառն դըպրոցները, եթէ տղամարդ ուսուցչին են յանձնւած, պէտք է ունենան մի վերահսկող կին:

III. ԹԵՄԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

a. Թեմական Ուսումնարանական Խորհուրդ

Յօդ. 18. Թեմական Ուսումնարանական Խորհուրդը կազմում են Առաջնորդը՝ իրեկ նախագահ և 5—9 անդամներ, որոնցից մէկը վարում է Խորհրդի գործակարի պաշտօնը:

Յօդ. 19. Գործակար անդամին ընտրում է թեմի ուսուցիչներից ընտրւած պատգամաւորների ժողովը, իսկ մնացած անդամներին՝ Թեմական պատգամաւորական ժողովը—չորս տարի ժամանակով: Ընտրութիւնը լինում է իւրաքանչյուր երկու տարին՝ խորհրդի կազմի մի կէսի համար: Բացի անդամներից՝ Թեմական ժողովը ընտրում է նաև 2—4 անձնափոխանորդներ:

Յօդ. 20. Թեմական Խորհրդի անդամները սոճիկ չեն ստանում, բացի գործակար անդամից:

Յօդ. 21. Թեմակ. Ուսումնարանական Խորհրդի անդամները պէտք է առնւազը միջնականգ դպրոցից ցենզ ունենան, իսկ գործակար անդամը բարձրագոյն ուսումն ստացած լինի և գոնէ Յարի իրեւաստեսուչ կամ ուսուցիչ ծառայած լինի:

Ծանօթ. Եթէ թեմում կայ միջնակարգ (Թեմական) դպրոց և ենթարկելու է այս Ուսումն. Խորհրդին, այս գէպքում պէտք է սրա բոլոր անդամները բարձրագոյն ուսումն ստացած լինեն:

Յօդ. 22. Թեմակ. Ուսումն. Խորհուրդը—

1) հոկում է թեմի բոլոր դպրոցների կանոնադրութեան ու բարգաւաճման վրա թէ վարչական և թէ ուսումնական ու տընտեսական կողմից:

2) քննում և լուծում է դպրոցական ստորագրեալ մարմինների ու պաշտօնեաների տարածայնութիւններն ու բողոքները, ինչպէս և այս պաշտօնեաների դէմ յարուցած բողոքները.

3) հաստատում է թեմի տարրական դպրոցների հոգաբարձուների, տեսչի և ուսուցիչների ընտրութիւնը.

4) քննում և վճռում է տեսչի և ուսուցիչների արձակման առաջարկութիւնները.

5) ընտրում է Շրջանային տեսուչներ, որոշում է սրանց թիւը, սոճիկ է նշանակում. քննում է սրանց տեղեկագրերը.

6) ամեն տարի կազմում է միամեայ ուսումնական և տընտեսական տեղեկագիր թեմի բոլոր դպրոցների համար և ներկայացնում կենա. Ուս. Խուսնութիւն ու թեմական ժողովին.

7) կազմակերպում է թեմակ. ուսուցչ. ժողովներ՝ առնւազն երեք տարին մի անդամ:

Բ. Շրջանային ժեսուցիչներ

Յօդ. 23. Շրջանային տեսուչները վերահսկում են Թեմակ. Ուս. Խորհրդից իրանց յանձնւած ըլջանի տարրական դպրոցների և դպրոցական մարմինների գործունէութեան վրա. սրա համար այցելում են դպրոցները, ներկայ են լինում դասերին, Հոգաբարձութեան, Մանկավարժական խորհրդի և Խառն ժողովների նիստերին՝ առանց ձայնի իրաւունքի. հարկաւոր գէպքում իրանք են հոգաբարձուներին և ուսուցիչներին ժողովի հրաւիրում. յայտնում են համապատասխան մարմիններին իրանց դիտողութիւնները և նրանցից բացարութիւն ստանում, մանրամասն զեկուցումներ են անում Թեմական Ուսումնարանական Խորհրդին շրջանի դպրոցների ուսումնական, վարչական տնտեսական վիճակի մասին, կատարում են Թեմակ. Ուսումն. Խորհրդի յանձնարարու-

թիւնները գպրոցներին վերաբերեալ: Շրջանային տեսուչները այցելում են նաև իրանց յանձնւած շրջանի դպրոց չունեցող վայրերը՝ յորդորելու ուսումնարան բանալու և գեկուցանում են թեմակ. Ուս. Խորհրդին, թէ նրանեղ պահանջ և հնարաւորութիւն կայ և նրանեղ պակասում են միջոցներ նոր դպրոցներ բանալու համար:

IV. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Յօդ. 24. Կենտրոնական Ուսումնարանական Խորհուրդը կազմում է հինգ անդամից, որոնցից մէկին նշանակում է Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը և սա լինում է նախագահ, երկուսին ընտրում է Ընդհանուր պատգամառական ժողովը, իսկ մնացած երկուսին ընտրում է ընդհանուր ուսուցչական ժողովը՝ 4 տարի ժամանակով:

Յօդ. 25. Կենտրոնական Ուս. Խորհրդի բոլոր հինգ անդամները պէտք է լինեն բարձրագոյն կրթութիւն ստացած և առնւազը 3 տարի դպրոցներում ծառայած իբրև տեսուչ կամ ուսուցիչ:

Յօդ. 26. Կենտրոնական Ուսում. Խորհրդի գործառնութեան մրջանին են պատկանում՝

1) բոլոր դպրոցների վերին հսկողութիւնը;

2) դպրոցական գործերին ու պաշտօնեաներին վերաբերալ բոլորների վերջնական ընտրութիւնը.

3) մանկավարժական գործի և գրականութեան հետամուտ լինելը.

4) դպրոցական կանոնադրութեան և ծրագրի բարեփոխութեան վերաբերեալ նախագծերի մշակելը.

5) Թեմական Ուսում. Խորհուրդներից ստացած նիւթերի և տեղեկագրերի հիման վրա տարեկան ընդհանուր տեղեկագիր պատրաստելը սուսահայոց բոլոր թեմերի տարրական դպրոցների և Ընդհանրապէս դպրոցական գործի վիճակի մասին.

6) դասագրքեր և օժանդակ միջոցներ ընտրելը, սրանց հրատարակելուն նպաստելը.

7) հոգալ որ ուսուցիչները մանկավարժական պատրաստութիւն ունենան.

8) դպրոցական ֆոնդ կազմելն ու կառավարելը.

9) ուսուցչական ընդհանուր համագումարներ ժողովելը առաջն չորս տարին մի անգամ:

Յօդ. 27. Կենտրոնական Ուսումնարանական Խորհրդի վճիռները վերջնական են: Նրանց դէմ կարելի է բոլորեւ,

եթէ հակասում են կանոնադրութեան կամ ծրագրին: Այսպիսի դէպքերում բողոքը մատուցւում է Վեհափառ Կաթուղիկոսին, որ բացատրելով և մեկնելով խախտւած կանոնի կամ յօդւածի իսկական իմաստը՝ առաջարկում է Կենտրոնական Ուս. Խորհրդին՝ ըստ այդմ նորից վերաբննել բողոք ծագեցնող խնդիրն ու վճիռ տալ:

V. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՓՈՓՈԽՈՒԹԵԱՆ

Յօդ. 28. Դպրոցական վարչական կանոնադրութեան և ուսումնական ծրագրի փոփոխումը կամ լրացումը կատարում է ուսումնայոց բոլոր թեմերի պատգամառական ժողովի հաւանութեամբ և Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի վաւերացմամբ:



ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ

ԷՌԻՇԵՆՑԻՐ ԲԱՑԵՏՐՈՒԹԻՒՆ

Հանրակրթական տարրական դպրոցի նպատակը պէտք է լինի կեանքի ընդհանուր պահանջներին բաւրարութիւն տալը, ուստի այս հաստատութեանց մէջ պէտք է ներդաշնակօրէն միացած լինի մտաւոր, բարոյական և փիզիքական կրթութիւնը: Այս բազմակողմանի նպատակին հասնելու համար բացի դաստիարակութեան միջոցներից դպրոցը դիմում է նաև զանազան գիտելիքութերի և հմտութիւնների դասաւանդութեան: Բարոյական ոէվալուժերի առաւ աղբիւրներ ամբարտած են գիտելիքների և արևեստների մէջ, որոնցից ամեն մէկը այս կամ այն չափով, այս կամ այն կողմից նպաստում է բնաւորութեան զարգացման, եթէ նրանց նիւթերն ընտրւած են և աւանդում են հոգեբանութեան պահանջների համեմատ:

Դպրոցը, մանաւանդ տարրական դպրոցը, գիտական շատ աննշան պաշար կարող է տալ. այս պատճառով պէտք է դասաւանդութեան նիւթերը որքան կարելի է ընտիր լինեն և լաւապէս մշակւած: Մասնաժողովիս կազմած այս նոր ծրագրի մէջ գիտելիքներ են մտել, որ առհասարակ դուրս են մնացած եղել տարրական դպրոցի դասընթացքներից, օրինակ՝ ընդհանուր պատութիւն, քաղաքացիական ուսմունք, արևեստագիտական (տեխնիքական) և քիմիական տարրական առանին գիտելիքներ: Այս գիտելիքները ժամանակակից պահանջներին քիչ թէ շատ բաւարարութիւն տալու համար են միացւած դասընթացքին մեր սաներին ներկայացնելու գիտաւորութեամբ, ի նկատի առ-

նելով որ միայն մեր ազգային պատմութիւնը անկարող է այդ կարևոր գերլ կատարել: Բանի որ տարրական դպրոցների ժամանակը շատ սուր է և սաների մեծամասնութիւնը տնտեսական պատճառներով գասընթացքը աւարտելուց առաջ է կեանք մտնում, մենք պէտք է աշխատենք գենահաս սերնդի մէջ ինքնակրթութեան առողջ սաղմեր դնել, անշէջ, բեղմնաւոր հարցասիրութիւն առաջացնելով: Հետեւաբար աւանդելի նիւթերի ոչ թէ քանակը, այլ որակը և նրանց մնայուն արժանական ընդհանուր պէտք է մենք մշակնք և զարգացնենք: Խոկ այս արժանական ընդհանուր կլինին միայն ժամանակ, երբ կապւած կլինին մայր հողի հետ, այսինքն՝ հայրենագիտութեան, հետ, ընդարձակ իմաստով: Միւս կողմից՝ պէտք է նոյն պատճառով ամեն մի գիտելիք օրգանական կապերով միացած լինի հարկան առնչակից գիտելիքների հետ: Այլ խօսքով՝ մենք պէտք է ձգտենք մտաւոր աշխարհի բնական կենդրության, որի լաւագոյն գործոնը ուսուցիչն է: Հնարաւոր է և աւելի կարևոր, որ գէթ ստորին գասարաններում իրար հետ առնչութիւն ունեցող առարկաները միենայն գասատուն աւանդէ: Հարցասէր և ինքնուրոյն մարզիկ պատրաստելու համար պէտք է դպրոցը ի նկատի ունենայ մանկավարժութեան նաև մի այլ հիմնական պահանջը, որ ասում է՝ ուսուցիչը իսկապէս պէտք է ոչ թէ ուսուցանէ գիտական ճշմարտութիւնները, այլ առաջնորդէ այդ բանում սաներին, այսինքն՝ այդ ճշմարտութիւնները գտնելու միայն ձանապարհները ցոյց տայ նրանց: Հետեւաբար հիմնական աշխատանքը պէտք է իսկապէս գտարանում կատարի, իսկ տնային պարապմունքները պէտք է սահմանափակւեն: Տնային աշխատութեանց շրջանը պէտք է մտնեն դասերի աւելի կրկնողութիւն, մերենայական վարժութիւն պահանջող տարրերը, ինչպէս նաև շարադրութիւնները և այս կամ այն որոշ տեսակի պարապմունքները:

Ֆիզիքական կրթութեան համար մարմնամարզութեան դասընթացքից զատ առաջարկում է նաև ձեռարեւստ, բայց հանրակրթական հաստատութիւնը, ի հարկէ, արհեստաւորներ պատրաստելու նարատակ չի կարող ունենալ: Այստեղ սաները կը սովորեն այն արհեստները և այն չափով, որ չափով որ նրանք օրգանական կապերով միացած կլինին դասաւանդութեան այլ նիւթերի հետ: Փայտը, խաւաքարտը (կարգօն) և մասամբ կաւը պէտք է լինեն գլխաւոր մշակման նիւթերը: Դպրոցին վերաբերեալ պիտոյքները պատրաստելով, աշակերտները այնքան ձեռքի և աչքի վարժութիւն ձեռք պիտի բերեն, որ ապագային, եթէ արհեստաւոր ըլլ լինեն էլլ այդ հմտութիւնները առօրեայ կեանքում գործադրեն:

Ի նկատի պէտք է ունենալ բացի սրանից նաև տեղական պահանջները՝ այգեգործութիւն, շերամապահութիւն, մեղւարուծութիւն, կաթնատնտեսութիւն և այլն, որոնց ընտրութիւնը վերապահում է ամեն մի դպրոցի տեղական վարչութեանը:

Մասնաժողովը այս ծրագիրները կազմել է անկախ այն հանգամանքներից, թէ որքան հնարաւոր կը լինի այս ամենը անմիջապէս և անթերի գործադրել: Այս ծրագիրները արտայայտում են ժամանակիս պահանջները, որոնց մասնաժողովը աշխատել է հնար եղածին չափ բաւարարութիւն տալ ժամանակակից մանկավարժութեան ցուցմունքների համեմատ: Եթէ ծրագիրները կազմւած լինէին այժմեան մեր ուսուցչական ոյժերը, դասավրաբերը և նիւթական միջոցները հաշւի առած՝ նրանք բոլորովին թերակատար բնաւորութիւն կունենային: Ներկայ ծրագրի պահանջներին բաւարարութիւն տալու համար պէտք է հոգան թեմական դպրոցները, ուսուցչանոցներն ու լսարանները՝ ձեռնահաս ուսուցիչներ պատրաստելով, և ինքը ժողովուրդը, կրթական գործընտեսապէս ապահովելով:

Առժամանակ կազմւած են քառամեայ և վեցամեայ դասընթացքով ծրագիրներ, սակայն այն դիւզական և քաղաքային դպրոցները, որոնք մի դասատից աւել պահել կարող չեն, պէտք է երկամեայ դասընթացքով բաւականանան: Իրեկ սկզբունքը ընդունւած է, որ միաժամանակ 2 բաժանմունքից աւելի չի կարելի պարապեցնել միենոյն սենեակում: Երկամեայ դասընթացքով առանձին ծրագիր Մասնաժողովը իսկապէս կազմած չէ. Երկամեայ ուսումը նրա կարծիքով մի անօրմալ վիճակ է: Այս թերին լրացնելու և ուսածը կորստեան չը մատնելու համար Մասնաժողովը ի նկատի ունի, որ ճաշերից յետոյ կամ երեկոյեան երկամեայ դպրոցի ուսուցիչը լրացուցիչ պարապմունքներ պէտք է ունենայ շրջանաւարանների հետ:

Ծխական դպրոցների այս ծրագիրներն այն հաշւով են կազմւած, որ դպրոցական բոլոր տեսական ու գործնական պարապմունքները դասամիջոցների հետ 6 ժամւայ տեղութիւն պէտք է ունենան: Օրական գասերի թիւը չպէտք է 6-ից անցնի, իսկ ամեն մէկի տեղութիւնը 45 րոպէ պէտք է լինի:

Աշխատութեան և հանգստի ժամերը հետեւեալ դասաւորութիւնը պէտք է ունենան:

I.	դաս.	—	45	ըոսէ
II.	դաս.	—	45	»
III.	դաս.	—	45	»

դասամիջոց	10	»
մարմնամարզութիւն	25	»
դասամիջոց	15	»
IV. դաս	—	45
դասամիջոց	10	»
V. դաս.	—	45
դասամիջոց	10	»
VI. դաս.	—	45
	6	ժամ ընդամենը

Որտեղ հնարաւոր է՝ ցանկալի է դասարանների պարապմունքները 2 մասի բաժանել—մի մասը՝ ճաշից առաջ, միւսը՝ յետոյ, ինչպէս օգտակար է համարւած ընդունել համարեայ բոլոր կուլտուրական երկիրներում: Մարմնամարզարան ունեցող դպրոցները պէտք է մարմնամարզութեան դասերը ճաշից յետոյ նշանակեն:

ԴԱՍԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՂԻԽՍԱԿ

Ա. ո ա ր կ ա ն ե ր	I	II	III	IV	V	VI	Շաբաթական	
1. Կրօնագիտութիւն	2	2	2	3	2	2	13	
2. Պատմութիւն	—	—	—	2	2	4	12	
3. Քաղաքացիակ. ուսմունք	—	—	—	—	—	1	1	
4. Աշխարհագրութիւն	—	—	2	2	2	2	8	
5. Իրադնութիւն	2	2	—	—	—	—	4	
6. Բնական գիտութիւններ	—	—	3	3	3	3	12	
7. Առողջապահութիւն	—	—	—	—	—	2	2	
8. Հայոց լեզու	6	6	5	5	5	5	32	
9. Բուսաց լեզու	—	4	5	5	5	4	21	
10. Փւաբանութիւն	5	5	4	3	3	3	23	
11. Երկրաչափական ձևագիտութիւններ	—	—	1	1	2	1	5	
12. Նկարչութիւն	2	2	1	1	1	1	8	
13. Վայելչագրութիւն	1	1	1	1	1	—	5	
14. Երգեցողութիւն	2	2	2	2	2	2	12	
15. Զեռագործ զեռարւեստ	2	2	2	2	2	2	12	
16. Մարմամարզութիւն	22	26	30	30	32	32	170	
Հնդամենը	22	26	30	30	32	32	170	
Մնացած ժամերը մինչև 36 ժամ յատկացւում են տեղական նշանակութիւն ունեցող գործնական պարապմունքներին, որոնց ընտրութիւնը վերապահում է տեղական դպրոցական վարչութիւններին:	Մարմամարզարան ունեցող դպրոցական իւրաքանչւում 2 ժ., իսկ չունեցողներում՝ օրական 25 ր.							

I. ԿՐՈՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Ա. ԴԱՍԱՐԱՆ. ԿՐՈՆԱԲԱՐՈՅԱԽՈՍՈՒԹԻՒՆ (շաբաթական 2 դաս):

Ալօրֆ. Խաչակնը. — Տէրունական աղօթք. — (Ուսումնական տարւալ սկզբում զրուցատրութեան եղանակով արձարձում են տէրունական աղօթքի մէջ պարունակւած) մտքերը և ապա աւանդում նիւթը):

Նոր ուխտից. Յիսուսի երկրաւոր կեանքի համառօտ ու ամփոփ նկարագրութիւն: 1. Աւետումն. 2. Ծնունդ. 3. Տաճարին ընծայումն. 4. Մկրտութիւն. 5. Ոտնալւայ. 6. Խորհրդաւոր ընթրիք. 7. Խաչելութիւն.. 8. Թաղումն. 9. Յարութիւն. 10. Համբարձումն: Մանկական նեխաբներ. 6—8 հատ.

B. ԴԱՍԱՐԱՆ (շաբաթական 2 դաս):

Հին ուխտից. Նահապեսներ.

ա. Արրանաւ. 1. Ասոււած կանչում է Արրահամին. 2. Արրահամը և Ղովտը բաժանւում են. 3. Արրահամն ազատում է Ղովտին. 4. Ասոււծոյ խոստումն Արրահամին. 5. Իսահակի ծնունդը. 6. Սառայի մահը:

բ. Խարհակ. 7. Խսահակի ամուսնութիւնը և Արրահամի մահը. 8. Եսաւ և Յակոբ. 9. Յակովը խարերայութիւնը.

զ. Յակովը. 10. Յակովը փախուստը. 11. Յակովը կարանի մօտ. 12. Յակովը դարձը Խառանից. 13. Եսաւի և Յակովի հաշտութիւնը

դ. Յովսէփի. 14. Յովսէփի եղբայրները և նրա վաճառումը. 15. Յովսէփը Պետափրէսի տանը (առանց գայթակղութեան պատմութեան).

16. Յովսէփի բարձրանալը. 17. Յովսէփի եղբայրները գալիս են Եգիպտոս. 18. Յովսէփը յատնւում է եղբայրներին. 19. Յակովը Եգիպտոսում. 20. Յակովի մահը:

Նոր ուխտից.

Առակներ. 1. Կոյսերի առակը. 2. Անառակ որդու առակը. 3. Մերմամարի առակը. 4. Քանքարների առակը:

Հրաշըներ. 1. Կանայի հարսանիքը. 2. Երիքովի կոյրի բժշկութիւնը. 3. Խուլ ու համբի բժշկութիւնը. 4. Նայինի պատանին:



Պատարագի երգեր:

1. Տէր ողորմեա. 2. Յիշեա Տէր և ողորմեա. 3. Կեցո Տէր և ողորմեա. 4. Եւ ընդ հոգւոյդ Քում. 5. Աստուծոյ երկրպագեսցուք. 6. Առաջի քո, Տէր. 7. Պոռխումումէ. 8. Ամէն, Հայր սուրբ, Որդիդ սուրբ, Հոգիդ սուրբ. 9. Միայն սուրբ, միայն Տէր... 10. Սուրբ Աստված, սուրբ և հզօր... 11. Փառաւորեալ և օրհնեալ...

Ծանօթ. Պատարագի երգի բովանդակութիւնը՝ ըստ կարեւոյն, բացատրում է կրօնի ուսուցիչը: իսկ եղանակը սովորեցնում է երգեցողութեան ուսուցիչը (նոյնը և յաջորդաբարիներում):

Գ. ԴԱՍՍԱՐԱՆ (շաբաթական 2 դաս).

Նին ուխտից:—Առաջնորդներ.

- ա. Մովսէս 1. Իսրայէլի նեղութիւնները եգիպտոսում. 2. Մովսէսի ծնունդն ու աղատութիւնը 3. Մովսէսի փախուստը. 4. Աստված կանչում է Մովսէսին. 5. Եգիպտոսից դուրս զալը. 6. Կարմիր ծովից անցնելը. 7. Իսրայէլացիք անցնում են անապատով. 8. Մինայի օրէնսդութիւնը. 9. Ոսկէ հորթ. 10. Լրտեսներ. 11. Մովսէսի մահը:

բ. Յեսու 12. Յեսուն նւաճում է Քանանը և նրա մահը: Քատարուներ.

ա. Գէղօն 13 Գէղօնի ընտրութիւնը և մահը:

բ. Սամիսն 14. Սամիսն և նրա մահը:

զ. Հեղի—Սամէլ 15. Հեղի և Սամէլ:

Նոր ուխտից.

- Առաջներ 1. Որոմի առակը. 2. Անմիտ հարստի առակը. 3. Թագուցեալ գանձի և մարդարտի առակները. 4. Մեծ ընթրիքի առակը:

Հրաշըներ. 1. Հինգ հազարի կերակրելը. 2. Տասն բորոտներ 3. Յայրոսի դուստրը:

Կարգ Աստածպատութեան, 1. Եկեղեցու ձեր և բաժանմունքը. 2. Սրբազն անօթներ և զարդեր. 3. Զգեստներ. 4. Գրքեր:

Պատարագի երգեր. 1. Փառք քեզ Տէր Աստված մեր. 2. Եղիցի անուն Տեան օրհնեալ... 3. Բարեխօսութեամբ վերին Քո զօրաց... 4. Արի Աստված հարցն մերոց... 5. Աստված մեր և Տէր երեցաւ... 6. Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ... 7. Ողջ առողջ միմեանց... 8. Խունկ մատուցանեմք... 9. Մի ոք յերեխայից...:

Դ. ԴԱՍՍԱՐԱՆ (շաբաթական 3 դաս).

Նին ուխտից. Թագաւորներ.

ա. Սամող 1. Սաւուզը դառնում է թագաւոր 2. Սաւուզի անհնաղանդութիւնը. 3. Դաւթի ընտրութիւնը.

բ. Սամող եւ Դաւթի. 4. Դաւթի Սաւուզի արքունիքում. 5. Դաւթի և Գողիաթ. 6. Սաւուզն ատում է, իսկ Դաւթիթը սիրում է Յովնաթանին. 7. Դաւթի մեծահոգութիւնը. 8. Սաւուզի մահը.

զ. Դաւթի. 9. Դաւթիթը դառնում է թագաւոր. 10. Դաւթիթը մեղանչում է. 11. Արիսողում. 12. Դաւթի մահը:

դ. Սողոմոն. 13. Սողոմոնը դառնում է թագաւոր. 14. Տաճարի շինութիւնը. 15. Սողոմոնի փառքը և անկումն:

Թագաւորութեալ բաժանումներ:

Յերոբովամ եւ Ռոբովամ. 16. Յերոբովամ և Ռոբովամ 17. Եղիա և սրա մահը. 18. Իսրայէլի և Յուդայի թագաւորութեան կործանումն. 19. Բարելոնի գերութիւնը. 20. Համառօտ հայեացը ցՔրիստոս:

Նոր ուխտից.

Առաջներ. 1. Փարիսեցի և մաքսաւոր. 2. Զար ծառայի առակը. 3. Հարստի և աղքատ Ղազարոսի առակը. 4. Այզու մշակների առակը. 5. Սամարացու տռակը:

Յովհաննէս Մկրտչի աւետումն, ծնունդը, քարոզութիւնը և մահը:

Հքաշըներ. 1. Ղազարոսի յարութիւնը. 2. Անդամալուծի բժշկութիւնը:

Գլուխնութիւն. Հաւատամքն անգիր՝ համառօտ բացատրութեամբ:

Կարգ Աստածպատութեան. Նւիրագետութիւն Հայաստանեաց եկեղեցւոյ և պատարագի նշանակութիւնը:

Պատարագի երգեր. 1. Սուրբ, սուրբ... 2. Յամենայնի... 3. Որդի Աստվածոյ... 4. Հոգի Աստվածոյ... 5. Գոհանամք զՔէն... 6. Լցաք ի բարութեանց... 7. Մարմին Տէրունական... 8. Յայս հարք... 9. Թագաւոր երկնաւոր... 10. Խորհուրդ խորին...

Ե. ԴԱՍՍԱՐԱՆ (շաբաթական 2 դաս).

Նոր-ուխտ. Նոր ուխտն անցնել սիստեմատիկ կերպով:— Գլխաւոր ուշադրութիւնը պիտի դարձնել քրիստոնէական սկզբ-

բունքների վրա: Հետեալ նիւթերից աստղանիշ հատւածները, սրպէս նախորդ տարիներում անցած նիւթեր, շօշափել և լրացնել այն չափով, որչափ որ կարեոր կը լինի նոր նիւթերի հետ կապ պահպաներու և նրանց լուսաբանելու համար:

*1 Աւետումն. *2 Ծնունդ. *3 Տաճարին ընծայւելը. 4. Արմելքի մոգերը և Եղիպառու փախչելը. 5. Տաներկու տարեկան Յիսուս տաճարում. 6. Յովհաննէս Մկրտչի աւետումն. *7. Յովհաննէս Մկրտչի ծնունդը. *8. Յովհաննէս Մկրտչի քարոզութիւնը. *9. Յիսուսի մկրտութիւնը. 10. Առաքեալների մկրտութիւնը. 11. Յիսուս և մանուկներ. 12. Ո՞վ է մեծ երկնից արքայութեան մէջ. *13. Կանայի հարսանիքը. 14. Կափառնայումի հարիւրապեր. *15. Տան բորոտները. *16. Փարիսեցի և մաքսաւոր. *17. Անառակ որդու առակը. *18. Երիքովի կոյրը. 19. Զակքէոս. 20. Խուլ ու համրը. *21. Ողորմած սամարացու առակը. 2. Այրի կողջ լուման. *23. Զար ծառայի առակը. *24. Հինգ հազարի կերակրելը. 25. Քանանացի կինը. 26. Յիսուս քարոզում է Նադաբէթում. 27. Հարուստ երիտասարդը. *28. Անմիտ հարստի առակը. 29. Կորուսեալ ոչխարի և դրամի առակը. *30. Յայրոսի դուստրը և Նայինի պատանին. 31. Պետրոսի խոստովանութիւնը. *32. Յովհաննէսի մահը. *33. Սերմանացանի առակը. *34. Որոմի առակը. *35. Մեծ ընթրիքի առակը. *36. Անդամալուծի բժշշկութիւնը. 37. Յիսուսը սաստում է մրրիկին. 38. Կոյր ծնածի բժշշկութիւնը. *39. Այգու մշակների առակը. *40. Քամնքարների առակը. *41. Մեծատան և պղատ Ղազարոսի առակը. *42. Տան կոյսերի առակը. 43. Վերջին դատաստան. 44. Լեռան քարոզը և ինն երանութիւն. 45. Լւցումն, կերակուր, պահք և շաբաթ. 46. Սամարացու կինը. 47. Մարիամ և Մարթա. *48. Ղազարոսի յարութիւնը. 49. Յիսուսի թշնամիները. 50. Յիսուսի օծումը Բեթանիայում. 51. Յիսուսը մտնում է Երուսաղէմ. 52. Յիսուսը վիճաբանում է թշնամեաց հետ. 53. Յուղայի մատնութիւնը. *54. Ունալայ և խորհրդաւոր ընթրիք. 55. Յիսուսը Գեթսեմանում. 56. Յիսուսը քահանայապետի առաջ. 57. Պետրոսի ուրացութիւնը. 58. Յիսուս Պիղատոսի առաջ. *59. Խաչելութիւն. *60. Թաղումն. 61. Յարութիւն. 62. Համբարձում:

1. Ա. Էջմիածնի ա. Էջ Միածին ի Հօրէ... բ. Տեսեալ վլոյս... գ. Եկայք շինեցուք...
2. Վարդանանց.—Նորահրաշ պսակաւոր... առաջին 2 տները:
3. Կոնդեանց—«Որք չուեալ, գնացեալ լինէին»... 3 տուն:

Գործ առաքելոց

1. Հոգեգալուստ. 2. Անանիա և Սափիրա. 3. Եօթը սարկաւագների ընտրութիւնը և ժողով աղքատաց հոգաբարձութեան.
4. Առաքեալները բարձրագոյն ատեանի առաջ. 5. Եթովպացի ներքինին. 6. Կուռնելիոսի դարձը. 7. Ստեփաննոսի մահը.
8. Սաւուղի դարձը. 9. Պօղոսը Դամասկոսում և Երուսաղէմում.
10. Առաքելական առաջին, երկրորդ և երրորդ ուղեւորութիւնները. 11. Պօղոսի դատար. 12. Պօղոսի Հռովմ գնալը և մահը.

- նարականեներ.
1. Հոփի փոխ և անց—«Անձինք նուիրեալը...» և Հ. Փ. տները:
 2. Յարութեան.—«Այսօր յարեաւ...» 3 տուն:
 3. Ծննդեան.—«Խորհուրդ մեծ և սքանչելի...» 3 տուն:
 4. Լուսաւորչի.—«Այսօր զուարձացեալ...» մի տուն:

II. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Պատմութեան դասաւանդութիւնը կարենոր տեղ է բոնում ժամանակակից տարրական դպրոցի ծրագրի մէջ իր բազմակողմանի կրթիչ նշանակութեամբ: Պատմութեան դասաւանդութեան նպատակն է՝

ա). Բարոյակրթական — արծարծել և կրթել աշակերտների մէջ հասարակական ձգտումներ, ներշնչելով երախտազիտութիւն դէպի նախնիները և պարտաճանաչութիւն դէպի ժամանակիցները և յետնորդները.

և բ). գործնական — ծանօթացնել շրջապատող հասարակական կազմի հետ, տալ անհրաժեշտ գիտելիքներ այդ կազմի մէջ վայելած իրաւունքների և ունեցած պարտականութիւնների մասին և ցոյց տալ ժամանակակից սերնդի աշխատանքի տեղը հանրամարդկային աշխատանքի մէջ:

Այսնպատակներին հասնելու համար պատմութեան դասաւանդութիւնը հիմնում է հայրենասիրութեան վրա, աշխատելով ժամանակին արթնացնել այդ զգացմունքը և տալ նրան առողջ մարդագալական բովանդակութիւն: Երիտասարդ սերունդը պիտի սովորի սիրել իր շրջապատող բնութիւնը և նրա մէջ ապրող մարդկանց, որպէսզի ապագայում իր մէջ բաւականին ուժ գտնի այդ միջավայրի կատարելագործութեան համար անձնւէր աշխատելու:

Այսպիսի նպատակներ դնելով, պատմութեան ուսուցումը նիւթի ընտրութեան մէջ առաջնակարգ տեղ է տալիս հայրենիքի պատմութեանը, սակայն՝ ընդունելով որ Հայոց աշխարհի քաղաքակրթութիւնը զարդացել է ոչ միայն ներքին, սեփական ուժերով, այլ և գլխաւորապէս օտար քաղաքակրթութեանց ազգեցութեան տակ և որ այսուհետեւ էլ նրա առաջնմացութիւնը անխպելի կապւած է լինելու մարդկութեան ընդհանուր առաջադիմութեան հետ, այդ ուսուցումը չէ սահմանափակում միայն հայրենի պատմութեան շրջաններով, այլ նիւթեր է վերցնում նսաւ ընդհանուր պատմութիւնից, այնքան, որբան այս վերջինս ներգործել է և դեռ կարող է ներգործել Հայաստանի քաղաքակրթութեան զարգացման վրա թէ գործնական դիւտերով, թէ հասարակական հասկացողութիւններով և թէ առհասարակ մտաւոր նւաճումներով։ Այսպիսով և ուսուց պատմութիւնը պիտի բռնի իր պատշաճաւոր տեղը պատմութեան ուսուցման մէջ, մանաւանդ վերջին երկու դարերի պատմութիւնը, երբ մեր երկիրն աւելի սերտ յարաբերութիւնների մէջ մտաւ ուսուական պետութեան հետ և հետզհետէ աւելի ու աւելի է ենթարկում ուսուց քաղաքակրթութեան և պետական կազմի ազգեցութեանը։

Դասընթացքը վերջանում է քաղաքացիական ուսմունքով, որտեղ ամփոփւած են կարեոր գործնական տեղեկութիւններ ուսանայի իրաւունքների և պարտականութիւնների մասին, նոյնպէս և տարրական քաղաքատնտեսական և իրաւաբանական հասկացողութիւններ։

Ամբողջ ուսուցանելի նիւթը աւանդում է 4 դասարաններում, սկսած III դասարանից, բայց այնպէս, որ չորսամեայ ծխական դպրոց աւարտողները արդէն մի ամբողջացքած դիտութիւն ստացած հեռանան։ Այդ պատճառով անկարելի է խոյս տալ նիւթի մի մասի կրկնութիւնից V և VI դասարաններում, բայց այս հանգամանքը ունի և իր լաւ կողմերը, որովհետեւ թոյլ է տալիս աւելի բարձակողմանի լուսաբանել պատմական երեսիները և նրանց աւելի խոր պատճառները ցոյց տալ, քանի որ բարձր դասարաններում ուսուցիչը գործ է ունենում աւելի խելահաս և զարգացած աշակերտների հետ։

Առարկաների կենդրոնացման նպատակով, ինչպէս երեսում է աշխարհագրութեան ծրագրից, պատմութեան և աշխարհագրութեան սիւթերը սերտ կապերով շաղկապւում են իրար հետ։

Դասնթացքը սկսում է III դասարանում նախապարասական շրջանով, որ աչքի առաջ ունի ա) զարգացնել պատմական և հասարա-

կական տարրական գաղափարները, գ) արծարծել սէր գէպի հայրենիքի նշանաւոր վայրերը և դ) ազգել մանուկների բարոյական աշխարհի վրա, ոգեստերով նրանց հայրենի հերոսների վսեմ պատկերներով և արթնացնելով նրանց մէջ վեհ ձգութիւններ։

Այս տարրայ նիւթը կալ ունի մի կողմից՝ հերիաթների, միւս կողմից՝ ճշգրիտ պատմութեան հետ և գրգռում է երեխաների մէջ հասարակագիտական հետաքրքրութեան առաջին նշոյլները։

Աշակերտները նախ համառօտ տեղեկութիւններ են ստանում նախապատմական մարդու մասին։ Ոչ մի այլ պատմական նիւթ այնքան հասկանալի չէ այդ հասակի երեխաների համար, որքան նախնական մարդու առաջին դիւտերը։ Դա կազմում է մի իրական միօբինգուած։ Ծանօթութիւնները պիտի լինեն ոչ մանրամասն, ուսուցիչը պիտի օգտւի ժամանակակից մնացորդներից թէ հասարակական կեանքի և թէ նիւթական աշխարհի մէջ։ Աշակերտների գիտեցած ազգագրական տեղեկութիւնները շատ կը նպաստեն, այդ գէպքում։ Այնտեղ, որտեղ անհնարին է ցոյց տալ իսկական հնագիտական իրեր, պէտք է ունենալ մօղելներ կամ գոնչ պատկերներ, աշակերտական զրօնանքներն էլ կարող են առատ բացատրական նիւթ մատակարարել։ Դասընթացքի այս մասը մի մեծ յարմարութիւն է ներկայացնում այն տեսակէտից, որ ուսուցիչը խրախուսելով աշակերտներին երեխակայութեամբ տեղափոխել նախապատմական ժամանակները և հարցեր տալով՝ օրինակ թէ «Բնչպէս պիտի այն ժամանակի պաշտպանուէիք գաղաներից», «Բնչով կը նշանակելիք», «Բնչով կը կերակրելիք», «Եթէ օջախի կրակը հանգչէր, ի՞նչպէս պիտի նորից վառէինք» և այլն, — արձարծում է նրանց հարցանիրութիւնը, զարթեցնում է հնարագիտութիւնը և բազմաթիւ առիթներ է տալիս ինքնուրոյն մտաւոր աշխատանքի համար։ Այդպիսով աշակերտները իրենք հոգեպէս մասնակցած են լինում նախնական մարդու գիւտերին։ Ուսուցիչը պիտի աշակերտների ուշագրութիւնը գարձնի ոչ միայն այն բանի վրա, թէ ի՞նչպէս է մարդ հնարել, օրինակ՝ երկաթէ գործիքը, գտել կը կը, այլ և թէ ի՞նչ նշանակութիւն ունի այդ հնարևածքը կամ գիւտը։ Այստեղ առաջին անգամ վարժում է պատճառներ և հետեւանքներ որոնելու ընդունակութիւնը։

III դասարանում նախապատմական մարդուց դասընթացքը անցնում է հայրենի առասպեկտներին։ Այս առասպեկտները մշակելիս՝ ուսուցիչը ոչ միայն նրանց հոգերտնական և բարոյագիտական տարրերը պիտի վերլուծի, այլ և օգուտ քաղի նրանց մէջ պարունակուող պատմական տեղեկութիւններից։ Նա պիտի նախամինն կերպ աշխատի լուսաբանել և մեկնել պատմական հասկա-

ցողութիւնները: Այստեղ աշակերտները իմանում են թէ ինչ է աղք, ցեղ, տոհմ, գերգաստան, նահապետ, հայրենիք, սահման, զօրք, զէնք, կրօն, վարչութիւն, դատաստան, ստրուկ, գերի, փրկանք, հարկ, ոռճիկ: Միւս կողմից՝ այստեղ նրանք ծանօթառում են նախնական քաղաքակրթական կենաքի այն ներքին և արտաքին յարաբերութիւնների հետ, որոնք ընդհանրապէս իրական գծերով են պատկերացուում այդ հնագոյն աւանդութիւնների մէջ: Առասպելների բանաստեղծական մասը վերջապէս՝ սնունդ է տալիս երեխանների գեղասիրական ճաշակին և սիրելի է դարձնում ոչ միայն հերոսների անձնաւորութիւնները, այլ և այն վայրերը, որտեղ կատարւում են նրանց սիրագործութիւնները: Ամեն մի գաւառում առանձին ուշադրութիւն պէտք է դարձնել առասպեկտների այն մանրամասնութիւնների վրա, որոնք կապւած են այդ տեղերի հետ: Օրինակ՝ Արարատեան գաշտի աշակերտների հետաքրքրութիւնը աւելի է լարւում, երբ նրանց պատմում են Արմենակի և նրա յաջորդների գաղութիւնների մասին. Զաւախը աշակերտներինը, երբ իմանում են Վաղարշակի կարգաւորութիւնները ծայոց լեռներում և Ռիոնի հովտում և այլն: Ծրագիրը յանձնարարում է անցնել նաև զուտ տեղական աւանդութիւնները, կրկին ծննդավայրի զգացմունքը զարգացնելու և մշակելու նպատակով:

IV. Դասարանում արդէն ամփոփ գաղափար է տրւում հայոց անցեալի ամբողջութեան մասին, կանգ առնելով ժամանակագրական կարգով ոչ թէ մանրամասնութիւնների, այլ դարաշրջաններ կազմող գագարնակետերի վրա և համախմբելով երկրորդական գծերը այդ գլխաւոր կենդրոնական երեյթիւնների շուրմական կեանքի հետ և շարունակում է զարգացնել պատմական երկակայութիւնը, միայն թէ իրական գէպքերի նկարագրութեամբ: Քանի որ աշակերտների անձնական հասարակագիտական դիտողութիւնները գեռ շատ սահմանափակ են և ունեցած պատմական համեմատական նիւթը շատ չնշին, այստեղ առանձնապէս շեշտում են պատմական անձնաւորութիւնների գործողութիւնների հոգերանական և բարոյագիտական կողմերը: Երեխանները գեռ ևս մեծ նշանակութիւն են տալիս անձնաւորութեան խաղացած դերին պատմութեան մէջ և դժւարանում են պատմական իրողութիւնների քաղաքակրթական պատմասները ըմբռնել: Բայց այս չէ մի հիւսածք: Առջնի շարքում միշտ պիտի գառնայ կերսագրութիւնների ըլ, իսկ անձնական կեանքի մանձնական կեանքի մանրամասնութիւնները երկրորդական

տեղ բռնեն: Ամեն մի շրջան պիտի մշակւած լինի իրեկ մի ամփոփ պատկեր, բայց այնպէս ու մէկ շրջան միւսի հետ կապւի ներքին կապերով: Թւականներ և յատուկ անուններ պիտի հաղորդւեն որշափ կարելի է քիչ, բայց այդ քիչը աշակերտները պիտի լաւ իւրացնեն: Ուսուցիչը պիտի կարողանայ պատմական մասրամասութիւններից ընտրել այն, ինչ որ թանձրացնում և աւելի ապաւորիչ է զարձնուած իրողութիւնները, և այդպիսով կենդանացնի փոքրիկ ունկնդիրների երեխայութեան մէջ պատմական պատկերները:

Դասընթացքի սկզբում նախ ամփոփում են այն աշխարհագրական պատմական տեղեկութիւնները, որ հաղորդւած էին նախորդ դասարանում, իսկ նոր մանրամասնութիւններ իւրացւում են հետզհետէ, պատմական նիւթի հետ զուգընթացաբար: Աշակերտները պիտի նոյն եղանակով, ինչ եղանակով որ գծագրում են Անդրկովկասի և կից հայկական երկիրների քարտէզը, գծագրեն նուև Հայաստանի պատմական քարտէզը, նշանակելով իրենց յայտնի պատմական վայրերը:

Ինչպէս չըպէտք է ոչ մի պատմական-աշտարհագրական աշնուն տալ, առանց այդ տեղը քարտէզի վրա ցոյց տալու, այնպէս և չըպէտք է առանց բացատրութեան թողնել հայրենիքի պատմութեան հետ կապւած օտարազգի պատմական անունները և դէպէքերը: Ուսուցիչը շարունակ պիտի ծանօթացնի համառօտ, ամփոփ խօսքերով, առանց աւելորդ մանրամասնութիւնների, ընդհանուր պատմութեան այն երեյթների հետ, որ կապւած են հայոց անցեալի և ներկայի հետ: Այդ ծանօթութիւնների պիտի մի տեսակ բացատրութիւններ լինեն, աւանդելիք պատմական նիւթի մէջ պատահող օտար ազգերի, ներուները անունների, ներմուծւող գիւտերի, ներգործող հասարակական շարժումների և այլն: Այսպէս՝ համառօտ տեղեկութիւններ են տրւում թէ ովքեր են եղել Հայաստանի մերձաւոր հարեան ազգերը, յոյները, Ալեքսանդր Մակեդոնացին, սելևկեանները, Հըսումը, ինչպէս է քրիստոնէութիւնը տարածւել Հոռմէական կայսրութեան մէջ, որտեղից են եկել հօնները, ինչպէս է կործանւել Հոռմէացոց տէրութիւնը, ով է Մահմեդը, խաչակիրները, Լութերը, Պետրոս Մեծը, Կատարինէ Մեծը և այլն: Սակայն զգոյշ պէտք է լինել չըլինի թէ այս տեղեկութիւնները ծանրաբեռնեն աշակերտների յիշողութիւնը և շփոթութիւն առաջացնեն նրանց մտքի մէջ: Անհրաժեշտ է որ աշխարհագրութեան ուսուցիչն էլ իր դասերի նիւթի հետ կապակցի ընդհանուր պատմութիւնից երեխանների ստացած ծանօթութիւնները:

Կ և VI դասարաններում պատմական առարկաներին յատկացւած է շաբաթական չորս-չորս ժամ, որոնցից մէկ ժամ ուսուաց. իսկ երեք ժամ հայոց և ընդհանուր պատմութեան համար: Վերջին երկու առարկաների ուսուցիչը միևնույն անձնաւորութիւնը պիտի լինի, որպէսզի կարողանայ երկու դասընթացքներն էլ սերտ կապակցութեամբ անցնել և հարկաւոր դէպքերում շաբաթական երեք ժամերից մէկը աղաս կերպով տալ ընդհանուն պատմութեանը և երկուսը՝ հայոց և ընդհակառակը: Սակայն այս աղասութիւնը նա չըպէտք է ի չար գործ դնի, չափանց շատ ժամ յատկացնելով ընդհանուր պատմութեանը, և չըպէտք է աշքից բաց թողնի որ հայրենագիտութիւնն է կազմում այս շրջանի գպլոցական ծրագրի կենդրոնը:

Այս տարիների հայոց պատմութեան դասընթացքը լրացնում և ամփոփում է նախորդ տարիներում ստացած տեղեկութիւնները և քաղաքակրթական զարգացման մի կապակցւած պատկեր է ներկայացնում: Նախորդ բաժանմունքի մատակարարած նիւթից այստեղ աւանդելիք նիւթը նրանով է տարբերում, որ իր գլխաւոր ուշադրութիւնը դարձնում է քաղաքակրթական-պատմական երեսյթների և ներքին կեանքի հանգամանքների վրա և որ իրողութիւնների պատճառներն և հետեանքները մեկնելիս՝ առանձնապէս շեշտում է կուլտուրական կողմը: Այստեղ գործողը ոչ այնքան անձնաւորութիւնն է, որքան ամրող ժողովուրդը, ուսուցման առարկան է առօրեայ կեանքը, հասարակութիւնը իր զանազան խաւերով, որի վրա շատ անգամ քիչ են ազդել քաղաքական արտաքին փոփոխութիւնները: Այս տեսակէտով Հայոց պատմութիւնը ներկայացնում է մի որոշ բաղաքակրթական յաջորդականութիւն, որ աշակերտներին պատւաստում է հասարակութեան օրգանական, ընական զարգացման զաղափար:

Այս դասընթացքը՝ փաստօրէն ցոյց տալով Հայաստանում իրար յաջորդած սերունդների կուլտուրական կապերը, յատկապէս նպատակ ունի արծարծել և ծաւալել աշակերտների մէջ հասարակական ձգտումներ: Աշակերտները պիտի ներշնչւն այն համոզմունքով, որ իրենք շրջապատից և անցեալից կտրւած, անկախ էակներ չեն, այլ որոշ անքակտելի կապերով կապւած են միւնոյն հայրենիքում ապրած և ապրող ընդհանուրութեան հետ և ունենալով ընական իրաւունքներ, պիտի և գիտակցեն իրենց պարտականութիւնները թէ դէպի ժամանակակից հասարակութիւնը և թէ դէպի յետնորդները:

Հայոց պատմութիւնը անցնելիս՝ ուսուցիչը պիտի միշտ աչքի առաջ ունենայ, որ աշակերտների համար պարզ լինեն այն

պատմական-քաղաքակրթական աստիճանները, որոնցով անցել է հայոց ազգը, և պիտի այդ աստիճանները համեմատի և կապակցիութեաց և ընդհանուր պատմութեան կուլտուրական առաջընթացութեան հետ: Այդ աստիճանները հետեականներն են: —

1. Ծնդկակերոպացի հայերը երեսում են Հայաստանում միամիայն VII գարում Բ. ծ. ա. և խառնում են իրենց հետ տեղացիներին (խաղերին), որոնց աւելի զարգացած քաղաքակրթութիւնից իրենք էլ շատ կողմեր իրացնում են:

2. Տիգրան Մեծը միացնում է պատմական Հայաստան կազմող երկրի բոլոր մասերը և ներշնչում է միութեան գիտակցութիւն, որի արտայայտութիւնը լինում է անընկճելի սէրը դէպի Արշակունիների հարստութիւնը և դէպի տեղական աստւածութիւնները:

3. Քրիստոնէութիւնը ամրացնում է ազգային գիտակցութիւնը, նպաստելով Հայաստանում բնակւող ցեղերի մէջ հայերէն լեզվի տարածւելուն, մտցնելով գրի գործածութիւնը և նոր աշխարհահայեցողութեամբ ոգևորելով բոլորին: Հայերը այնուհետև իրենց զգում են քրիստոնեայ աշխարհի մի մաս: Կրօնական պատերազմները հանդիսանում են իրրե այդ զարգացած գիտակցութեան բուռն արտայայտութիւն:

4. Արաբական արշաւանքը թէկ մի առ ժամանակ շփոթութիւն է ձգում Հայոց երկրում, չի կարողանում այնուամենայնիւ կործանել նախկին տեղական նախարարական կազմակերպութիւնը, և հայոց ազգը՝ արաբական ազգեցութեան ներքոյ Բագրատունիաց թագաւորների ժամանակ հասնում է իր քաղաքակրթական զարգացման գագաթնակէտին:

5. Նախ թուրքական և ապա մանաւոնդ մոնղոլական ցեղերի արշաւանքներն և գաղթականութիւնները հարկադրում են հայ ազգաբնակութեան մի մասին, մանաւանդ թագաւորական և ազնաւական տներին, հեռանալ հայրենի երկրից, սակայն երկրում մնացած հայութեան մէջ չէ ոչնչացնում ազգային գիտակցութիւնը, և քաղաքակրթական ձրվածութեան մէջ:

6. Նոր բաղաքակրթական ձգտումները արթնանում են XVL դ. վերջում և XVLII դ. սկզբում երբոպական քաղաքակրթութեան ազգեցութեան ներքոյ և այնուհետև այլ ևս չեն դաղարում: Այդ ձգտումները արեւելեան հայերին հետզհետէ մօտեցնում են ուռւներին, իսկ արեւմտեան հայերի մէջ առաջ են բերում քաղաքական բարենորոգութիւնը մտցնելու փորձեր:

Ինչպէս յայտնի է, հայոց պատմութեան համար չունենք

ժամանակակից գիտութեան պահանջների համեմատ մշակւած դասագիրք: Խւրաքանչիւր ուսուցիչ այդ պատճառով պիտի աշխատի ծանօթանալ հայագիտութեան մէջ եղած առանձին հետազօտութիւնների և պատմական աղբիւրների հետ, որպէսզի խուսափի աշակերտներին այնպիսի տեղեկութիւններ տալուց, որոնք արդէն մերժած են գիտութեան կողմից: Մի այսպիսի անմիջական ծանօթութիւն աղբիւրների հետ առանձին կենդանութիւն և հրապոյր կըտայ դասաւուի խօսքերին, մանաւանդ եթէ նա կարողանայ պատմագիրներից քաղաքներ բերիլ և երբին ականատեսների բերանով նկարագրել իրողութիւնները: Առհասարակ պատմական աղբիւրների գարոցական պէտքերին յարմարեցրած մի ժողովածու ահազին ծառայութիւն կը կարողանալ մատուցանել հայոց պատմութեան ուսուցման գործին: Ուսուցիչը պիտի օգտական վայրերի նկարներից, պատմական դէպէրի պատկերներից, պատմական իրերից, քարտէզից, երբեմն ինքը պիտի նկարի գրատախտակի վրա ընդհանուր գծերով որևէ զէնքի, զդեստի, շինութեան պատկեր, զօրաբանակի դասաւութիւնը և այլն, առհասարակ՝ պիտի ամեն միջոցի զիմի իր դասաւանդութիւնը աւելի թանձրացնելու, դիտողական դարձնելու համար: Շատ նպատակայարմար է օգտակել նաև պատմական նիւթերի մշակութիւններից գեղարվեստական գրականութեան մէջ, մանաւանդ բանաստեղծութիւններից: Ամեն մի նոր նիւթ պիտի կապակցութեան մէջ զնել անցած նիւթերի հետ, բայց նաև քրքրել զեռ այդ նիւթը, դանելով իրողութեան պատմական և հոգեբանական պատճառները և լուսաբանելով նրա բարոյագիտական կողմը:

Ընդհանուր դասընթացքը անցնելիս միշտ աչքի առաջ պէտք է ունենալ նաև ծննդագյրի և մերձաւոր բնագաւառի անցեալը: Անհրաժեշտ է աւելի մանրամասն տեղեկութիւններ տալ այդ դուստ տեղական պատմութիւնից, օրինակ՝ լուսեցի աշակերտներին պէտք է լաւ ծանօթացնել կիւրիկեան թագաւորութեան և երկանաբազուկների տոհմի գործունէութեան հետ, Շիրակի դաշտի մանուկներին՝ Անիի թագաւորների հետ, Ղարաբաղի մելիքութիւնների պատճութեան մանրամասնութիւնները առանձին ուշադրութիւն պիտի գրաւեն գլխաւորապէս Ղարաբաղի գլորցներում և այլն: Ծննդագյրի և մերձաւոր բնագաւառի ծանօթ ընութիւնը կօգնի աւելի լաւ հասկանալ տեղական պատմական դէպէրը, և դրանց միջոցով աւելի հեշտ կըլինի պատկերացնել և ուրիշ դէպէրը ընդհանրապէս հայոց պատճութիւնից:

Գալով ուսաց պատճութեան դասաւանդութեանը, այստեղ

և առաջնակարգ տեղ պէտք է տալ զուտ քաղաքակրթական առաջադիմական քայլերին: Ներքին կեանքի զանազան կողմերի ուսումնասիրութիւնը պիտի ծանօթացնի աշակերտներին ուսուաց տէրութեան աճման հետ և ընդգծի այն հետեանքները, որ հայոց ազգի համար ուսեցաւ մերձաւոր շփումը ուսուաց քաղաքակրթութեան հետ: Մեր վերջին դարերի պատճութիւնը անհասկանալի կը մնայ առանց այդպիսի ծանօթութեան ուսուական կեանքի զարգացման հետ: Այդ պատճութեան օրինակը՝ միւս կողմից, աւելի կամրապնդի աշակերտների մէջ այն համոզմունքը, որ ճշմարիտ առաջադիմութիւնը անհարին է առանց բոլոր քաղաքակրթ ազգերի փոխագարձ գործակցութեան և որ բոլոր ազգերի ընդհանում է մի համամարդկային կուլտուրա, որը ամեն ազգի պատճութեան մէջ մտցնում է թարմացնող, առաջ մղող ուժեղ հոսանքները: Այս գիտակցութեան գարգացումը պիտի լինի մանաւանդ ընդհանուր պատճութեան ուսուցման յատուկ նպատակը:

Ընդհանուր պատճութեան ուսուցումը կոչւած է հեռու պահելու աշակերտներին նեղ ինքնագոհութիւնից, որ միշտ խոչընդունէ հանդիսացել հասարակութեան քաղաքակրթական առաջադիմութեան: Այս առարկան պիտի ցոյց տայ թէ ինչ հսկայական ջանքերի շնորհիւ է կարելի եղել ձեռք բերել այն տեսական, գործնական և ընկերական գիւտերը, որ հետզհետէ դառել կան, գործնական և դաստիարակութեան սեփականութիւն, և են և դառնում են ընդհանուր մարդկութեան սեփականութիւն, և թէ ինչպէս այդ գիւտերը արդինք են թէ մեծ և թէ փոքր ազգութիւնների երկարատիւ և անընդհատ գործակցութեան: Ընդհանուր պատճութեան դասընթացքը պիտի սովորեցնի երախտագիտնուր պատճութեան դասերին հարերարներին, որ տութեամբ գերարեւել մարդկութեան բոլոր բարերարներին, որ պիտի էլ որ սրանք պատկանելիս լիդարին կամ որ ազգին էլ որ սրանք պատկանելիս լինէին:

Ընդհանուր պատճութեան դասերին պիտի մատակարաբել միայն այն նիւթը, որ լուսաբանում է այդ էվոլյուցիայի գաղամիայն այն նիւթը, որ լուսաբանում է այդ գաղափարից բղխող բարոյական փարը և պատւաստում է այդ գաղափարից բղխող բարոյական սկզբունքներ: Դա իսկապէս մարդկային քաղաքակրթութեան պատճութիւն է: Պէտք է վերցնել միմիայն այնպիսի անձնաւոր րութիւններ, որոնք դարաշըննի կինզրոններ են եղել: Ի նկատի ունենալով ձեռքի գաղափարների կրիչներ են եղել: Ի նկատի ունենալով պատկանելորդ մանրամասնութիւններից: Բացի պատճական-աշխարհաւելորդ մանրամասնութիւններից: Բացի պատճական-աշխարհաւելորդ մական քարտէզներից նա պիտի յաճախ դիմի պատճական նկարների և պատկերների ժողովածուին:

ամբողջ դասաւութիւնը պիտի լինի մի տեսակ լուսարանութիւն ցոյց տրուղ տեսարանների և նկարների:

Յանկալի է, որ դպրոցական գրադարանը ունենայ պատմական մանկական գրւածքների հաւաքածու, որի մէջ գրտնելին մանաւանդ ժողովրդական բանահիւսութեան առաջնակարգ սուեղծագործութիւնները, օրինակ՝ Քաղզէայի առասպելները, Իլլիականը և Ողիսականը, Խօլանգի երգը, Նիրելունգների երգը և այլն:—Քաղաքական դէպքերի և պետական անձնաւորութիւնների վրա պէտք է կանգ առնել շատ համառօտ կերպով, այնքան, որքան անհրաժեշտ է պատմութեան ընթացքի թելը պահպանելու համար:

Պատմութեան ուսուցումը լրանում է բաղակացիական ուսա-
մունքով: Այդ առարկայի մէջ հազորդուող գաղափարները աշակերտ-
ները պիտի մաս-մաս ստացած լինեն դեռ աւելի վաղ, պատ-
մութեան, աշխարհագրութեան և լեզվի դասընթացքների մէջ. դա
միայն ամփոփում և լրացնում է այդ կցկատուր տեղեկութիւննե-
րը: Ցանկալի կը լինէր, որ այդ առարկան էլ գտնեմք պատմու-
թեան ուսուցչի ձեռքին, որպէսի նա կարողանար սերտ կապ պահ-
պանել երկու առնչակից դասընթացքների մէջ: Նիւթն աւելի հետա-
քըրքրական և ըմբռնելի է դասնում աշակերտների համար, երբ
շաղկապւում է իրական գիտողութիւնների հետ: Պէտք է զար-
թեցնել սաների հարցասիրութիւնը, գիտել տալով՝ օրինակ, գիւ-
ղական և քաղաքային ընտրութիւնները, գատափարութիւնը,
կեանքում պատահած իրաւական դէպքերը, տնտեսական երեսութիւննե-
րը: Այդ գիտողութիւնները և ուսուցչի բերած օրինակները
պիտի հնաւորութիւն տան հասկանալու շրջապատող հասարակա-
կան կեանքի կազմակերպութիւնը, նրա մէջ տիրող իրաւական և
տնտեսական տարբական յարաբերութիւնները և այդպիսով
գործնական ցուցմունքներով հեշտացնեն երիտասարդ սերնդի ա-
ռաջին քայլերը հասարակական գործունէութեան ասպարէգում:

Ա. ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ.

Գ. ԴԱՍԱՐԱՆ (Հարաթական 2 դաս):

1. Նախապատմական մարդը:—Հսագոյն տարրական գիւղ-տերը—նախնական գործիքներն ու զէնըերը (քարէ, բրօնզէ և երշկաթէ), կրակ, բնակարան, հագուստ (մանելու և գործելու արհեստներ), ամանեղէն (փայտէ, կաւէ և ապակէ), զարուեռ: Պա-

բապտունքներ (որսորդութիւն, խաչնարածութիւն և եղկըռագործութիւն), առևտուր (հաղորդակցութեան միջոցներ), զասակարգեր (ազատներ, գերիներ և ստրուկներ, քրմեր): Ընտանեկան կեանք: Գիլ:

2. Հայրենիկ առասպելներ եւ վէպեր: — Հայկ ու Բէլ: Արած:
Արա Գեղեցիկ և Շամիրամ: Տիգրան Երևանդեան: Վահագն: Վա-
ղարշակ: Երևանդ Արշակունի: Արտաշէս Աշխարհս կալ: Արտաշէս
Բ: և Արտավազու: — Դաւիթ և Մհեր:

Ծանօթ. Տալ նաև տեղական, գաւառական աւանդութիւններ՝ կապւած զանազան վայրերի և առասպելական անձնաւորութիւնների անունների հետ, որտեղ որ այդպիսի աւանդութիւններ պահպանել են ժողովրդի բերանում:

Դ. ԳԱՍՏՐԱՆ (Հաբաթական 2 դաս)։

Հայաստանի իրական պատմութեան գլխաւոր կէտերը,
«զազաթնակէտերը»:

Տիգրան Մեծ:—Տրդատ և Ս. Խուսաւորիչ:—Երջակ Ի. և Ենք-
սէս Մեծ:—Ս. Սահակ և Ս. Մեսրոպ (տառերի զիւտը):—Կրօնա-
կան պատերազմները (Ղարդանանց և Վահանանց—իրար հիմ մի-
ացրած):—Երաբների արշաւանքը և ոստիկանութիւնը (Նախիջե-
ռանի կոտորածը),—Աշոտ Ա.:—Աշոտ Ողորմած և Անիի շինութիւ-
նը:—Սելջուկների արշաւանքը և Անիի վիճակը:—Հայերի գաղ-
թականութիւնները: Թուրքինեան տէրութեան սկզբնաւորութիւնը
և Լեռն Մեծագործ:—Թաթարների արշաւանքը և Լանկթամուր:—
Շահ: Արտօ:—Դաւիթթ-թէգ (ռուսաց միջամտութիւնը հայոց գործե-
րին):—Ռուսների հաստատելը Կովկասում, հայերի գաղթելը
Պարսկաստանից և Տաճկաստանից Ռուսաց բաժինը:—Ներսէս Աշ-
տարակացի:—Ռուսահայք, տաճկահայք և պարսկահայք:

b. ՊԱՍՏԱՐԱՆ.

1. Հայաստանը հայերի երեալուց առաջ:—Սեպագիր արձանագրութիւններ: Խաղպեր: Ուրարդեցոց թագաւորութեան ուժականագրութիւններ: Խաղպեր: Վանի շինութիւնը: Ասորեստանի ժեղանալն և ընդարձակելը: Վանի շինութիւնը: Ասորեստանի ազգեցութիւնը: Ասորեստանի և Ուրարդեցոց ընդհարութիւնները: Ռահեանութիւնն: Կիմմերների արշա-

2. Հսդկաներոպացոց գաղթականութիւնը; Կրօսօրսուրի արշա-
ւանքը; Ուրարդի և Ասորեստանի տէրութիւնների անկումը; Հա-
յերի երկալը և հաստատելը խալլերի երկրում; Խալլերի խառ-
նւելը հայերի հետ:

3. Պարսից տիրապետութեան հաստատւելը Հայաստանում: Տիգրան և Կիւրոս (ըստ Քսենոփոնտի): Հայերի և Կորդւացիների յարաբերութիւնները, պարսկական ամրոցները Հայաստանում: Հայաստանը—պարսից սատրապութիւն: Պարսկական լեզվի և զրադաշտական կրօնի տարածւելը Հայաստանում: Հայոց գիւղը—ըստ Քսենոփոնտի, առևտուրը—ըստ Հերոդոտի:

4. Պարսից տէրութեան կործանումը Ալեքսանդր Մակեդոնացու ձեռով: Եկեղեցեան տէրութեան հաստատւելը: Հայերի յարաբերութիւնը սելեկեանների հետ:

5. Արտաշեաս և Զարիադրէս: Հայաստանը—երկու թագաւորութիւն:—Տիգրան Մեծը միացնում է այդ թագաւորութիւնները: և զրաւում հարեւան երկիրները: Կոիւ հոռմայեցոց հետ: Փողովըրդի սէրը դէպի ազգային հեթանոսական աստւածները: Արտաշատի դաշնադրութիւնը: Հայերի յարաբերութիւնը հոռմայեցոց հետ:

6. Արտաշեասի սերնդի սպասումը: Հոռմայեցինների փորձերը հարեւան երկիրների հարստութիւններից թագաւոր նստեցնելու Հայաստանում: Հայերի սէրը դէպի Աղջակունեաց տունը: Տրդատ Պարթէ. Տրդատի ճանապարհորդութիւնը Հոռմը («Ոսկէ օր»):

Հոռմայեցոց և պարսից կախները սահմանի համար: Հայաստանը պարսից նահանգ (Խոսրովի սպանութիւնը):

7. Հայոց հեթանոսական կրօնը: Ասուածութիւնները: Հանդերձեալ կեանքի գաղափարը: Ոգիներ: Պաշտամանց տեղեր: Քըրմական դասակարգ:

8. Քրիստոնէութեան տարածւելը Հայաստանում: Ասորի քրիստոնեանների ազգեցութիւնը: Ա. Տրդատ և ս. Լուսաւորիչ քրիստոնէութիւնը՝ պաշտօնական կրօն Հայաստանում: Եկեղեցու կազմակերպութիւնը: Յարաբերութիւնը կեսարիայի եկեղեցու և ընդհանրական եկեղեցու հետ: Կաթողիկոսութիւն: Կաթուղիկոսների յարաբերութիւնը թագաւորի և նախարարների հետ: Եկեղեցին Ներսէս Մեծի օրով: Ինքնազլիսութիւն: Կաթուղիկոսական աթոռանիստը: Եկեղեցական կալւածքները: Քրիստոնէութեան ազգեցութիւնը հայերի վրա:

9. Արշակ Բ. և Պապ. ընդհարումներ կաթողիկոսութեան և նախարարների հետ:

10. Նախարարական կազմակերպութիւնը:—Նախարարների ծագումը: Տանուտէր և սեպուհ: Նախարարների յարաբերութիւնը թագաւորի և ուրիշ նախարարների հետ: Պաշտօններ զօրքի մէջ և պալատում: Յարաբերութիւնը ժողովրդի հետ (քաղաքացիք և գիւղացիք): որսորդութիւն և պատերազմ (զօրքի կազմութիւնը, կուի սովորական եղանակը): Նախարարական ամրոցները:

11. Հայաստանի բաժանելը յոյների և պարսիկների մէջ: Արշակոնիների անկումը: Արտաշէս վերջինը:

12. Գրերի գիւղը (Ս. Սահակ և Ս. Մեսրոպ): Թարգմանիչներ: Ի՞նչ լեզվից էին թարգմանում եկեղեցական գրքերը: Թարգմանիչները և նրանց աշակերտները: Նրանց վերաբերմունքը գէպի հայկական կեանքի զանազան երևոյթները և դէպի թագաւորութեան անկումը մասնաւորապէս:

13. Մարզպանութիւն: Կրօնական պատերազմներ. կրօնական, անտեսական և քաղաքական պատճառները. Աւարայրի ճակատամարտը և նրա անմիջական հետևանքները: Պատերազմների երկրորդ շրջանը. հայրերի օրինակի ազգեցութիւնը որդիների վրա (Վահանանք): Նւարսակի դաշնաղութիւնը: Հայ մարզմաններ: Հայոց եկեղեցու բաժանումը միւս եկեղեցիներից: Հայկական տօնականութիւնը: Հայոց եկեղեցու լիակատար ինքնօրինութիւնը: Յարաբերութիւնը վրաց և աղւանից եկեղեցիների հետ:

14. Արաբների արշաւանքը: Դւինի ոստիկանութիւնը, Հայոց աստանի քաղաքական կազմակերպութիւնը (իշխանաց իշխան, աստանի քաղաքական կազմակերպութիւնը, Աստիկանների վերաբերմութէ, նախարարներ): Ոստիկանների վերաբերմունքը գէպի հայոց եկեղեցին: Մամիկոնների և Բաղրամունիների բըռնած դիրքը դէպի ոստիկանները: Վրաց եկեղեցու բաժանելը հայոց եկեղեցուց:

15. Բագրատուննեաց բարձրանալու պատճառները: Աշոտ Ա. և Սոբրատի ընդհարումները Ատրպատականի ոստիկանների հետ և Սոբրատի ընդհարութիւնները յոյների հետ: Հայաստանը: Աշոտ Երկաթ. յարաբերութիւնները: Աշոտ Ողորմած: Անի քատանը՝ բազմաթիւ թագաւորութիւններ: Աշոտ Ողորմած: Անի քար:

16. Արաբների ազգեցութիւնը հայոց քաղաքակրթութեան վրա: Հայոց ճարտարապետութիւնը: Արաբների ազգեցութիւնը հայոց ճարտարապետութեան, լեզվի, երգեցողութեան հայոց ժողովրդական բանաստեղծութեան, եկեղեցու բարեզարդութեան հայութիւնը վրայ: Առևտուր և առևտուրական ճանապարհներ: Կրականութեան վրա:

Զ. ԴԱՍԱՐԱՆ

1. Եկեղուկների արշաւանքը: Տուղրի-Բէկ և Ալիմասան: Արծրուննեաց և Բագրատուննեաց թագաւորութիւնների անկումը: Արծրուննեաց թագաւորութիւնների, նախարարների և ժողովրդի գաղթելը: Կահայոց թագաւորութիւնների, նախարարների և ժողովրդի գաղթելը:

2. Վանական կեանքի գաղթացումը Հայաստանում: Վանքեր:

վանական միաբանութիւնների կազմակերպութիւնը և ներքին կեանքը: Վանքերի նշանակութիւնը ժաղովրդի համար: Տաթեացիք (Ռանիթոռներ):

3. Վրաստանի ուժեղանալը: Իվանէ Աթարէկ և Զաքարիա սպասալար: Անին վրացոց ձեռքում: Հաղբատ և Սանահին: Զալաւէդինի արշաւանքը և Գառնիի կախը:

4. Թաթարներ: Զարմաղան: Գույգարաց աշխարհի աւերումը: Անին և Կարսը թաթարների ձեռքում: Թաթարներ և Ռուբիններ: Ակալուկների և թաթարների փոխադարձ յարաբերութիւնները: Թաթարական տէրութեան կազմակերպութիւնը:

5. Ռուբիննեան տէրութեան ծագումը: Յարաբերութիւնները խաչակիրների հետ: Անոն Ա. թագաւոր: Զաքէլ և Հեթում Ա. Հեթումի ճանապարհորդութիւնը մեծ խանի մօտ: Ռուբիննեան թագաւորութեան վերջին տարիները: Յարաբերութիւնները Հռոմի հետ: Ներսէս Լամբրոնացի:

6. Լանկթամուր: Կոտորածներ Հայաստանում: Ղարազօյուններ և ազգօյուններ: Քրդական պետութիւն: Նոր պարսկական և օսմաննեան տէրութեանց սկզբնաւորութիւնը: Կաթողիկոսական աթոռի փոխադրութիւնը էջմիածին:

7. Սէֆեան տուն. (օսմանցիների և պարսիկների մաքասումը Հայաստանի համար):—Շահ-Արաս և հայերի գաղթը Պարսկաստան: Էջմիածնի շինարար կաթողիկոսները: Աստւածաշնչի տպագրութիւնը: Կաթոլիկութեան մուտքը Հայաստան:

8. Միիթար Մերաստացի և Միիթարեան միաբանութեան հիմնարկութիւնը: Միիթարեանների գործունէութեան նշանակութիւնը:

9. Ղարաբաղի մելիքները. Նրանց կազմակերպութիւնը և վերաբերմունքը դէպի ժողովուրդը. յարաբերութիւնը պարսիկների հետ: Մելիքների արտաքին կեանքը (ամրոցները, զգեստները, զէնքերը) և փոխադարձ յարաբերութիւնները: Ղարաբաղի մելիքների յարաբերութիւնները Պետրոս Մեծի հետ: Իսրայէլ Օրի: Դաւիթ-Բէկ: Օսմանցիք նւաճում են Ղարաբաղը: Ապատամբութիւն օսմանցոց դէմ և պարսից իշխանութեան վերականգնումը:

10. Երկպառակութիւններ մելիքների մէջ: Շուշին մահմեզականների ձեռքում: Հայերի յարաբերութիւնները կատարինէ Մեծի հետ: Սիմէօն կաթողիկոս. Պատիօմկինի ծրագիրը: Աղամահմատի խանի արշաւանքը: Ռուսների մուտքը Անդրկովկաս և Վրաստանի ու Ղարաբաղի միացումը:

11. Ռուսաց տիրապետութեան տարածւելը Անդրկովկասում: Ռուսների պատերազմները պարսիկների և տաճիկների հետ: Հա-

յերի բանած գիրքը այդ պատերազմների մէջ: Հայերի գաղթելը Պարսկաստանից և Տաճկաստանից: Հայոց եկեղեցու կազմակերպութիւնը ըստ Պօլօժենայի:

12. Պատրիարքները, ամիրանները և արհեստաւորները կ. Պօլումը: Թանգիմաթիւ: Սահմանագրութիւն—կենտրոնական և գաւառական կազմակերպութիւններ: Մասնաւոր կաթողիկոսութիւնները և Երուսաղէմի պատրիարքութիւնը:

13. Ռուս-Տաճկական վերջին պատերազմը: Հայոց ազգի ցոյց տւած աշակցութիւնը: Բերլինի վեհաժողովի վճիռները: Տաճկահայոց դատը:

14. Հայոց ընդհանրական կաթողիկոսները XIX դարում: Կըրթական գործի զարգացումը: Բարեգործական հիմնարկութիւնները: Նորագոյն գրականութեան կարապետները. նորագոյն գրականութեան բնաւորութիւնը:

15. Անդրկովկասի կառավարիչները XIX դարում: Ցիցիանով, Վորոնցով: Մեծ իշխան Միխայիլ Նիկոլայևիչ: Գալիցին: Վերաբերմունքը դէպի հայերը: Ռուսահայերի քաղաքակրթական և առևտրական զարգացումը: Պարսկահայերը:

16. Համառօտ հայեացը հայոց գաղթականութիւնների վրա: Լեհաստանի և Հնդկաստանի հայերը: Նորագոյն գաղթականները:

Բ. ՌՈՒՍԱՅԱՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ.

Ե. ԴԱՍԱՐԱՐԱՆ (Հաբաթական 1 դաս).

1. Ռուսեղից և երր են եկել ուռասական ոլաւոնները, նրանց նիստ ու կացը:

2. Վարեպագների հրաւերը. Ռիւրիկ:

3. Ռուսների մկրտութիւնը. Ա. Վլադիմիր. Սլաւոնական գիր:

4. Ետրուլաւ Խմաստուն. «Ռусская правда».

5. Ռուսաց ներբին կեանքը XI դարի միջում. «Կնեազ», պրուժինա, գիւղացիութիւն, հոգևորականութիւն, և վանականութիւն սկզբնաւորութիւն: Բոհատիրներ:

6. Ի՞նչ է ուղէնայեա սխտեմը: Ուղէլական խռովութիւնները: Մեծ իշխանական գահի փոխագրութիւնը Կիեվց Վլադիմիր Կլեազմայի վրա:

7. Թաթարների արշաւանքը. Բաթու. Ուկէ Օրդու. Ռուսաց իշխանների կախումը Սարայի խաներից:

8. Ալեքսանդր Նեացի. կոիւ շեղական խաչակիրների և

լիվօնական ասպետների հետ. վերաբերմունքը դէպի թաթարները:
9. Խօսն-կալիտա—սուսաց երկրի առաջին հաւաքիչ. Մօնկւայի բարձրանալը:

10. Դիմիտրի Դօնսկօյ և Կուլիկօվայի ճակատամարտը:

11. Խօսն III. գրեթէ բոլոր ուղէների միացումը Մօնկւայի հետ. թաթարական լծի թօթափումը. ամուսնութիւնը Սօֆիա Պալէօլօգի հետ և մերձեցումը Արևմտեան Եւրոպայի հետ. Մօնկւայի մեծ իշխանների բարք ու վարքի փոփոխութիւնը:

12. Ռուսաց ազնւականութեան ծագումը. գիւղացիների և քաղաքացիների գրութիւնը: Վանքեր: Թաթարական լծի աղդեցութիւնը: Կազակներ:

13. Խօսն IV Անոելի. Նրա թագաւորութեան Յ շրջանները: Կազանի, Հաշտարիսանի և Սիրիի միացումը, Օպրիչնինա:

14. Վերջին Ռիւրիկօվիչը. գիւղացիների ճորտացումը և պատրիարքութեան հաստատութիւն: Մինին և Պօժարսկի:

15. Առաջին Ռումանովի ընտրութիւնը. Միխայիլ Ֆեօդորովիչ և պատրիարք Ֆիլարէտ: Լեհացիների վերաբերմունքը դէպի սուսադաւանները: Մալոուսների պատամբութիւնը և Մալոօսիայի միացումը Մօնկւայի հետ: Պատրիարք Նիկոն և «ռասկօլ»:

Զ. ԴԱՍԱՐԱՆ (շաբաթական մի դաս)

1. Պետրոս Մեծ. մանկութիւնը, արտասահմանիան ճանապարհորդութիւնը, Շւեդական պատերազմը (Պօլտաւայի ճակատամարտը): Պարսկական արշաւանքը և Ղարաբաղի մելիքների ու Վրաստանի հետ ունեցած յարաբերութիւնները: Պետրոս Մեծի ներքին վերանորոգութիւնները և նրանց նշանակութիւնը:

2. Կատարինէ II Մեծ. սուսաց պետութեան սահմանների ընդարձակելը. (հարաւային երկիրների նւաճումը և Ղրիմի խանութեան վերացումը. Լեհաստանի բաժանումը): Բարձր դասակարգի և գիւղացիների գրութիւնը այս թագաւորութեան ժամանակ: Պուգաչօվի ապստամբութիւնը: Կոխի Կովկասեան լեռնեցիների դէմ և Կովկասեան Զինորական Գիծ: Հայերի և վրացիների հետ ունեցած յարաբերութիւնները:

3. Վրաստանի գրութիւնը վերջին վրացի թագաւորների ժամանակ: Վրաստանի և Ղարաբաղի միացումը: Ալեքսանդր I և Ազատարար պատերազմը. Ֆինլանդիայի և Լեհաստանի կարգաւորութիւնը: Ռուսաց կառավարիչները Կովկասում:

4. Նիկոլայ I. Դեկաբրիստներ: Պատերազմներ Պարսկաստանի և Տաճկաստանի հետ. Լեհացիների պատամբութիւնը: Նիկո-

լայի ներքին քաղաքականութիւնը: Վօրօնցովի գործունէութիւնը Կովկասում: Ղրիմի պատերազմը և Սևաստոպոլի պաշարումը:

5. Ալեքսանդր II. Պարիզի գաշնազրութիւնը: Շամիլի գերութիւնը և Կովկասեան պատերազմների վախճանը: Ճորտութեան վերացումը: Քաղաքային և զեմստաւյին կանոնագրութիւնները: Դատաստանական վերանորոգութիւնը: Զինորագրութիւնը: Հաղորդակցութեան ճանապարհները (Երկաթուղիները Կովկասում): Ռուսաց փոխարքանները Կովկասում: Պատերազմ Տաճկաստանի հետ և Բերլինի վեհաժողովը:

6. Ալեքսանդր III. Նրա վերաբերմունքը դէպի քաղաքային և զեմստաւյին ինքնավարութիւնները ու օտարազգինները:

7. Նիկոլայ II. Հաագայի միջնորդ դատարանի խնդիրը. պատերազմը Ճապոնի դէմ: Պետական Դումայի հիմնարկութիւնը:

Գ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ե. ԴԱՍԱՐԱՆ

1. Նախապատմական մարդու մասին III-րդ դասարանում տեղեկութիւնների կրկնութիւն, ամփոփում և ընդարձակում:

Եղիպտացիք: Երկիրն ու բնակիչները: Եգիպտոսի քաղական պատմութիւնը (շատ համառօտ). Արձանները: Գիրը: Կրօնն ու սովորութիւնները (հագուստ, զէնք և այլն):

2. Քաղղէէս և Ասորեստան: Երկիրն ու բնակիչները: Բաելոն և Նինոէ: Գեղումներ: Գիր: Հին աւանդութիւնները մարդու ստեղծագործութեան, Ջրհեղեղի և Գելգամէշի մասին: Քաղղէայի Ասորեստանի քաղաքական պատմութիւնը (շատ համառօտ), և Ասորեստանի բարձրագույնը, պարագմունքները, արհեստները և կրօնը: Ճարտարապետութիւնը, պարագմունքները:

3. Մարաստան և Պարսկաստան. Երկիրն ու բնակիչները: Համառօտ քաղաքական պատմութիւնը—Կիւրս, Դարեհ Վըշը: Համառօտ քաղաքական պատմութիւնը: Պարսից տէրութեան կործատապետան և Դարեհ Կողոմանու. Պարսից տէրութեան կործատապետան և Դրագաշտական կրօնը: Կրթութիւնը և սովորութիւնները: Կոււմը: Զինուարական կրօնը:

4. Փինիկեցիք: Երկիրն ու բնակիչները: Գաղթականութիւնները (Կարթագէն). Փինիկեցոց նաւաշինութիւնը, գիւտերը, այբուբենը, առեստուրը: Տիւրոսի և Կարթագէնի անկումը:

5. Ցունաստան: Քաղաքները («պոլիս»). Գաղթականութիւնները: Կրօնը, ազգային տօնախմբութիւնները, պատգամախոսները: Սպարտա և Լիկուրգոս: Աթէնք և Սողոն (յունական սովորը: Սպարտա և Լիկուրգոս):

բութիւնները): Պերիկլէս: Աղեքսանդր Մակեդոնացի: Սելևկեաններ: Անտիոքոս Մեծ: Արշակունիներ:

6. Հոռոմ: Երկիրն ու բնակիչները: Ծերակոյտ և ազգային ժողով: Դասակարգերի կոփւ: Հանսիբալ և Սկիփիոն Աֆրիկացի: Յուլիոս Կեոսը և հոապետներ: Օգոստոս: Ներոն: Ստրկութիւն, գլադիատորները: Զօրքը և Հռոմէական խաղաղութիւնը: Քրիստոնէութեան տարածւելը հռոմէական կայսրութեան մէջ: Հալածանքները: Վաճական կեանքի սկզբնաւորութիւնը: Դիոկղետիանոս և Կոստանդին Մեծ: Քրիստոնէութեան յաղթանակը: (Նիկոյ ժողովը): Կայսրութեան երկու մասի բաժանուելը: Արեմտեան կայսրութեան անկումը:

7. Արշակունիները Պարսկաստանում: Նրանց տէրութեան սահմանները և կազմակերպութիւնը: Կոփւները հռոմայեցոց հետ Հայաստանի և Միջագետքի համար:

Սասաննեանները: Շապուհ Բ: Սասաննեան տէրութեան անկումը: Պարսկական վիպասանութիւնները (Ճահ-Նամէ):

8. Գերմանացիք: Նրանց երկիրը: Սովորութիւնները: Հոնների արշաւանքը և Ատիլա: Գերմանացիք հռոմէական հողի վրա: Քրիստոնէութեան տարածւելը գերմանացոց մէջ: Նոր ազգեր—ոսմանացիք, գերմանացիք և սլաւոններ: Կարլոս Մեծ: Աւատականութիւն. սւատական սովորութիւնները: Պապ և կայսր: Կրթութիւն: Առևտուր: Ճարտարապետութիւն (գոթական):

9. Բիւզանցիններ: Բիւզանդական պալատը: Կայսրութեան կազմակերպութիւնը: Գրադարաններ: Առևտուր: Տիկերական ժողովներ: Ճարտարապետութիւն: Քրիստոնէութեան տարածւելը սլաւոնների մէջ: Բիւզանդացոց յարաբերութիւնները հայերի հետ և ազգեցութիւնը հարևան ազգերի վրա:

10. Արաբներ: Նրանց երկիրն ու սովորութիւնները, կաարէ: Մահմէդ և իսլամութիւն: Արաբական տէրութեան սահմանների ընդարձակելը: Հասան և Հուսէյն: Խալիֆայութիւններ (Բաղդադ և Կորդովա): Արաբների վերաբերմունքը գէպի նւաճւած ազգութիւնները: Արաբական պալատը: Երկրագործութիւնը, արհեստները, առևտուրը: Գիտութիւնները և գեղարվեստը (Ճարտարապետութիւնը): Արաբների քաղաքակրթութեան ազգեցութիւնը ազգերի վրա:

Զ. ԴԱՍՍԱՐԱՆ

1. Թուրք—Սելջուկներ. Բաղդադի խալիֆայութեան անկումը: Տուրքի—Բէկ և Ափասլան: Սելջուկեան սուլթանութիւններ: Երուսաղէմը թուրքերի ձեռքում: Խաչակրաց արշաւանքնե-

րը: Արևելեան և արևմտեան եկեղեցիների բաժանումը: Հայագգիկայսրները Բիւզանդիոնում: Թաթարների արշաւանքը և Կ. Պոլսի անկումը:

2. Վրաստան: Երկիրն ու բնակիչները: Քրիստոնէութեան տարածւելը Վրաստանում: Վրաց եկեղեցու բաժանուելը Հայոց եկեղեցուց: Վրաստանի բարձրանալը Թամար թագուհու օրով: Վրաստանի վիճակը անմիջապէս թաթարների արշաւանքից յետոյ:

3. Անգլիա: Ազատութեանց Մեծ Հրովարտակը: Պարլամենտ: Միապետութեան զարգացումը Ֆրանսիայում:

4. Գիւտերի դար: Կողմացոյց: Պոբուդալացիների ճանապարհորդութիւնները—Ղասկօ—Գամա: Սովանիացիների ճանապարհորդութիւնները—Քրիստափոր Կոլումբը: Ամերիկայի բացման նշանակութիւնը (գաղթավայրեր, նեղուեր, նոր ապրանքներ): Տպագրութեան գիւտը—Գուտենբերգ:—Վառոդ և հրագինները: Նոր ժամանակների գորքը: Ասպետութեան անկումը:

5. Գեղարւեստների եւ գիտութիւնների վերածնութիւնը: Իտալական բաղաբնիրը, նրանց առևտորական կապերը և կառախուական բաղաբնիրը, նրանց առևտորական կապերի տեղափոխուելը իշխարութիւնը: Բիւզանդական գիտնականների առաջնութիւնը (գաղթավայրեր, նեղուեր, նոր ապրանքներ): Տպագրութիւն: Գիւտը—Գուտենբերգ:—Վառոդ և հրագինները: Նոր ժամանակների գորքը: Ասպետութեան անկումը:

6. Կրօնական վերանորոգութիւն: Լութեր և Կալվին: Բողոքականութեան տարածւելը Եւրոպայում: Իգնատիոս Լոյոլա և Կառավարութիւնների մէջ: 1688 թ. յեղափոխութիւնը և „Իրաւունքների Հրովարտակը“: Եւրոպական գաղութները զանազան կաթոլիկական ուշակցիքա: Խնկվիզիքա: Երեսնամեայ պատերազմը: Կաթոլիկական գործունէութիւնը Փոքր-Ասիայում և Հայաստանում:

7. Անգլիականութեան հաստատելը Անգլիայում: Կոփւ թագաւորների և ժողովրդի մէջ: 1688 թ. յեղափոխութիւնը և „Իրաւունքների Հրովարտակը“: Եւրոպական գաղութները զանազան կաթոլիկական ուշակցիքա: Խիւսիսային Ամերիկայի ապստամբութիւնը և միաերկրներում: Հիւսիսային Ամերիկայի ապստամբութիւնը: Վաշինգտոն և Ֆրանկլին: ցեալ նահանգների հիմնարկութիւնը: Վաշինգտոն և Ֆրանկլին: 1789 թ.

8. Միահնձանութիւնը գրանսիայում: Լուգովիկոս XIV. Վերաբանութիւնների և պալատական սովորութիւնները: Ժողովրդի դրուգեսալը և պալատական սովորութիւնները: Արքանութիւն X VIII գարի երկրորդ կէսում: Ֆրանսիական Մեծ Ցեղափոխութիւնը 1789 թ.

9. Նապոլէոն Բօնապարտ. Նրա արշաւանքները. Նապոլէօն կայսր. Նրա արշաւանքը Ռուսաստան և անկումը. Վիհեննայի նը կայսր. Նրա արշաւանքը Ռուսաստան և անկումը. Վիհեննայի գործունէութիւնը: Նապոլէօնի գործունէութեան նշանակութիւնը: Սահմանադրական կառավարութեան հաստատելը Եւրոպայում:

10. Պրուսիա. Ֆրիզիի Մեծ: Պրուսիան սահմանադրական միապետութիւն: Նապոլէօն III: Պարիբարդի և իտալիայի ազ-

տութիւնը: Ֆրանս-պրուսական պատերազմը: Գերմանիայի միութիւնը: Երրորդ հանրապետութիւնը ֆրանսիայում:

11. Տաճկաստան. Սուլէյման Փառահեղ: Տաճկաստանի կառավարութեան ձեզ: Վերաբերմունքը գէպի քրիստոնեաները: Ենիշերիներ: Յունաստանի ապստամբութիւնը և պատութիւնը: Ներքին վերանորոգութիւնների շրջանը Տաճկաստանում: Ենիշերիներ դօրքի վերացումը. Թանգիմաթ: Սլաւոնական ազգերի ապստամբութիւնները և սլաւոնական տէրութիւնների հիմնարկութիւնը:

12. Սորագոյն զիտերը: Շոգեմեքենայ, շոգենաւ, երկաթուղի: Հեռագիր. հեռախօս: Լուցիր: Դալ: Լուսանկարչութիւն: Երկրագործական կատարելագործած մեքենաներ: Կարեմեքենայ: Ելեքտրականութեան գործադրութիւնը առօրեայ կեանքում: Բանկեր: Թղթադրամ: Առևտրական ընկերութիւններ: Քօրսա:

13. Ընդհանուր տեսութիւն քաղաքակիրթ աշխարհի ներկայ կացութեան: Երկրագնդի ազգաբնակութիւնը: Քաղաքակիրթ հին և նոր աշխարհներ: Վայրենի ցեղեր: Ազգաբնակութեան բաժանումը ըստ ցեղերի և ըստ կրօնների: Հանրամարդկային քաղաքակրթութեան տարածւելը: Պատեհեռագրական միութիւն: Սանհիտարական միութիւն: Արդիւնաբերութիւն և առևտուր: Մարդկութեան և ճորտութեան վերացում ամեն տեղ: Սահմանադրական վարչական ձեի յաղթանակը ամեն տեղ: Խաղաղասիրական ձգտումներ:

III ՔԱՂԱՔԱՅԻԱՆ ՈՒՍՄՈՒՆՔ

Զ. ԴԱՍԱՐԱՆ (շաբաթական 1 դաս).

1. Քաղաքացի և քաղաքացու պարտականութիւնները: Հարկատութիւնը, զինւորական ծառայութիւնը և ձայնատութիւնը:

2. Քաքաքացու իրաւունքները: Հաւասարութիւն օրէնքի առաջ, անձնաւորութեան անձեռնմխելիութիւն. խղճի, մամուլի և ժողովների ազատութիւններ. ժողովրդական ինքնավարութիւն:

3. Մուսաստանի պետական կազմակերպութիւնը. գիւղ, քաղաք, զեմստով՝ իր ստորաբաժանումներով, պետութիւն: Օրէնսդրական, կատարողական և դատաստանական իշխանութիւններ ու մարմիններ: (Քաղաքացիական և քրէական դատարաններ):

4. Հայոց եկեղեցու կազմակերպութիւնը: Ծուխ, վիճակ, թեմ, ոռուահայք—համապատասխան ժողովներով և պաշտօնեաներով: Ամենայն Հայոց կաթողիկոս. նրա ընտրութեան եղանակը

և իշխանութիւնը: Մուսաց պետութեան և Հայոց եկեղեցու յարաբերութիւնը:

5. Տարրական ծանօթութիւն մասնաւոր իրաւունքի հետ: Քաղաքացիական կացութիւն, (գրաժանութիւն) անչափահանների հովանաւորութիւն, սեփականութիւն, ժառանգութիւն: (Սովորական պայմանագրերի ձեեր):

6. Տնտեսագիտական տարրական ծանօթութիւններ: Մարդ և նրա պահանջները, հասարակութիւնը և նրա տւած օգուտները: Հում նիւթ, կապիտալ, աշխատանք—անհատական և հաւաքական ընկերակցութեամբ: Փոխանակութիւն և առևտուր: Խնայողութիւն. խնայողական սնդուկ. ապահովագրական և փոխադարձ օգնութեան ընկերութիւններ:

IV. ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Աշխարհագրութեան ուսուցումը ծխական գլուցում ի նկատի ունի ա) ծանօթացնել երեխաններին այն տեղական-ընական պայտմանների հետ, որոնց մէջ ապրում է մարդկութիւնը, և բ) ցոյց տալ թէ ինչպէս են այդ պայմանները ներգործում մարդկութեան տընթեան հոգեկան զարգացման և առհասարակ քաղաքակրթութեան վրա: Այսպիսով՝ աշխարհագրութիւնը հանգիսանում է ընագիտութիւնն ու պատմութիւնն ամփոփող և միացնող մի գիտութիւն, ունի իր ունի իր խորին կրթիչ նշանակութիւնը: Նա տալիս է երիոր ունի իր խորին կրթիչ նշանակութիւնը: Նա տալիս է երիոր առաջարդ սերնդին կեանքի մէջ անհրաժեշտ, բազմաթիւ գործատասարդ սերնդին կեանքութիւններ և զարգացնում է երեխանների յիշողութիւնը նական տեղեկութիւններ և զարգացնում է երեխանների յիշողութիւնը գիտել, կշռագատել և եղանակ գատողութիւնը, սովորեցնելով գիտել, միացնելով իր փակել: Աշխարհագրութեան դասաւանդութիւնը՝ միացնելով իր փակել: Աշխարհագրութեան դասաւանդութիւնը, նպաստում է մէջ ընագիտական և պատմական գիտութիւնները, նպաստում է ամբողջական աշխարհանայեցողութեան մշակմանը աշակերտների ամբողջական պատմական գաղաքացնում է աշակերտների մէջ և վառ նիւթ տալով հայրենի երկրի ուրիշ աշխարհ-մէջ և առատ նիւթ տալով հայրենի երկրի աշխարհ-մէջ ների համեմատութեան համար, հետո է պահում նրանց կեղծ ների համեմատութեան համար, հետո է ողջամիա հայրենասիրութիւն: ազգասիրութիւնից և ներշնչում է ողջամիա հայրենասիրութիւն: Վերջապէս, այդ առարկան զարգացնում է աշակերտների մէջ և վերջապէս հաշական նէնց առաջին գասից, զրօքեղարւեստական հաշական նէնց առաջին գասից, զրօքանքների ժամանակ ծանօթանում են ծննդավայրի գեղեցկութիւնների հետ և այնուհետև էլ միշտ առիթ են ունենում պատկերների վրա գիտելու ուրիշ երկիրների գեղեցկութիւնները: Բայց չպէտք է աշքից ըաց թողնել որ տարրական գլուց

չի հարող տալ աշակերտներին աշխարհագրական նիւթի ամբողջութիւնը, այլ միշտ պիտի ինկատի ունենայ կրթական նպատակներն և պիտի դեկավարուի զուտ մանկավարժական սկզբունքներով։ Այսպէս ուրեմն պէտք է տալ միմիայն այն, իչն որ՝
ա. համապատասխանում է մանկական հասկացողութեանը,
բ. արթնացնում է նրա հարցասիրութիւնը,
գ. հնարաւոր է լաւ անցնել և մշակել դասացուցակի յատկացրած ժամերի ընթացքում և

դ. ունի երեխաների համար գործնական նշանակութիւն։ Այս պատճառով դասընթացքի մէջ առաջին և կարեոր տեղը պիտի ընկի հայրենիքի և հայրենիքին կից երկրների աշխարհագրութիւնը։ Քանի աւելի հեռանում ենք հայրենիքից, այնքան աւելի համառոտ և ընդհանար պիտի լինեն (ի հարկէ, միհնոյն ժամանակ երբէք աչքից բաց չը պէտք է թուղնել նաև երկոյթների համեմատական կուլտուրական նշանակութիւնը) հազորդւող տեղեկութիւնները։ Մանաւանդ պէտք է խոյս տալ աւելորդ անունների կուտակումից, որով միայն ծանրաբեռնում է աշակերտների յիշողութիւնը։ Դասատութեան ժամանակ ուսուցիչը պէտք է աշխատի զարկ տալ դասարանի ինքնուրոյն մտածողութեանը, այնպէս որ աշակերտները իրենք՝ քարտէզին նայելով, կարողանան բնորոշել երկրի մակերեսովի կազմութիւնը, իմանալ երկրի կլիման և այլն։ Դրա համար անհրաժեշտ է որ հէնց սկզբից առանձին ուշադրութիւն դարձնէի քարտէզի ընթերցանութեան վրա։ Այնուհետև ուսուցիչը կը տայ իր կողմից աշակերտներին միմիայն այն ծանօթութիւնները, որ նրանք չեն կարող ստանալ անմիջապէս քարտէզով։ Աշակերտները պիտի կապացեն աշխարհագրական երեսովները և համեմատեն նրանց։ Ուսուցիչը միայն դեկավարում է նրանց ինքնուրոյն աշխատանքը և լրացնում է՝ տալով աշխարհագրական անուններ և կուլտուր-աշխարհագրական տեղեկութիւններ։ Սակայն այս վերջինների նկատմամբ էլ պիտի շատ զգոյշ լինել և բաւականանալ միայն նրանով, ինչ որ բնորոշ է երկրի ազգաբնակութեան կեանքի համար՝ առանց ճնշող մանրամասնութիւնների։ Հայաբնակ վայրերի և առհասարակ հայութեան կեանքի համար նշանաւոր տեղերի մասին աւելի ծանօթութիւններ են տրւում։

Աշխարհագրութեան վերացական գաղափարները ոչ մի արժէք չունեն։ Դասատուն նախ և առաջ հայրենագիտութեան դասերին, զրուանքների միջոցով պիտի ձգտի տալ իր սաներին թանձրացեալ աշխարհագրական հասկացողութիւններ և յետոյ էլ նրանց հետ կատարել հեռաւոր էքսկուրսիաներ։ Այսուղ, որտեղ

պակասում է անմիջական դիտողութիւնը, անհրաժեշտ է դիմել մօդէլներին, ոելիէ ֆնիրին, պատկերներին, քարտէզներին, գլոբուսին և տելլուրին։ ամեն ոի կարգաւորւած դպրոց պիտի ձեռք բերի իր յատուկ՝ աշխարհագրական օժանդակ պիտոյքների հաւաքածու և մի փոքրիկ գրադարան աշխարհագրական բովանդակութիւն ունեցող գրքերից։ Աշակերտները ինքնուրոյն ընթերցանութեամբ պիտի լրացնեն այն թերի տեղեկութիւնները, որ ստանում են դասարանում ըստ դասացուցակի նշանակուած սուղ ժամանակամիջոցում։ Այս գրքերի մէջ ճանապարհորդութիւնները պիտի կարեոր տեղ բռնեն։ Առհասարակ ցանկալի է, որ ուսուցիչը միշտ ցոյց տայ, թէ ինչ դժւարութիւններով մարդկութիւնը ձեռք է բերել իր այժմեան ծանօթութիւնը երկրագնդի հետ, մանաւանդոր երեխաները մեծ յափշտակութեամբ են լսում ճանապարհորդութիւնների արկածները։ մանուկ միշտ ծարաւ է հերոսութեան։

Շատուրը մեծ նշանակութիւն են տալիս քարտէզի գծագրութեանը։ Ի նկատի ունենալով, որ ծխական դպրոցը առհասարակ շատ ոիչ ժամեր կարող է յատկացնել աշխարհագրութեան պէս մի կարեոր առարկայի դասաւանդութեանը, ցանկալի է, որ այդ ժամերը որչափ կարելի է արդիւնաւէտ գործադրւեն աշակերտների համար։ Ծննդավայրի և հայրենիքի քարտէզի նկարչութիւնների համար ըստ պատկանականալ գլոբոցական այս աստիճանում, այն նով պիտի ըաւականանալ գլոբոցական այս աստիճանում, էլ ըլպահանջել ճիշտ գծագրութիւն ըստ աշխարհագրական ցանցի, այլ միայն ըստ մի քանի պայմանական բնորոշ գծերի։ Այսպէս, այլ միայն ըստ կարելի է աչքի առաջ ունենալ Մահայաստանի քարտէզի վրա կարելի է աշխարհագրութեան պիտի համար, որովհետև պէս մեր հայրենիքի աշխարհագրութեան համար, որովհետև մեր մօտ ամեն մի աւագան՝ լինեներով բաժանւած լինելով համեմատական գիծը, որի վրա գտնուում է Ուրմիոյ և Վանա լճերի հարաւային ափը, Եփրատի ծունկը, Ծովք լիճը և Կեսարիան։ Սակայն ուսուցիչը չըլպէտք է չափազանց շատ ժամանակ կորցնի, պահանջելով խիստ ճշտութիւն այս տեսակ քարտէզներից։

Ծրագրի մէջ աշխարհագրական նիւթը դասաւորւած է ըստ աւագանների։ Այս դասաւորութիւնը շատ բնական է։ առաւելաւագանների աշխարհագրութեան համար, որովհետև պէս մեր հայրենիքի աշխարհագրութեան համար պիտի կապացեն աւագաններից, մօտաւորապէս մի ամբողջութիւն է ներկարական աւագաններից, յացնում իր առանձնայատուկ կլիմայով, ըուսականութեամբ, յացնում իր առանձնայատուկ կլիմայով և այլն։ Համաձայն գիպարնակութեան պարապմունքներով և այլն։ Համաձայն գիտութեան նոր պահանջներին ջրային համեմատարար առաջնակարգ նշանակութիւն է տրւած ծրագրի մէջ։ Երկիրները խմբւած են ովկիանոսների և ծովերի շուրջը։ IV դասարանում, որտեղ ընդհանուր տեղեկութիւններ են տրւում աշխարհամասերի

մասին, գերակշռող է նիւթի դասաւորութիւնը ըստ աշխարհամասերի, բայց V և VI դասարաններում, որտեղ աշակերտները ծանութանում են առանձին տէրութիւնների հետ, ծրագիրը հետևում է դասաւորութեանը ըստ ովկիանոսների: Երբեմն այս սկզբունքից չըշեղելու համար ստիպւած ենք լինում վերադառնալ միենոյն նիւթին, օր. Ֆրանսիայի մասին խօսել, թէ Միջերկրական ծովի շուրջը գտնուղ երկիրների շարքում, և թէ վերջը՝ խօսելով Ատլանտիկան ովկիանոսի մասին, (Կանադայի մասին՝ թէ Ատլանտիկան և թէ Խաղաղ ովկիանոսների մասին խօսելիս), բայց երկրորդ անգամ միայն ուշադրութիւն ենք դարձնում այն օգուտների վրա, որ ովկիանոսը բնըրում է այդ երկրին (առեւտրի զարգացում, քաղաքների մեծանալը և այլն) և ամփոփում ու լրացնում ենք առաջ հաղորդած տեղեկութիւնները: Այս սիստեմը բնական առիթներ տալով հին նիւթը թէ նոր տեսակէտից լուսաբանելու և թէ նոր նիւթի հետ կապակցելու համար, նպաստում է աշխարհագրական երեւոյթների աւելի բազմակողմանի ուսումնասիրութեանը:

Մի ուրիշ հանգամանք ևս դրդում է ընդունել ծրագրի առաջարկած դասաւորութիւնը: Այս դասաւորութիւնը հնարաւորութիւն է տալիս զավարեցացանց տանելու պատմութեան և աշխարհագրութեան ուսուցումը և ստեղծել առարկաների կենտրոնացում: որ այսպիսի մեծ հշանակութիւն ունի ծխական դրաբոցների համար: Աշխարհագրութեան դասատուն պիտի աչքի առաջ ունենայ պատմութեան ծրագրի պահանջները և շաղկապի իր աւանդածը պատմութեան դասերին աւանդածի հետ և, ընդհակառակը՝ պատմութեան ուսուցիչը պիտի նոյնն անի իր դասերին: Աշխարհագրական նոր անունների հետ հալորդում են և պատմական անունները, մանաւանդ հայրենագրութեան մէջ և առհասարակ հայոց պատմութեան հետ մերձաւոր առնչութիւն ունեցող վայրերի ուսումնակարութեան ժամանակ:

Աշխարհագրութեան ուսուցումը սկսւում է III դասարանից:
Այս աստիճանին զասատութիւնը հիմնւում է գլխաւորապէս, իսկ
սկզբում նաև բացառապէս անձնական, անմիջական դիտողու-
թիւնների վրա, որ աշակերտները ձեռք են բերում զրուանքների ժա-
մանակ: Ծննդավայրը իր մերձաւոր շրջակայրով պիտի ենթարկվի
ամենալուրջ դիտողութեան: Հայրենագիտառութեան այս շրջանը
բաժնւած է երկու մասի՝ ծննդավայր և մերձաւոր օնականա:

Ծննդավայրի աշխարհագրական երևոյթները անմիջապես գիտելով, այսկերպանեռու —

ա) ուսումնասիրում են նրա մակերեւոյթի կազմութիւնը,
Հրագրական պայմանները, կլիման, գետնի յատկութեանները,

բուսական և կենդանական աշխարհը, մարդկային բնակատեղիները, պարապմունքները և արհեստները, հաղորդակցութեան ճանապարհները, շարունակ աշխատելով ցոյց տալ երևոյթների մէջ եղած պատճառական կապերը.

բ) Աշակերտաները դիտում են ծննդվայրի երկինքը, արևի,
լուսնի և աստղերի տեսանելի շարժումներն և փոփոխութիւննե-
րը, նաև մքնոլորտային երևոյթները: Այս դիտողութիւններից մի
քանիսի համար ուսուցիչը ստիպւած կը լինի երբեմն երեխանե-
րին հաւաքել և արևի մայր մանելուց յետոյ, բայց մեծ մասամբ
կարելի է հարցեր տալ և պատւիրել որ տանը իրենք դիտեն և
իրենց դիտողութիւնները միւս օր յայտնեն ուսուցին:

գ) Ծննդավայրի ուսումնամիջութիւնը մանաւանդ լաւ սիցոց
է աշխարհագրական հասկացողութիւնները պարզաբանելու համար։
Արդէն այս դասարանում աշակերտները ծանօթանում են թէ ինչ
են աշխարհի կողմերը, հարթութիւն, սարահարթ, ստորահարթ,
լեռ, գագաթ, լանջ, ստորոտ, հովիտ, կիրճ, գետ, ակունք, գետա-
բերան, տաշտ, ափ, վտակ, լիճ, ծով, ծոց, նաւահանգիստ, բարե-
խառնութիւն, կլիմա, երկրագործութիւն, հովտութիւն, թափառա-
կան և նստակեաց կեանք, արհեստանոց, գործարան, արդիւ-
նաբերութիւն և արդիւնագործութիւն, ներմուծող և արտահանող
առևտուր, իշխանութիւն—հոգեսր և աշխարհական, կրթական
հաստատութիւններ, գիւղ և քաղաք, փողոց, հրապարակ, շուկայ և
այլն։ Այս դասարանի նպատակը չէ սակայն տալ Փիզիքական
մաթեմաթիմական աշխարհագրութեան սիստեմատիկ դասընթաց։

Դ) Այս գասարանից արդէն աշակերտաները պրատի համըզ-
հետէ սովորեն քարտէզ կարդալ. սիստեմատիկ քարժութիւններով
ուսուցիչը նախապատրաստում է նրանց որ քարտէզի պայմանա-
կան նշանների հետ նրանց մտքում կապւեն իրական, ոչալ մտա-
կան նշանների հետ նրանց մտքում կապւեն իրական, ոչալ մտա-
պատկերները: Այս վարժութիւնների ժամանակ աշակերտաները գը-
ծագրում են սենեակի, բակի, փողոցի, քաղաքում՝ թաղի, իսկ
գիւղում՝ գիւղի յատագագիծը, գիտի և ձորի ուղղութիւնը, լեռան
լանջերը, ամեն մի զբօսանքին դիտած վայրերի, ապա և ամբողջ
շրջակայքի քարտէզը ընդհանուր գծերով: Լաւ է և շատ նպատա-
կայարմար պատրաստել ծննդավայրի ուղիեցիքը մասմաս, յետոյ
ամբողջովին, աւագից կամ կաւից, և ապա անցնել քարտէզին:

գեազուրը, կօռին, Փամբակը և այլն: Պէտք է կանգ առնել մահերկոյթի կաղմութեան, կիմայի, ջրագրական և լեռնազրական պայմանների, բերքի, արդիւնսպութեան, բնակիչների ազգութեան և կրօնի, քաղաքների և գլխաւոր գիւղերի, ճանապարհների վրա և ցոյց տալ, թէ բացի եղած պարագմունքներից, այլ ևս ինչով կարելի է պարագել այդ գաւառում:

Աշակերտները պիտի կարողանան արտանկարել բնագաւառի քարտէզը և հասկանալ դրա բոլոր նշանները: Եթէ այդանել պատահում են այնպիսի աշխարհագրական հասկացողութիւններ (օրինակ՝ ծով, նաւահանգիստ, հրաբուխ, հովիտ, ձիւնապատ զագաթ, կիրճ), որ երեխանները չեն կարողացել իւրացնել ծննդավայրի դիտողութիւնների հիման վրա, անհրաժեշտ է, որ այդ տեսակ հասկացողութիւնները թանձրացնելու համար ուսուցիչը դիմի օժանդակ պարագաներին՝ մօդէներին, ոելէիքներին, նկարներին, տիպար պատկերներին և այլն:

Ցանկալի է, որ գասընթացքը վերջանայ Անդրկովկասի և մերձաւոր երկիրների քարտէզի հետ ընդհանուր ծանօթութեամբ:

IV գասարանում արդէն լրացւում են և ամփոփուում են գլխաւոր տեղեկութիւնները Փիղիքական և մաթեմաթիքական աշխարհագրութիւնից: Բայց այս տեղեկութիւնները հազորդուում են ոչ թէ յաջորդական, սիստեմատիկ դասընթացքի ձևով, այլ բուն աշխարհագրական նիւթի (Անդրկովկասը մերձաւոր երկիրներով և աշխարհիս բոլոր մասերը) հետ զուգընթացաբար: Այսպէս օրինակ, հրաբուղիսի, նրա մասերի և կազմութեան վրա մանրամասն խօսւում է Արագածի կամ Մասիսի առիթով, ծովային հոսանքների, տեղատառութեան և մակընթացութեան ժամին—Առլանտեան կամ Խաղաղ ովկիանոսի առիթով:

Հայրենագիտութեան (լայն իմաստով)՝ այս բաժանմունքի բուն աշխարհագրական նիւթին դիմելուց առաջ անհրաժեշտ է նախ տալ աշակերտներին ամփոփ գաղափար երկրագնդի, կլիմայական գօտիների, աշխարհամասերի և ովկիանոսների մասին, որպէս զի նրանց գիտակցութեան մէջ պարզ լինի իրենց հայրենիքի տեղը երկրագնդի վրա: (Ծանօթութիւն Գլոբուսի հետ):

Հայրենիքի աշխարհագրութեան այս բաժինը անցնելիս էլ առաջ առաջ պէտք է ունենալ գլխաւոր մասերի մակերեսոյթի կազմութիւնը, կլիմայական պայմանները, բնական հարստութիւնները, գլխաւոր պարագմունքները, ճանապարհները, բնակիչների ազգութիւնն ու կրօնը, բնակութեան գլխաւոր կենտրոնները և վարչական բաժանումը: Ժամանակակից անունների հետ, ինչպես վերև ասած է, միաժամանակ պէտք է տալ և հայկական պատմական

անունները: Դասընթացքը սկսում է բնագաւառին մերձաւոր վայրերից:

V և VI գասարաններում դասընթացքը կրում է աւելի ուստեմատիկ բնաւորութիւն և ընդգծում է գլխաւորապէս աշխարհագրական երեսյթների մէջ եղած պատճառական կապակցութիւնը (ծովի մերձաւորութեան ազգեցութիւնը կլիմայի, բուսականութեան պարագմունքների վրա, լեռնաշղթաների ուղղութեամ նշանակութիւնը, պատմական կեանքի թողած հետքերը, հարևանների ազշեցութիւնը ևայլն): Զուգընթացաբար հաղորդառում են ամեն յարմար առթիւն ծանօթութիւններ կրօնի, պետական կազմութեան մասին, և առնամարակ կուլտուր—աշխարհագրական բնորոշ տեղեկութիւններ, բայց ոչ ճնշիչ մանրամասնութիւններով: Անցած նիւթը վերացշակում է վերջը, ըստ ովկիանոսների անցնելուց յետոյ, նաև ըստ աշխարհամասերի, իբրև անցած նիւթի նոր ձևով կը կնութիւն: Աշակերտներին մեծ բաւարարանութիւն են պատճառում երեակայական ճանապարհորդութիւնները մէկ տեղից միւս տեղ. այս գէպըում չըպէտք է բաւարարանանալ լոկ աշխարհագրական անունների շարանիւսութեամբ, այլ պէտք է աշխատել, որ պատմողը նկարագրի և ճանապարհին պատահնող վայրերը: Այսպիսի վարժութիւնները պատեհ ասիթեներ են ներկայացնելու օգուտ քաղելու առանձնակի, անհատական ընթերցանութեամբ ձեռք բերած տեղեկութիւններից: Այս եղանակով ուսանող սերնդի մէջ վառ կը պահի հարցասիրութիւնը, որ այնքան անհրաժեշտ է, որպէսզի զարոցի չորս պատերի միջից որ այնքան անհրաժեշտ է, որպէսզի զարոցի ընթացքները կը պատահանին ինքնաշխատութեամբ լրացնեն այն սահմանափակ աշխարհագրական գիտելիքները, որ կարող է նրանց տալ տարրական գորոցը 4 տարւայ ընթացքում, շաբաթական սակաւաթիւ ժամերով:

Ծ Բ Ա Գ Ի Ք

գ. ԴԱՍԱՐԱՆ (շաբաթական 2 դաս).

Հայրենագիտութիւն. ա.) ճննդավայր և բ.) մերձաւոր բնագաւառ: (Մանրամասնութիւնները տես բացարութեան մէջ):

դ. ԴԱՍԱՐԱՆ (շաբաթական 2 դաս)

Ա. Գլխաւոր տեղեկութիւններ մաթեմատիքական և ֆիզիքական աշխարհագրութիւնից:

Երկրագունդ. առանցք և բևեռներ. երկրի շարժւելը առանցքի և արեի շուրջը և այս շարժումներից առաջ եկող երեսյթները երկրիս երեսին:

Գլոբուս. հասարակած. արեալարձային գծեր, բևեռային-շրջաններ, միջօրէականներ: Կլիմայական գոտիներ: Տեղի երկայնութիւնը: Կիսագնդեր:

Զրի և ցամաքի բաշխումը երկրագնդի վրա:

Մայրցամաք, կզզի, թերակղզի, պարանոց: Աշխարհի մասերը և նրանց համեմատական մեծութիւնը:

Հարթութիւններ—ստորահարթ, սարահարթ: Լեռնաշղթայ, լեռնաշխարհ, լեռնահանգոյց, հրաբուղի:

Ծովի յատակի կաղմութիւնը—ծանծաղուաներ, ծովաժայներ: Ծովային հոսանքներ:

Օդ. բարեխառնութեան հորիզոնական և ուղղահայեաց բաշխումը. օդի շարժումներ—հողմ: Քամիների և ծովային հոսանքների նշանակութիւնը:

Զուրը ցամաքի վրա. գետ և վտակ. գետի աւաղան. ջրաբաշխական գծեր: Յաւիտենական սառոյցի աշխարհ, ձիւնասահման, սառցարան, սառցաղչատ:

Կլիմա. կլիմայի կախումը աշխարհագրական լայնութիւնից, մակերեսյթի կաղմութիւնից և բարձրութիւնից, տիրող քամիներից ու ծովային հոսանքներից:

Բոյսերի և կենդանիների տարածւելը ըստ աշխարհագրական լայնութեան և բարձրութեան:

Մարդ. մարդկային ցեղերի բաժանումը. (աւելի մանրամասն հնդկակրոպական ցեղի ճիւղերի մասին):

Բ. Անդրկովկաս եւ սահմանակից երկիրներ. (համառօտ աշխարհագրական տեսութիւն, գլխաւորապէս ֆիզիքական կաղմութեան տեսակէտից):

1. Անգրկովկաս:—Մեծ և Փոքր կովկասեան և Արարատեան շղթաներ: Գլխաւոր աւազաններ: Մերձաւոր ծովեր:

Կուր, Արաքս և Ռիօն գետերի հովիտները:

Փոքր կովկաս. նրա բարձրաւանդակները, անցքերը և կիրճերը, հարաւային և հիւսիսային լանջերը: Արագած: Սևանայ լիճ:

Արսրատեան շղթայ. նրա մասերի առանձին անունները, հիւսիսային և հարաւային լանջերը. Մասիսներ—Մեծ և Փոքր:

Մեծ կովկասի լեռնաշղթայ. նրա հարաւային և հիւսիսային լանջերը, կիրճերը, անցքերը: Կազբէկ և Էլրըուս:

2. Առևսասստան:—Մահմանները. մերձաւոր ծովերը, գըլխաւոր լեռները, գետերը: Բաժանումը ըստ բուսականութեան—

առևնդրա, անտառների, երկրագործական և ,ստեղների՝ գօտիներ: Մայրաքաղաքները և գլխաւոր արդիւնաբերական և առևտրական կենտրոնները:

3. Առևկան Տաճկատան Տօրոսի, Արեւելեան Տօրոսի, Արեւելեան Տօրոսի և Զագրոշի շղթաներ:

Կարնոյ և Ալաշկերտի բարձրաւանդակներ: Արածանի, Եփատակի և Վանայ լճի աւազաններ: Տիգրիսի վերնագաւառ: Կիլիկիա և Զէյթուն: (Անատոլիական բարձրաւանդակ, Միջագետք, Պողէստինե, Արարիա):

4. Պարսկաստան:—Ղարագաղ, Արաքսի աջակողմեան վըտակների և Ուրմիոյ լճի աւազանները: (Իրանի բարձրաւանդակ: Հարաւային Պարսկաստան):

Գ. Համառօտ աշխարհագրական տեսութիւն աշխարհի բոլոր մասերի: Մակերեսյթի կազմութիւնը, գլխաւոր բարձրութիւններն ու հարթութիւնները, ծովերը, ծոցերը, նեղուցները, թերակղզիները, կզզիները, պարանոցները: Կլիման: Բուսականութիւնը և առանձնայատուկ կենդանիները: Ազգաբնակութիւնը: Քաղաքական բաժանումը:

Ծանօթութիւն: Աւելի մանրամասն անցնել յաւիտենական սառուցի (բենուային) և յաւիտենական տաքութեան (անդրագարձային) աշխարհները և համեմատաբար աւելի շատ տեղեկութիւններ տալ հնդկաստանի, Չինաստանի, Ճապոնի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Անգլիայի և Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգների աշխարհագրութեան մասին:

Ե. ԴԱՍԱՐԱԿԱՆ (Հաբաթական 2 դաս)

Սիստեմատիկ դասընթացք

Ուսուց կայսրութիւն

Տարածութիւնը, սահմանները և նրանց առևտրական ու պատերազմական նշանակութիւնը:—Կայսրութեան մասերը: Եւրոպական և Ասիական Ռուսաստան: Կովկաս:

ա. Անդրկովկաս:

Հնդհանուր տեսութիւն:—Երկրի տարածութիւնը, ցտմաքային և ծովային սահմանները: Մակերեսյթի կազմութիւնը: Լճերն ու գետերը: Սև և Կասպից ծովերը: Ազգաբնակութիւնը:

Մասնաւոր տեսութիւն:—Մեծ ու Փոքր կովկաս: Արարատեան շըթայ. (Այս շղթաների կազմութիւնը-ձևական և երկրա-

բանական, աշխարհագրական նշանակութիւնը, մասերը, գագաթները, լանջերի բնաւորութիւնը, մասնաւոր հովիտներն և սարսահարթերը, անցքերն ու կիրճերը, հանքային հարստութիւնները. բուսական և կենդանական աշխարհը): —Առանձին գետերի աւազները իրենց մասերով: 1) Կասպից ծովի աւազանները —Կուրի և Արաքսի աւազանները: (Այս աւազանների աշխարհագրական նկարագրութիւնը, մասերը, կողմնակի հովիտներն ու փոքր աւազները, բնական հարստութիւնները. Բնակիչների պարագմունքը. ճանապարհները (երկաթուղներն և գլխաւոր խճուղիները): Վարչական բաժանումը: Գլխաւոր վարչական և առետրական կենտրոնները: Նշանաւոր պատմական վայրեր:

Բ. Եւրոպական եւ Ասիական Ռուսաստան:

Մակերեսոյթի կազմութիւնը, զիխաւոր լեռները, ըարձութիւնները և ցածրութիւնները: Լճերն ու գետերը: Կլիման: Բուսականութիւնը և հանքային հարստութիւնները: Գլխաւոր ջրային և երկաթուղային ճանապարհները (Մեծ Սիբիրական գիծ, Վլագիկավկազեան գիծ): Ազգաբնակութիւնը: Քաղաքական կազմակերպութիւնը. Արդիւնաբերական և արդիւնագործական շրջանները: Արտահանութիւնն և ներմուծումը (մանաւանդ Անդրկովկասի վերաբերմամբ): Նշանաւոր քաղաքները:

2. Պարսկաստան:

Սահմանները. տարածութիւնը, ազգաբնակութիւնը. քաղաքական կազմակերպութիւնը և բաժանումը:

ա. Հիւսիս-արևեմտեան Պարսկաստան (գրեթէ նոյնպիսի մանրածանութիւններով և սիստեմով, որպէս Անդրկովկաս): Երասի աշակողմեան վտակների աւազանը: Աւրմիոյ աւազանը: Դարպադադ:

բ. Իրան և Հարաւային Պարսկաստան: — Ժողովրդի տնտեսական և քաղաքակրթական վիճակը: Գլխաւոր ճանապարհները: Նշանաւոր քաղաքները:

3. Տամկաստան:

Սահմանները. տարածութիւնը. ազգաբնակութիւնը, քաղաքական կազմակերպութիւնը և բաժանումը:

Հայկական լեռնաշխարհ: — (գրեթէ նոյնպիսի մանրամասնութիւններով և սիստեմով, որպէս և Անդրկովկասը): Գլխաւոր լեռները և նրանց մասերը. Արածանիի, Վանայ լճի, Եփրատի և Տիգրիսի աւազանները: Դերսիմ, Սասուն: — Զէյթուն:

Միջագետք և Արաքս:

4. Միջերկրական ծովի ըուրջը գտնող երկիրները:

Միջերկրական ծովի տարածութիւնը և խորութիւնը: Նրա յատակի կազմութիւնը, մասերը, բուսական և կենդանական աշխարհը, ազգեցութիւնը կլիմայի վրա: Միջերկրական ծովի նշանակութիւնը:

Տաճկաստան (Պաղեստինէ, Կիլիկիա, Փոքր Ասիա, Եւրոպական Տաճկաստան):

Բալկանիան թերակղզու ուրիշ պետութիւնները: — Զերնօգորիա, Սերբիա, Բուլղարիա, Շումանիա, Յունաստան:

Իտալիա:

Ֆրանսիա — (առաւելապէս հարաւային):

Սպանիա:

Մարոկո, Ալժիր, Տունիս, Եգիպտոս:

Զ. ԴԱՍԱՐԱՐԾՈՒՅՆ (Հաբաթական 2 դաս):

1. Արևանտեան ովկիանոսի ըուրջը գտնուող երկիրները:

Աւլանտեան ովկիանոսի տարածութիւնը և մասերը, խորութիւնը և յատակի կազմութիւնը: Մակընթացութիւնը և տեղատութիւնը. հոսանքները: Բուսական և կենդանական աշխարհը: Ազգեցութիւնը կլիմայի վրա: Նշանակութիւնը:

Պօրտուգալիա.

Ֆրանսիա (առաւելապէս հիւսիսային).

Բելգիա և Հոլանդիա.

Դանիա.

Գերմանիա.

Շվեյցարիա.

Աւստրո-Անգլարիա.

Շվեդիա.

Նորվեգիա.

Անգլիա.

Արևմտեան և կենտրոնական Աֆրիկա.

Անգլիական կալւածքները Հիւսիսային Ամերիկայում.

Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները.

Մեքսիկա

Միջին Ամերիկա.

Հարաւային Ամերիկայի արևելեան պետութիւնները:

2. Մեծ կամ Խաղաղ ովկիանոսի ըուրջը գտնող երկիրները:

Խաղաղ ովկիանոսի տարածութիւնը և մասերը. խորութիւ-

նը և յատակի կազմութիւնը: Մակընթացութիւնը և տեղատուութիւնը: հոսանքները: Բուսական և կենդանական աշխարհը: Ազգեցութիւնը կլիմայի վրա: նշանակութիւնը:

Հարաւային Ամերիկայի արևմտեան պետութիւնները: Ճապոն:

Չինաստան:

Հնդկաչին:

Ասիական կղղիները:

Աւստրալիա և Ովկիանիա:

Յ. Հնդկական ովկիանոսի ըուջը զժնւող Երկիրները:

Հնդկական ովկիանոսի տարածութիւնը և մասերը: Խորութիւնը և յատակի կազմութիւնը: Մակընթացութիւնը և տեղատուութիւնը: Հոսանքները: Բուսական և կենդանական աշխարհը: Ազգեցութիւնը կլիմայի վրա: նշանակութիւնը:

Հնդկաստան:

Աֆղանիստան:

Բելուջիստան.

(Հարաւային Պարսկաստան):

Արարիա.

Արևելեան Աֆրիկայի երկիրները.

Ծանօթութիւն. Ամեն մի առանձին պետութեան աշխարհագրութիւնը անցնելիս պիտի հետեւել միատեսակ նկարագրական ծրագրին, այն է՝ 1. աշխարհագրական դիրքը. 2. սահմանները. 3. լեռնագրութիւնը. 4. ջրերը. 5. կլիման. 6. բուսական և կենդանական աշխարհը. 7. երկրի տնտեսական և քաղաքակրթական վիճակը. 8. բնակիչների ազգագրական բնորոշումը: — Նոր աշխարհամասի աշխարհագրութեանը դիմելիս՝ պէտք է կրկնել IV դասարանում սովորած ընդհանուր տեսութիւնները:

V. ԻՐԱՋՆՈՒԹԻՒՆ

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Իրազնութիւնը կոչում է նաև «գիտողական ուսումն», որ ծագում է «գիտողութիւն» գաղափարից. իրաքանչիւր իր կամ առարկայ պէտք է զննեի կամ գիտողութեան ենթարկեի, այսինքն մանկան տեսանիշիքի կամ նաև միւս զգայարանների միջնորդութեամբ ըմբռնեի: Եթէ, օրինակ, մանուկն ուզում է մի ծաղիկ դիտել, նա պէտք է աչքերով լաւ զննի այդ իրը, ձեռքով շօշա-

փի և քթով հոսութիւնի: Մանկավարժութեան հայր Պետալոցուց ակսած՝ գիտողութիւնը համարւել է իրաքանչիւր ուսուցման հիմք: Այդ պատճառով էլ շատ մանկավարժներ «գիտողական ուսումը» չեն ընդունում իրեւ ուսուցման առանձին առարկայ. պրանց տեսութեամբ իրաքանչիւր ուսուցման առարկայ պէտք է ունենայ իր գիտողական մասը: Բայց մասնաժողովս անհրաժեշտ համարեց «գիտողական ուսումն» ընդունել իրեւ գասաւանդութեան առանձին առարկայ Ա. և Բ. դասարաններում և կինդրոնացնել մէկ ուսուցչի ձեռքում:

Իրազնութեան նպատակն է մանուկների արդէն ունեցած գիտողութիւնները ճշտել, ընդարձակել, զգայարանները սրեւ նոր գիտողութիւններ անել, գաղափարները պարզել և խօսակցութիւնը կանոնաւորել: Դիտողական ուսումը կոչում է նաև «հայրենականութիւն», որովհետեւ դիտելու իրերը գտնուում են մանուկների գիտութիւնը, որովհետեւ դիտելու իրերը գտնուում են մանուկների միջական շրջակայքում: Բնական և արևեստական իրերը գիտում, զննուում են դասարանում, տաճը, զբոսանքների և զպրոցական ձանապարհորդութիւնների ժամանակ: Աշակերտները պէտք է խօսեն լիակատար նախադասութիւններով, բայց կարճ և ամփոփ, բարձր ձայնով և որոշ ու պարզ արտասանութիւնմբ:

Իրազնութիւնը պէտք է զարգացնի նաև մանկան հասկացողութիւնը, երևակայութիւնը բորբոքի, հետաքրքրութիւն զարգեցնի և զգացմունքը կրթի: Իրազնութիւնը պէտք է նախապատրաստական, վերլուծական նիւթ մատակարարի դասաւանդապատրաստական, այլ առարկաների համար, զիսաւորապէս լեզվի, աշխարհութեան այլ առարկաների, մանական գիտութիւնների, պատմութեան և այլն: հագրութեան, բնական գիտութիւնների, պատմութեան և այլն: գիտութեանց այս տարրերը աւանդուում են ազատ կերպով, գիտութեանց այս տարրերը աւանդուում են ազատ կերպով, միմեանցից անկախ, առանց սիստեմատիքական դասաւանդութեան:

Մեր առաջարկած ծրագրի նիւթն առնեած է հայ մանուկների անմիջական շրջապատից և կարելի է հետեւալ խմբերի բաժանել.

- ա) արևեստական իրեր,
- բ) բնութեան երևոյթներ,
- շ) բոյսեր և կինդաններ,
- դ) մարդ,
- ե) ընտանիք,
- զ) պարագաներ,
- է) աշխարհագրական գաղափարներ,
- ը) տեղական զրոյցներ և այլն:

Արհեստական իրեր դիտելիս՝ պէտք է զննութեան ենթարկել առարկան, որոցի նրա բաղկացուցիչ մասերը, ինչ նիւթերից և ուժ ձեռքով շինւած լինելը, առանձնայատկութիւնները և գործադրութիւնը: Բնութեան երեսյթների մասին խօսելիս՝ պէտք է բացատրել զրանց ինչպէս և ինչից առաջանալը, փոխադարձ յարաբերութիւնն ու կազը, տւած օգուտն ու վնասը: Կհնդանիները դիտելիս՝ պէտք է նրանց արտաքինը նկարագրել, որոշել նրանց ինչով և ինչպէս կերակրւելը, ապրելու վայրը, բնորոշ առանձնայատկութիւնները, տւած օգուտն ու վնասը: Բոյսերը զննելիս՝ պէտք է տալ նրանց արտաքին նկարագրութիւնը, էական մասերի որոշումը—արմատ, բուն կամ ցողուն, տերե, ծաղիկ—պէտք է բացատրել աճման եղանակը, ջրի և լոյսի նշանակութիւնը դրանց համար, տւած օգուտն ու վնասը: Նոյն ձեռվ պէտք է պարզել և մանուկներին գիտակցաբար ըմբռնել տալ նաև միւս գաղափարները: Անհրաժեշտ չէ, որ ծրագրի մէջ առաջ բերւած նիւթերի դասաւորութիւնը ճշտութեամբ պահպանւի. ուսուցչին պէտք է ազատութիւն տրի իւրաքանչիւր դիտազութեան համար յարմարժամանկ գտնելու և շրջապատող հանգամանքներն ի նկատի ունենալու: Առաջին և երկրորդ տարւայ նիւթերը նոյնպէս կարող են միմեանց փոխարինել՝ ըստ տեղական հանգամանքների և ժամանակի պահանջի:

Ծ Բ Ա Գ Ի Բ

Ա. ԴԱՍԱՐԱՆ (շաբաթական 2 դաս).

- Դասարան.
- Դասարանում գտնւող իրերը.
- Աջ, ձախ, վերև, ներքե, առաջ, ետև.
- Բակ (սանդուղք, պարտէզ, եթէ կայ), սահման.
- Արե, լոյս և ստեր, արեի ծագելը, մայր մտնելը. առաւոտ, կէսօր, երեկոյ, գիշեր, կէս գիշեր.
- Արևելք, արեմուտք, հարաւ և հիւսիս.
- Տարւայ եղանակները, ամիսները, շաբաթւայ օրերը, օրւայ ժամերը, ժամացոյց.
- Աստղեր, լուսին. ծնունդ լուսնի, կիսալուսին, լուսնի լուսնի.
- Ամպեր, ծիածան, որոտումն, փայլակ, կայծակ, քամի, փոթորիկ.
- Գոլորշի, ցող, եղեամն, անձրե, ձիւն, կարկուտ, սասուց.
- Դպրոց, փողոց, բնակարան, գոմ, փարախ.
- Եյգեքաղ, գինեգործութիւն, դաշտականք.

- Աղբիւր, առու, գետ, գետափ (կամուրջ, ջրաղաց, եթէ կայ), լճակ (եթէ կայ).
 - Դաշտ, բլուր, սար, հովիտ, ձոր.
 - Խոտ, ծաղիկ, բանջար, ծառ, պարտէզ, այգի, անտառ.
 - Ընտանի կենդանիներ—ձի, եղ, ջորի, կով, եղ, գոմէշ, ոչսար, ուղտ, այծ, շուն, կատու, մուկ, մեղու, շերամ (եթէ կայ).
 - Թոչուններ (հաւ, սագ, բաղ, հնդկահաւ, ճնճղուկ, աղաւնի, ծիծեռնի, աղաւնի, աղաւնի, աղաւնի).
 - Մարդ—արտաքիննկարագրութիւն, սնունդ, ժաբրութիւն, առողջապահութիւն, զգեստ, անկողին, ամանեղին.
 - Ընտանիք՝ անդամների գերը և փոխադարձ յարաբերութիւնը—հայր, մայր, պապ, տատ, ծառայ, աղախին.
 - Աղքակցական անունների բացատրութիւնը—քեռի, տաւնէր, տագը և այլն:
- Բ. ԴԱՍԱՐԱՆ (շաբաթական 2 դաս)**
- Լոյս, ձրագ, լազտեր, լամպ, մոմ, ձէթ, նաւթ.
 - Կրակ, բոց, ջերմութիւն, կերակուր եփելը, սինեակ տաքցնելը.
 - Այրուղ նիւթեր՝ փայտ, ածուխ, աթար, քարածուխ. մոխը, վառարան.
 - Դրամ՝ պղնձի, արծաթի, ոսկու. թղթաղրամ, զանազան արժէքի դրամներ.
 - Ցամաքային ճանապարհներ՝ շաւիդ, կածան, ձիու, սայլի ճանապարհ. //
 - Խճուղի, երկաթուղի.
 - Ջրային ճանապարհ՝ նաւակով, նաւով, շողենաւով (եթէ կայ).
 - Քաղաք, գիւղ, գրանց թաղերը.
 - Քաղաքի նշանաւոր շէնքերը, եկեղեցիները, թատրոն, գործարան և այլն.
 - Պատճական լիշտակարաններ, արձան, արձանագրութիւն.
 - Ջրամատական արհեստականներ, արհեստագրութիւն.
 - Վահական աւելացներ, աւելացնուածուն, աւելակներ.
 - Պարապունիք՝ արհեստանոցներ—գերձակ, կօշկակար, հացթուխ, դարբին և այլն.
 - Երկրագործութիւն՝ հողի մշակելը—վարել, ցանել, հնձել, կասել, աղաւնի և այլն.
 - Գործիքներ՝ գութան, խոփ, մանգաղ, գերանդի, կամ, թի, եղան և այլն.

15. Մշակելու հացահատիկներ՝ ցորեն, գարի, կորիկ, բըինձ,
սիմինդ, բամբակ, վուշ և այլն.

16. Խաշնարածութիւն՝ բուրդ, կաթ, մածուն, սեր, իւղ,
պանիր և այլն.

17. Ուսորդութիւն՝ որսի շուն—բարակ. որսի կենդանի—
նապաստակ, եղիքրու, աղաւնի, կարաւ, —նաև գայլ, աղւէս, արջ.

18. Ջկնորսութիւն՝ կարթ, ցանց, ուռկան, օչխ, ձուկ որսալու
տեղական եղանակները.

19. Տեղական սովորական ձկների տեսակները:

20. Ժողովրդական, տեղական տօներ, ուխտազնացութիւններ.

21. Տեղական զրոյցներ, պատմութիւններ, առասպելներ, աշ-
ւանդրութիւններ.

22. Գիւղի կամ քաղաքի շրջակայքը—դպրոցական ճանապար-
հորդութիւն.

23. Դաղափար մասշտարի մասին.

24. Դասարանի, բակի, դպրոցի, եկեղեցու և այլն պարզ
յատակագիծը:

VI ԲՆԱԿԱՆ ԳԻԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Բնական գիտութիւնները մեր աաբբական դպրոցներում պէտք
է էապէս հայրենագիտութեան բնաւորութիւն ունենան՝ բառիս ըն-
դարձակ նշանուկութեամբ: Հետաքար՝ հեռաւոր, օտար երկիրների
բնական իրերն ու երեսութիւնները պէտք է միայն այն չափով ընդուն-
ւեն ծրագրի մէջ, որ չափով որ նրանք նպաստաւոր կըլինեն
այս ժամանակների լրացմանը: Ուրեմն օտար երկիրների արտա-
դրութեանց մենք չըպէտք է ներ մտքով վերաբերւենք. այն նիւ-
թերն ու իրերը, որոնք մեր կեանքում շատ գործածական բաներ
են կամ օտար լինելով հանդերձ՝ առանձին հետաքրքրութիւն
են շարժում, պէտք է բնականաբար մտնեն հայրենագիտութեան
շրջանը:

Մանուկների նախադպրոցական կեանքից յետոյ առաջին
երկու տարիներն էլ նրանց՝ բնութիւնից ստացած ու ստանալիք
տպաւորութիւնները տակաւին չեն կարող ունենալ այն հարստու-
թիւնը ու խորութիւնը, որ մենք իսկական բնական դիտութիւն
աւանդէինք այդ հասակի մանուկներին: Ուստի հարկաւոր կըլինի
Ա. և Բ. դասարաններում այդ գիտութեան նախաշաւղի մէջ մոցնել

նրանց: Այս գասընթացքը սովորաբար անւանւում է իրագիտու-
թիւն կամ հայրենագիտութիւն, որ իր մէջ ամփոփում է աշխաբ-
հագրական (նաև տիեզերագրական), բնագիտական—աշխատագի-
տական տարրը գեռ անանջատ, այսպէս ասած՝ իրանց նախա-
կան վիճակում:

Ապա ուսուցման երկրորդ աարին բնական պահանջ կըզգացի այս
գիտելիքների շրջանները զատել սահմանահատելու: Այս պատճառով
մենք պէտք է այդ տարրերը իրարից անջատենք և իրաքանչիւրին
յատուկ գլորցական սիստեմով աւանդենք: Բայց այս շրջանումն
էլ այդ սիստեմներն իրարից այնպէս անջատ-անջատ չըպէտք է
աւանդենք, որ մեր սաներն այդ իրերն ու եղոյթները իրարից ան-
կալ բաներ համարեն: Մենք հետամուտ պէտք է լինենք ոչ թէ
բոյսերի, կենդանիների և այլն մասնագիտական սիստեմները տալու,
այլ նրանց մէջ եղած առնչութիւնները գիտել-հասկանալում ա-
ռաջնորդելու: Բնական իրերը այն չափով սիստեմի տակ պէտք
է գրւեն, որ չափով որ հետզետէ աւանդւած օրինակները այս
տեսակէտով գասաւորելու ասիթներ կըներկայացնեն: Բնական գի-
տութիւններն արդէն այնքան առաջադիմել են և ողջամիտ ման-
կավարժութեան հետառդները այնքան բուռն հարցանիրութեամբ
հետամուտ հն եղել այդ նոր հոսանքին, որ մենք հնարաւութիւն
ունենք մեր սաներին բնութեան յայտնութիւններին բազմակող-
մանի ձանապարհներով մօտեցնելու: Քանի որ բնական իրերն ու
երկոյթները սերտ շաղկապւած են իրար հետ, նրանց ըմբռնելու
իրացնելու և գործադրելու համար պէտք է մեր սաներին մըտ-
իւրացնելու և գործադրելու բաղմակողմանի պատճառաբանութեան
ցնենք այդ երեսութների բաղմակողմանի պատճառաբանութեան
մատաշրջանները: Բնական իրերի և երեսութների առնչութիւնները
երկան են գալիս նրանց միացնող որոշ միջավայրերում, որոշ
խմբակի համակեցութեան մէջ: Այս պատճառութեան կազմակցու-
թեան հիմնական ցուցմունքները կամ փոսեեր հետեւալներն են. թեան հիմնական ցուցմունքները էակի մէջ.—

1. Առանձին օրգանական էակի մէջ.
ա. առնչութիւն գործիքի (գործարանի, օրգանի) և անելիքի
միջեւ.

բ. առանձին առանձին օրգանների միջեւ.
գ. որ և է էակի ամբողջական կազմութեան և նրա խաչա-
ցած գերի միջեւ բնութեան տնտեսութեան շնչանում:
դ. մարմնի կազմութեան և կեանքի եղանակի միջեւ,
ե. մարմնակազմութեան և կեանքի պայմանների միջեւ և
գ. կեանքի զանազան գործունէութեանց միջեւ:
2. Առանձին օրգանական էակների միջեւ եւ
3. Օրգանական եւ մնօրգանական էակների միջեւ:

Այս բոլոր կէտերից առանձին ուշադրութեան պիտի արժանահայ տարրական դպրոցում մարմնակազմութեան և կեանքի եղանակի միջև գոյսաթիւն ունեցող առնչութեան լուսաբանութիւնը: Բնական երկոյթների այս պատճառականութեան հանգամանքները քննութեան առնելու առիթներ ներկայացնելով՝ մենք միևնույն ժամանակ ապահովեցրած կլինէինք բնական գիտելիքներին վերաբերեալ մտապատկերների անընդհատ հոսանքը: Մեր այս նպատակին կը համանենք այն ժամանակ, երբ որ ամեն մի դասարանի ծրագրի համար այնպիսի նիւթ կը նարենք, որոնք որ բնական կապերով միացած կը լինեն իրար հետ:

Բնական գիտութեանց ծրագրի մէջ պէտք է մացնենք նաև աշխատազիտական տարրը նախ՝ որպէսզի ցոյց տանք մարդու միջամտութեան ազգեցութիւնները բնական իրերի և երևոյթների վրա, որպէսզի ապա հարցասիրութիւն առաջացնենք սաների մէջ ընտրելիք ապագայ գործունէութեան ճանապարհները հարթելու նպատակով։ Տեինիկական արտազրութեանց նիւթերի և պատրաստելու եղանակի մասին տարրական գաղափարներ անհրաժեշտ են այդ իրերը նաև նպատակայարմար կերպով գործածելու համար։ Աշխարհագիտութիւնը իր մէջ ամփոփում է հանքարանութիւնը, քիմիան, ֆիզիքան իրու բնական նիւթերի և ուժերի վերաբերեալ գիտելիքներ, որոնց գործադրութիւնները արտայայտում է արհեստաների մէջ։ Բնական գիտութեանց մնացած երկու ճիւղերը՝ բուսաբանութիւնը և կենդանաբանութիւնն էլ մենք միացնում ենք իրար հետ իրեր կենսաբանական գիտելիքներ։

Քիմիան տարրական դպրոցներում աւանդւում է առանց ա-
տօմիստիքական թէսրիխայի օժանդակութեանը զիմելու: Անօրգանա-
կան քիմիայի պրօցէմների մասին մենք կարող ենք գաղափար-
տալ մեր աշակերտաներին գլխաւորապէս հանքաբանութեան մէջ,
իսկ օրգանական պրօցէմների մասին՝ բուսաբանութեան, կենդա-
նաբանութեան, մանաւանդ առողջապահութեան մէջ: Արևեստա-
գիտութիւնը (տեխնօլոգիան) իբրև գիտելիք մեր ծրագրի մէջ
պէտք է տեղ բռնի այն չափով, որ չափով որ անհրաժեշտ է հան-
քային, բուսական և կենդանական կարենորագոյն նիւթերի մշակ-
ման եղանակները տարրական ձևով բացատրելու համար:
Մեր բնակարանը, խոհանոցը, այգին, դաշտը և այլն բազմակող-
մանի առիթներ են ներկայացնում այսպիսի գործնական տեղե-
կութիւններ տալու: Պետրոգրաֆիան միներալոգիայից տարրա-
կան ծրագրում մենք չենք գատում, իսկ երկրաբանութիւնը վե-
րապահում ենք աշխարհագրութեանը:

Ծրագրի առաջարկած նիւթերը համախմբւած էն բատորոց, մի-

1. Պոլբերի „Միք Բօյի“, թարգմ. Զիժովի, և պատկերացրու հատորները, գինը 1. 25. կույ.

2. *Պաւլովի* Методика природоведения, СПб., 1902, գրքում

վերել բացատրուած թիօրիան և նրա գործադրութիւնը օրինակ-ներով և օրինակելի դասերով լաւ բացատրում է: Այս գրքում այլ նմանօրինակ ձեռնարկներ էլ են լիշտում:

3. Բէրնարդ Լանգբերգի Բъ царствъ лѣсовъ и полей գըր-ւածքը ծառոյում է նոյն նպատակին:

4. Ե. Ֆ. Ռայնբուրի Օтвѣты на вопросы изъ области тех-ническихъ производствъ գիրքը պարունակում իր մէջ ծրագրի առաջարկած արևեստագիտական նիւթերը անհան բացառութեամբ, մանրամասն մշակւած:

Բնական գիտութիւնների նիւթերը վերել բացատրուած սկզբունքների համեմատ համադրւած են հատնալ թերթում: Քառամեայ դասընթացքով գլուխների համար առանձին դասըն-թացք կազմւած չէ. առաջարկում է վեցամեայ դպրոցի Գ. և Դ. դասարանների ծրագիրը: Կենդանաբանութեան, բուսաբանութեան ու համբարանութեան նիւթերն այս երկու դասարաններում ամ-փոփ բնաւորութիւն ունին, իսկ գիրիքաայինն ու քիմիայինը՝ ոչ, ուստի պէտք է Ե. և Զ. դասարանների այս գիտելիքների ծրա-գրներից քաղել համառօտ նիւթեր՝ բոլոր ճիւղերն ամփոփ աւան-դելու համար: Հետևաբար հարկաւոր կը լինի Գ. և Դ. դասա-րանների բնապատմական նիւթերն էլ աւելի համառօտ աւանդել՝ քան վեցամեայ դասընթացքով դպրոցներում:

VII. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Դպրոցական կեանքի հէնց առաջին օրերից պէտք է առիթ-ներից օգուտ քաղել և աշակերտուններին հասկացնել մարմնի, հա-գուստեղէնի, բնակարանի, օղի, ջրի և առնասարակ՝ մնագեղէնի մաքրութեան անհրաժեշտութիւնը և անմաքրութունից առաջացած չարիքները: Այս ցուցմունքներն աւելի նշանակութիւն կունենան նրանց համար, երբ որ երրորդ ու չորրորդ տարին ուսած կլինին մարդակազմութեան ու բնախօսութեան տարերքը բնագիտու-թեան հետ: Մանաւանդ այս առարկանների գասատունները պէտք է պատեհ առիթներից սպուտ քաղեն և առաջնորդեն աշակերտուններին առողջապահական խնդիրներ լուծելու մէջ: Առողջապահութեան իսկական դասընթացքը ծխական դպրոցներում վերապահում է վերջին վեցերորդ դասարանին, երբ օժանդակ գիտելիքները հա-մարեա թէ աւաբտած լինելով՝ աշակերտուններին հնարաւոր կլինի

առողջապահութեան պահանջները գիտակցօրէն ըմբռնել: Ինչ վերաբերում է առունին հիւանդապահութեանը, ժամանակի սղու-թեան պատճառով այդ մնում է հետևեալ աւելի բարձր զամբն-դացքն: Բայց որպէսզի նաև վեցամեայ դասընթացքն աւարտողները բոլորովին զուրկ չմնան այս կարևոր գործնական գիտելիքից, նրանց պահանջներին կարելի էր գէթ մասամբ բաւարարութիւն-տալ ազատ ընթերցանութեամբ, քանի որ ուսած օժանդակ գի-տելիքները առողջապահութեան հետ կարող էին գիւրացնել այս-պիսի բովանդակութեամբ ժողովրդական գրքերից օգուտ քաղելը: Այսուամենայնիւ կարելի է Զ. դասարանում մի քանի կարերա-գոյն ցուցմունքներ անել դժբաղդ գէպքերում առաջին օգնութիւ-նը հասցնելու համար:

Ծ Ր Ա Գ Ի Ւ

Զ. ԴԱՍՍՄՐԱՆ (շաբաթական 2 դաս)

Ա. Բնիդիանուր գիտելիքներ:

ա. Յղը: Մաքուր և անմաքուր օղը, անմաքրութեան տեսա-նելի և անտեսանելի տարրերը

I. Տեսանելի վասակար տարրերը. ծուխը (թոնրից, օջա-խից, մանղալից), Փոշին հանքային—անօրգանական և օրգանա-կան՝ բուսական ու կենդանական նիւթից առաջացած, սրանց տար-բերութիւնները: Դիսից մտած փոշին, գետինը առանց ջրջելու-առաջացած փոշին, փոշոտ հագուստեղէնը բնակարանում թափ-տալուց, ցիխոտ կօշիկներից առաջացած փոշին:

II. Անտեսանելի վասակար տարրերը. ածխածնի չափաղանց մեծ քանակը երկաթէ վառարանից, ինքնաեռից, օրգանական նիւ-թերի փթերուց մեծ քանակութեամբ մարդկանց ու կենդանիների թիւնները, վարակւածներին առանձնացնելու և կացարանը ախ-թիւնները, վարակւածներին առանձնացնելու և կացարանը ախ-տահաններու անհրաժեշտութիւնը. վէրբերի պահպանութիւնը միկ-րոբներից:

Միկրոբներ: Վարակիչ միկրոբներից առաջացած հիւանդութիւնները, վարակւածներին առանձնացնելու և կացարանը ախ-թիւնները, վարակւածներին առանձնացնելու և կացարանը միկ-րահաններու անհրաժեշտութիւնը. վէրբերի պահպանութիւնը միկ-րոբներից:

բ. Չուրց: Մաքուր և անմաքուր ջուրը. ջուրն իբրև մնաղ-ութեան և մաքրութեան միջոց. Ջրի տեսակները՝ գետի, աղբիւ-թեան վասակարանից, լճի, ծովի, սրանց համեմատութիւնը. Ինչ տեսակ-ի ջրհորի, լճի, ծովի, սրանց համեմատութիւնը.

Հուր ենք գործածում և ինչպէս պէտք է գործ ածենք: Զրհորների և զետերի ջրերի գործածութեան վտանգը համաձարակի ժամանակ (խօլերա տիֆ): Համաձարակիների ժամանակ եփ տւած ջուր գործ ածելը: Եփ տւած ջուրն ինչպէս պահել: Զրանցքներ ու կոյուղիները:

Մարդութիւն: Մարմնի մաքրութեան անհրաժեշտութիւնն ընդհանրապէս և մասնաւորապէս ականջների, բերանի և ատամների, ձեռների և երեսի (լւացւելու կարևորութիւնը հացի նստելուց առաջ): Կեղտից առաջացած վտանգը. սառ ու տաք ջրով լողանալը. վաննա, հասարակական բաղանիքների կարեռութիւնը: Սպիտակեղինի մաքրութիւնը (բացատրել շապիկ չըփոխելու նախապաշարմունքի վասակար հետևանքը), ուրիշի շորերը անլւայ հագնելու վնասը: Եռման ջուրն իբրև ախտահանութեան միջոց: Սապոնի մաքրիչ աղդեցութիւնը. լւացքն ինչպէս անել ու չորացնել:

գ. Ջերմութիւնն ու սառնութիւնը:

Ջերմութիւնը: Սենեակի ջերմութեան չափը և մարմնի ջերմութիւնը, որ արինիցն է: Սենեակի և մարմնի ջերմաչափ: Ջերմը հիւանդութեան նշանն է: Հիւանդին պառկեցնելու, ուտեցնելու և խմեցնելու եղանակները: Զափազանց տաք հագնելու վնասները: Երեխաներին չպէտք է շատ տաք հագնել:

Ցուրտը: Ցուրտը մեր մարմնի զգացողութեան տեսակէտից համեմատական գաղափար է: Ի՞նչ է մըսիլը: Քրտնածը, քրտնածին պահելը: Մըսելուց առաջացած հիւանդութիւնները: Մարմնամասերի սառչիլը և խնամքը: Օղին սառեցնում է և ոչ թէ տաքացնում:

դ. Լոլոր

Արկի ճառագլթների օգտաւէտութիւնը. անմիջական և անդրադարձ լոյս: Ո՞ր կողմի լուսամուտները համապատասխան են առողջապահական պահանջներին: Աշակերտների դիրքը դէպի լոյսի ուղղութիւնը պարապելու ժամանակ: Աչքը ինըն տեսրդութեան գործարան և նրա առողջապահութիւնը: Տես զգայարանքներին վերաբերեալ հատւածը:

ե. Բնակարանի եւ դասարանի առողջապահական պայմանները, Շէնքը, լուսաւորութիւնը, օգափոխութեան եղանակները: Չոր ու խոնար ընակարան: Ննջարանի առողջապահական պայմանները: Գետնին պառկելու վտանգը (խոնաւութիւն, միջաներ): Կարասիքի և այլ իրեղնեների մաքրութիւնը: Տունն աւելիու և պատերն ու առաստաղը սրբելու եղանակները: Հացատունը, թումիլը, խոհանոցը, երթիկը և նրա նշանակութիւնը:

Հիւանդի սենեակը, անկողինը: Մի անկողնում երկուսով քնելու վնասը: Երեխայի օրօրոցը. պինդ բարուրելու վտանգը: Օրօրելու վնասը: Մանկական մահճակալը: Լուն, ոչիլը, բաղինչը, սրանցից ազատելու միջոցը:

Բակը, պարտէզը, նրանց օգտակարութիւնը:

գ. Հազինիլիի առողջապահական պայմանները: Հագուստեղէնի նիւթերը (բամբակ, բուրդ, վուշ, մետաքս) ըստ տարուան եղանակների. այդ նիւթերի ջերմապահութեան զանազան տատիմանները, փուֆայկայի յատկութիւնները. նրա օգուտն ու վնասը. գուլպայ, ոտնաման, կրկնակօշիկ: Երեխայի բարուրն ու հասուր, գուլպայ, ոտնաման, կրկնակօշիկ: Երեխայի բարուրն ու հագուստեղէնը, ոտների ու զլիսի հագնելիքները: Տես նաև ջրին վերաբերեալ հատուածը:

է. Ուտելիի եւ խմելիի: Ուտելիքի նիւթերը—բնալուծական (քիմիական) տեսակէտով—կենդանական, բուսական և հանքային (քիմիահներից: Նրանց քիմական գլխաւոր առնչութիւնները—ջուր, աշխարհներից: Նրանց քիմական գլխաւոր առնչութիւնները—ջուր, աղիտ (օֆլուկ), ջրաբնածուխ (սգլերու): Գլխաւոր սննդագար սպիտ (նիւթերը՝ սպիտը: Նիւթերի մաքրականութիւնը և սննդագարը ոյժը: Մսեղէն, բուսէղէն և խառն կերակուրներ: Կաթը, մօր կաթը և միւս կենդանիներինը մանկան համար: Կաթի եփ տալու անհրաժեշտութիւնը և պահելու կերպը: Կաթից պատրաստուած ուտեղէները՝ պանիր, մածուն, իւղ, թան և ամեն մէկի սննդագարը լիքները՝ պանիր, մածուն, միւսը, նրանց տեսակային բաժանմունքը, զօրութիւնը: Զուն ու միւսը, նրանց տեսակային բաժանմունքը (բուլին) պատրաստիլը: Կերակուր պատրաստիլը: Բանջարները և նրանց սննդագարը զօրութիւնը, բանջարնեղէնի պատրաստիլը: Աշխատանք և սնունդ: Ուտելու ժամերը, չափը: Աշակերտի աշխատանքը, սնունդը, հանուլելու ժամերը, գիսը: Փորկապութիւն և փորլուծութիւն (հասակաւորների և գիսաւը: Փորկապութիւն և փորլուծութիւն (հասակաւորների): Խճելիքը: Սպիրտից առաջացած վնասները (արբեցողութիւն):

թ. Մասնաւորապէս կարեւորագոյն օրգանիների առողջապահութիւնը

ա. Նիւթափոխութեան, այսինքն՝ սննդառութեան և շնչառութեան գործարանների առողջապահութիւնը. վերոյիշեալ այս այն գործօնների աղդեցութիւնն այս օրգանների վրայ, ինչպէս այն գործօնների աղդեցութիւնն այս օրգանների վրայ, ինչպէս նաև մաշկի առողջապահութիւնը նիւթափոխութեան տեսակէտից:

բ. Ուղեղի և ընդհանրապէս ջղային ու մկանային սիստէմների առողջապահութիւնը: Աշխատանքը, ուժասպարութիւն, հանգիստ, մարմնամարդութիւն և քուն:

Գ. Զգայարանքների առողջապահութիւնը: Վերոյիշեալ այս
կամ այն գործօնների ազգեցութիւնները նրանց վրա:

VIII. ՀԱՅՈՅ ԼԵԶՈ

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ

Լեզուի միջոցով մենք արտայայտում ենք մեր բոլոր մտաւոր
աշխարհը. լեզուն է նաև մեր հոգեկան աշխարհի զարգացման կա-
րևորագոյն պահանջը: Առանց լեզուի մեր գիտակցութեան մէջ ե-
ղած մտապատկերները ներկայացնում են մի խառն զանգւած և մենք
չենք կարող դրանց նույառակայարմար կերպով գործ ածել և կա-
րևոր գաղափարները կազմել. առանց լեզուի մարդու չի կարող խո-
հական լինել:

Այսպիսով լեզուի և հոգեկան զարգացման ներքին փոխագարձ
ներգործութիւնն անկասկած լինելով՝ պարզ է, որ լեզուի ուսու-
ցումը դպրոցական ուսումնական տարրերից մէկն է:
Երեխայի հոգեկան զարգացման և լեզուի մէջ եղած այս կա-
պակցութիւնից արդէն ակնյայտնի է, որ դպրոցական ուսու-
ցումը բնականարար պէտք է տեղի ունենայ մայրենի լեզուվ:

Մայրենի լեզուի ուսուցումը առաջնակարգ տեղ պէտք է բըռ-
կարողանան դպրոցներում, որի շրջանաւարտները պէտք է
նացի և գրաւոր արտայայտել՝ ճիշտ, պարզ ու վարժ. բ. ուրիշ-
ների արտայայտած և իրենց զարգացման համապատասխան բե-
րանացի և գրաւոր մտքերը ըմբռնել որոշ և արագ. գ. մտաւոր,
բերել՝ հայկական և գեղագիտական (էսթետիկական) զարգացումն ձեռք
ջոցով. գ. ծանօթութիւն ունենալ տաճկահայոց բարբառի և գրա-
բար լեզուի:

Բերանացի և գրաւոր արտայայտութեան մէջ պէտք է տի-
րապետէ գրականական աշխարհիկ լեզուի քերականութիւնը: Լեզուի
ուսուցման գլխաւոր տարրեն են ա. ընթերցանութիւնը, բ. քե-
րականութիւնը և գ. գրաւոր աշխատանքները:

Ա. Ընթերցանութիւն

Հայոց լեզուի ընթերցանութեան նիւթը տալիս է հայոց լեզուի
գասագիրքը: Լեզուի յաջող գասաւանդութեան համար անհրաժեշտ
է ունենալ ինաւորվով և որոշ սկզբունքներով կազմւած գասագիրք:

Դասագլորի բովանդակութիւնը պէտք է սերտ կատ ունենայ նոյն
դասարանում աւանդւած մի քանի գլխաւոր առարկաների հետ,
որպէս զի աշակերտի հետաքրքրութիւնը վառ պահէ և գիտակ-
ցութիւնը կենարոնացնէ: Յօդւածները պէտք է որոշ չափով թէ մի-
մեանց հետ և թէ դասաւանդուղ նիւթերի հետ առնչութիւն ու-
նենան, ուրեմն անկապ ու խառնիձաղանձ նիւթերի ժողովածու
չպէտք է լինեն: Եւ որովհետև մանկական հոգու զարգացման բո-
լոր աստիճանների վրայ բանաստեղծական արտայայտութիւննե-
րը միշտ մի առանձին խորը տպաւորութիւն են թողնում աշակեր-
տի սրտի վրայ, լեզուի գասագիրքն էլ պէտք է պարունակէ դրանց
հասակին մատչելի և ընտիր բանաստեղծական գրւածքներ: Լեզուի
դասագրքի մէջ պատշաճ տեղ պէտք է բռնեն պատմական և գրա-
կան յօդւածները՝ ժողովրդականացրած ձեռվ. ժողովրդական զը-
րոյցները, ընտիր հէքիաթները, ժողովրդական հերոսների պատ-
մութիւնները, առածները, ասացւածները, աւանդութիւնները
պէտք է գեղեցիկ նկարագրութեամբ ձևակերպւած լինեն:

Բնագիտական և աշխարհագրական նիւթ պարունակող յօդ-
ւածները նոյնպէս պէտք է ամփոփի, բովանդակալի և հետաքրքրա-
կան լինեն: Լեզուի գասագիրքը պէտք է պարունակէ նաև աշա-
կերտների իրական կեանքին ու շրջանին վերաբերեալ յօդւած-
ներ, ինչպէս օրինակ՝ տեղական և ազգային տօների, ծննդավայրի
բնութեան, զբոսանքների, ճանապարհորդութիւնների, ուխտա-
գնացութիւնների և այլն նկարագրութիւնները: Պէտք է ուշադրու-
թիւն դարձնել աշակերտների անհատական կեանքի երևոյթների
վրայ:

Աչքաթող չպէտք է անել նաև ժողովրդի տնտեսութեան և
առողջապահութեան վերաբերեալ ամփոփի յօդւածները. աղջիկնե-
րի համար պէտք է ի նկատի ունենալ նաև տնտեսութեան վե-
րաբերեալ հակիմն գրւածքները:

Դասագիրքը պէտք է նաև գասաւարակիչ ներգործութիւն ու-
նենայ և բարյական ու գեղագիտական զգացմունքներ ներշնչէ:
Սակայն հեռու պէտք է լինի ձևակերպոյական խրատներ
տալուց:

Դասագրքի յօդւածները պէտք է համապատասխանեն աշա-
կերտների զարգացման և գիտութեան չափին, պէտք է նրանց
հետաքրքրութիւնը շարժեն: Պէտք է խոյս տալ շատ երկար, խը-
ճողւած, մութը և երկար բացատրութիւնների կարօտ նախագա-
սութիւններից: Որչափոր պարզ ու կանոնաւոր լինի գասագրքի լե-
զուն, այնչափ լաւ:

Բ. ՔԵՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ.

Մեր դպրոցներում մինչև այժմ իշխող է հանդիսանում դասաւանդութեան այն հին սիստեմը, որով լեզվի դասը երեք կարգի են բաժանում. ա. կարգավայրատմելու դաս, բ. քերականութեան դաս, և գ. դրաւոր աշխատանք:

Ելեք մասերն էլ աւանդում են իբրև միմեանցից անկախ, առանձին առարկաներ։ Դասաւութեան այս եղանակը անօգուտ և աննպատակայարմար է. ընդհակառակը, լեզւի դասաւանդութիւնը պէտք է սերա կերպով միացած մի ամբողջութիւն կազմի։

Քերականութիւնը մեր ծխական-տարբական գպրոցներում չակտոք է դասաւանդել իրեւ համակարգութիւն-սխստեմ, այլ միայն գործնական կերպով։ Քերականութիւնից պէտք է անցնել միայն այն, ինչ որ բաւականութիւն կտայ լեզուի որևէ է պահանջնին։ Աշակերտների քերականական թերութիւնները երևան են գալիս՝ թէ նրանց խօսելու և թէ գրելու միջոցին։ թէ պատմելու և թէ շարադրութիւն գրելու ժամանակ պարզ նկատում են այս թերութիւնները։ Պատմելու ժամանակ աւելի շուտ և աւելի պարզ կերպով են երևում սխալները, որովհետեւ աշակերտը ժամանակ չունի մտածելու և կամ գրքերում որոնելու այս կամ այն կանոնը, ինչպէս որ կարող է անել տանու շարադրութիւնը գրելիս։ Միւս կողմից էլ կէտադրութեան սխալներն աւելի որոշ ու ակնյայտնի են լինում գրաւոր շարադրութիւնների մէջ, քան պատմելու ժամանակ։

Ծատ անզամ աշակերտները պատմելիս կամ գրելիս այնպիսի սխալներ են անում, որոնք ոչ թէ կապւած են միայն իրենց անհատականութեան, այլ և տեղական պայմանների հետ. կան, օրինակ՝ արտասանութեան սխալներ և ամբողջովին սխալ գործածւած բառեր, որ յատուկ լինելով տեղական գաւառաբարբառին, հեշտ չէ զրանց շուտով արմատախիլ անելը: Թէև լեզւաբանական տեսակէտից դրանք հետաքրքրական են, բայց և այնպէս ուսումնարանը պէտք է այդ սխալներն ուղղէ գործնական կերպով, առանց բերականական կանոնների:

Քերակոնութիւնը լեզւի դասատրութեան համար նպատակ չպէտք է լինի, այլ միայն միջոց. աշակերտները ոչ թէ քերականութիւն պէտք է սովորեն, այլ ուղիղ խօսել ու գրել, և ինչ որ հարկաւոր է ուղիղ խօսելու և գրելու համար միայն այն պէտք է սովորեցնել և միայն այն ժամանակ, երբ պահանջ է զգացւում: Այսպիսով քերականութեան դասը իբրև ինքնուրոյն առարկայ՝ պէտք

Ք բոլորովին վերացնել և միացնել լնթերցանութեան ու շարադրութեան հետ:

9. Գրաւոր աշխատանիվներ

Գրաւոր աշխատանքի զանազան տեսակները նոյնպէս լեզվի առանձնացած մասը չպէտք է համարել, այլ սերտ կերպով կապել լեզվի և նոյնպէս այլ առարկաների ուսուցման հետ։ Շարադրութեան բովանդակութիւնն ու արտաքին ձևը մի ամբողջութիւն պէտք է կազմեն, նիւթը պէտք է վերցնել ուսած առարկաներից, ընթերցանութեան յօդւածներից, երեխանների առօրեայ և սովորական կեանքից։ Ինչ վերաբերում է ձեին, հարկաւ, աշակերտները, որքան կարելի է, պէտք է անսխալ և գրական լեզուով գրեն, բայց ազատ, իրենց մտածած նախագասութիւններով և բառերով։ Բայց ձեի շարադրութիւնը կարող է լինել՝ ա. իրերի, պատկերների նկարագրութեան ձևով, բ. սովորած պատմութեան, գրոյցի կամ պատահած որ և է դէպքի նկարագրութեան ձևով. գ. խօսակցական և դ. նամակի ձևով։ Նպատակայարմար է աշակերտներին վարժեցնել նաև կեանքի մէջ անհրաժեշտ և սովորական գրութեան ձևերին, օրինակ հասցէի, պայմանագրի և այլն։

Ուղղագրութիւն սովորեցնելու նպատակով պէտք է արտա-
գրութեան վարժութիւններ անել տալ՝ թէ տպագրից և թէ ձե-
ռապգրից. արտագրելիս երեխանները պէտք է բարձր ձայնով ար-
տասանեն և ամբողջ բառեր արտագրեն և ոչ թէ մաս-մաս։ Վեր-
ջին հետազօտութիւնները աւելի մեծ նշանակութիւն են տալիս
արտագրելու վարժութիւններին, քան սովորաբար ընդունու-
ած էու։

Ուղղագլական թելազրութիւնները պէտք է նախապատրաստուած լինեն. իւրաքանչիւր թելազրութիւն պէտք է մի ուրոշ մասնաւոր նպատակ ունենայ:

Կարդալ-գրելն առաջին տարուայ սկզբում անմիջապէս չպէտք է սկսել, այլ առ նուազն մի ամսից յետոյ. այդ միջոցում աշակերտաներին պէտք է զբաղեցնել վերլուծական և գրերի տարրերը կծեռանելով: Կարդալ-գրելու վարժութիւնների նիւթեկութ վարժութիւններով: Կարդալ-գրելու վարժութիւնների նիւթեկութը պէտք է վերցնել աշակերտաների առօրեայ կեանքից, իրազընթը պէտք է վերցնել աշակերտաների առօրեայ կեանքից, իրազընթը պատմութիւններից: Իսկական կարդալ-գրելն սկսում է «օրինակելի քիաթներից»: Իսկական կարդալ-գրելն սկսում է «օրինակելի քառերով», որոնց մասին երկար բացատրութիւններ չպէտք է բառերով,

տալ, քանի որ վերցրած են լինում նախապէս մշակւած նիւթից բառը բաժանում է իւրաղկացուցիչ տարրերի—վանկերի, հընչիւնների—և կրկին միացնում բերանացի. այնուհետև ցոյց է արտում բառը իւր պատկերով առանձին, որով բառը աւելի լաւ է տպաւորում երեխայի գիտակցութեան մէջ:—Աւելի նպատակայարմար է նախ ձեռագրով սկսել:—Շարժական տառերը լինում են թէ ձեռագիր և թէ տպագիր: Երեխանները տառերը դրում են օրինակելով, թելաղութեամբ և ինքնուրոյն կերպով: Երեխանները պէտք է կարդան նաև խմբովին:

Վեցամեայ դասընթաց ունեցող դպրոցների ծրագրի մէջ մասնաժողովս անհրաժեշտ համարեց մայրենի լեզուին կցել նաև մի-մի դաս—վերջին 2 դասարաններում—դրաբար և տաճկահայոց գրական բարբառը, որպէս—զի աշակերտները աւելի լաւ հասկանան աշխարհաբարի ձեռերը և առհասարակ մայրենի լեզուի ո-գին, կարողանան ըմբռնել Աւետարանի և եկեղեցական արարութիւնների լեզուն, հեշտութեամբ հասկանան տաճկահայերի խօսակցական և գրական լեզուն:

Դրաբարն ու տաճկահայոց գրական բարբառը պէտք է սովորեցնել գործնական հղանակով, համեմատելով աշխարհաբարի հետ, առանց սիստեմատիկ քերականութեան:

Ծ Բ Ա Գ Ի Ր

Ա. ԴԱՍԱՐԱՐՄԱՆ (շաբաթական 6 դաս).

1. Կարդալ—պատմել

Հնչական եղանակով և «օրինակելի բառ»-երի օժանդակութեամբ աշակերտները պէտք է սովորեն ամրող այլուրենի տառերը կարդալ և գրել. պէտք է անցնեն գլխատառերը և վարժկերպով կարդան բառերն ու նախադասութիւնները, վերջը նաև փոքր յօդուածները: Անզիր անել կարճ ոտանաւորներ: Աշակերտները պէտք է կարողանան սովորած յօդուածը հարցերով պատմել:

2. Քերականութիւն

Կէտաղբութեան նշանները՝ ստորակէտ, միջակէտ, վերջակէտ, հարցական և զարմացական նշաններ:

Այ, ոյ, ու, իւ երկբարբառներ, վանկերի բաժանումը; Զայնաւոր և բաղաձայն տառեր:

3. Գրաւոր

Հասարակ և գլխագիր տառերը կանոնաւոր գրել. արտագրել առանձին բառերն ու կարճ նախադասութիւնները: Թելաղու-

թեամբ գրել սովորած բառերն ու պարզ նախադասութիւնները:

Բ. ԴԱՍԱՐԱՐՄԱՆ (շաբաթական 6 դաս)

1. Կարդալ-պատմել

Կարդալ դասագրքի փոքր հատւածները առանց նախավարժութիւնների, չշտապելով և լաւ արտասանութեամբ. կտրդացած յօդուածի բովանդակութիւնը պատմել: Դիւրըմբոնելի բանաստեղծութիւնները բերան անել:

2. Քերականութիւն

Նախադասութիւնների վերլուծութիւնը՝ հարցերով, առանց սերմինների:

3. Գրաւոր

Ճիշտ արտագրութիւն, թելաղբութիւն. գրել անգիր արածը: Գրաւոր պատասխաններ ուսուցչի առանձին հարցերին:

Գ. ԴԱՍԱՐԱՐՄԱՆ (շաբաթական 5 դաս)

1. Կարդալ-պատմել

Պէտք է ուշաղբութիւն դարձնել, որ յօդուածները կարդալիս աշակերտները՝ կարողանան սահուն և մտքի համեմատ շեշտադրութեամբ կարդալ: Նրանք պէտք է կարողանան ճիշտ նախադասութիւններով և ազատ արտայայտել իրենց մտքերը, ճշտութեամբ պէտք է պատմեն սովորած յօդուածների բովանդակութիւնը: Պէտք է կարճ, մատչելի ոտանաւորներն իւրացնեն, բերան անեն և պատմեն պարունակութիւն՝ ուսուցչի տւած հարցերի օգնութեամբ:

2. Քերականութիւն

Ամբողջ այլուրենի տառերի անունները, տառերի թւական նշանակութիւնը մինչև Ժ(10):

Տողագարձի պլարզ կանոնները, չակերտ և փակագիծ, եղակի յօդնակի, յօդնակիի կազմելը, պարզ և բարդ բառեր. նախադասական յօդնակի պատմեն մասնիկների մասին հասկացողութիւն:

Առարկայ, գոյականի փոփոխութիւնը հարցերով, յատուկ և հասարակ անուններ. յօդի մասին հասկացողութիւն:

Գործողութիւն. ներկայ, անցեալ և ապառնի: Որպիսութիւն. եղակի և յօդնակի. գոյականի հետ և առանց գոյականի:

Յ, վ, ւ, է, ո, օ տառերի գործածութիւնը բառերի սկզբում, մէջը և վերջը: Առասարակ պէտք է ուշաղբութիւն դարձնել այն

մէջը և վերջը: Առասարակ պէտք է ուշաղբութիւն դարձնել արտաստարակ վրայ, որոնց մէջ որոշ տառերի գրութեան և արտաստարակ բառերի վրայ, որոնց մէջ որոշ տառերի գրութեան է:

Նախադասութիւնների վերլուծութիւնը՝ տեղմիններով:

3. **Frühling**

Արտագրութիւն, թելագրութիւն, սովորած յօդւածների ամ-
փոփ փոխաղրութիւն: Գրել ինքնուրոյն կազմած նախադասութիւն-
ներ:

Դ. ԴԱՍԱՐԱՆ (Հաբաթական 5 դաս)

1. Կարդալ-պատմել

Աշակերտները պէտք է կարողանան ճիշտ առողջապահութեամբ և սահուն կարգալ աւելի բարդ յօդւածներն ու իւրացնեն պարունակութիւնը։ Պէտք է կարողանան նոյնպէս չափական բանաստեղծական գրւածքների բովանդակութիւնը պատճել։

2. ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հովանիշ բառերի նշանակութիւնը և ուղղագրութիւնը: Կէտապրութիւն համաձայն նախադասութեան: Գոյականսերի կանոնաւոր հոլովումն, բայց երի կանոնաւոր խոնարհումները: Դերանուն, թւական անուն, նախադրութիւն, ձայնարկութիւն, մակրայ, շաղկապինդարձակ և միաւորեալ նախադասութիւններ:

3. Գրաւունը

Աւելի ընդարձակ թելագրութիւն և փոխադրութիւն. շարադրութիւն՝ թէ անցած յօդւածներից և թէ աշակերտների առօրեայկեանքից վերցրած՝ դասարանում մշակւած ծրագրով:

Ե. ԴԱՍԱՐԱՆ (շաբաթական 5 դաս)

1. Կարդալ-պատմել

Հնդարձակ յօդւածներ կարգալ, իւրացնել և բովանդակութիւնն ազատ պատմել, յօդւածը բաժանել իւր բաղկացուցիչ մասերի: Յօդւածը համառօտել՝ տարբերելով էականը երկրորդականից: Անզիր արած ոտանաւորի բովանդակութիւնը ազատ և արձակ պատմել: Կարգալ գրաբար հեշտ ու պարզ գրւած հատւածներ և թարգմանել. գործնական կերպով համեմատել գրաբարի ձևերը աշխարհառողի հետ:

2. ફેરનિયસિની રહિસ્ત

Անկանոն հոլովումներ, անկանոն խոնարհումներ, դերանունների և թւականների հուսվումներ:

Զանազանել զլիսաւոր նախադասութիւնը երկրորդական երկրորդական նախադասութիւնների տեսակները:

3. Φρωτή.

Թելագրութիւն, փոխադրութիւն և շարադրութիւն աշա-
կելատներին մատչելի նիւթերի մասին, ուսուցչի աւած որոշ ցուց-
մունքների համաձայն:

Զ. ԴԱՍԱՐԱՆ (Հաբաթական 5 դաս)

1. Կարդալ-պատմել

Բացատրել և պատմել ընդարձակ և դժւար յօւածներ: Կարգալ և հասկանալ արևմտեան բարբառով զբւած պարզ հատւածներ և բովանդակութիւնը պատմել մեր գրական լեզով: Բերանանել արևելեան և արևմտեան բարբառներով զբւած ուսանաւորներ: Գրաբար կարգալ և թարգմանել դիւրլմբանելի հատւածներ:

2. ԳԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Բառակազմութեան գիտակցական ըմբռնումը. բայանուն,
բայածական, դէրբայ:

Բարդ նախաղասութիւններ. Երկրորդական նախաղասութիւնների կրծառագում:

Գրաբարի քերականական ձևերը ըմբռնել աշխարհաբարի համեմատութեամբ և օգնութեամբ:

Անցած ամբողջ ըերականական նիւթի սիստեմատիք դաշտաւորութիւնը:

3. Φρωτη

Թելաղբութիւն արևմտեան բարբառով զրւած և զբարբ
պարզ հաւաքածների՝ աշակերտների ականջը վարժեցնելու համար:
Ինքնուրոյն շաբադբութիւններ ուսուցչի տւած թեմաների մասին՝
աշակերտների սովորած առարկաներից և շրջապատող կեանքի ե-
րևոյթներից:

IX ՅՈՒՍԵՐԻՆ ԼԵԶՈՒ

ԵԱՀԱՏՐՈՒԹԻՒՆ

1. Ըուսաց լեզվի դասաւանդութիւնը ծխական դպրոցներում սկսում է երկրորդ տարւայ երկրորդ կէսից այն պատճառով, որ ա) հակամանիվագրժական է միաժամանակ սկսել երկրութեանը և յիշողութեան զուր ու անօգուտ լեզուների դասաւանդութիւնը և ձանօթացներ երեխաներին օտար լեզվի ծանրաբեռնութիւն է՝ ձանօթացներ յայտնի վարժութառերի և ձեերի հետ առաջ՝ բան նրանք մի յայտնի վարժութառ

թիւն են ձեռք բերել մայրենի լեզվի ընթերցանութեան, և գրութեան մէջ և պ) որ երբ երեխաները մայրենի լեզով իւրացրած են լինում անհրաժեշտ սկզնական տարրական լեզւական գաղափարները, այնուհետեւ կարելի է աւելի հեշտ, արագ և գիտակցօրէն անցնել օտար լեզվի դասընթացքը:

2. Վեցդասեան զպողը աւարտելիս՝ տշակերտը պիտի կարողանայ վարժ կարգալ հեշտ լեզով գրւած ռուսերէն յօդւածներ և պատմել նրանց բովանդակութիւնը պարզ նախադասիւթիւններով և առնասարակ արտայտել իր մտքերը բաւականին կանոնաւոր ռուսերէնով, առանց խոշոր սխալների։ Այդպիսի արդիւնքի կարելի է հասնել $4 \frac{1}{2}$ տարւայ ընթացքում միայն այն դէպքում, եթէ ուսուցիչը խստութեամբ հետեւի հետեւայ սկզբունքնեուին.

ա). ուսուցիչը պէտք է աշակերտների հետ խօսի միմիայն ոռւսերէն, հէնց առաջին դասից, աշխատելով շարունակ գործ ածել աշակերտներին յայտնի բառերը և նոր բառեր բացատրելիս դիմել ծանօթ բառերին, բացատրութեանը իրերով, պատկերներով հայլ չզննական միջոցներին և միայն ծայրայեղ դէպրում թարգմանութեանը։ Առանձին անհասկանալի բառեր և նախազառութիւններ թարգմանել միմիայն այն ժամանակ, երբ ոռւսերէն կամ զննական միջոցներով բացատրելը դժւար է կամ շատ ժամանակ պիտի իմէ։ Ամբողջ յօդւածներ թարգմանելու կարիք չի զգացվի, եթէ նախօրօք բացատրւած են յօդւածի բառերն ու դարձւածքները. եթէ ուսուցիչը ստիպւած է յօդւածը թարգմանել և այնպէս հասկանալի դարձնել իր աշակերտներին, այդ ցոյց է տալիս, կամ որ առաջուց տեղի չեն ունեցել անրաժեշտ բացատրութիւնները, կամ որ յօդւածը անաջող է ընտրւած և վեր է այդ հասակի աշակերտների հասկացողութիւնից։ Առասարակ պէտք է խուսափել յօդւածներ թարգմանելուց։ Թարգմանութիւնը թէև սկզբում ըստ երևոյթին հեշտացնում է ուսուցչի գործը, բայց իսկապէս միայն վասա է բերում դասաւանդութեան աջողութեանը, քանի որ աշակերտները՝ լաւ գիտենալով որ յօդւածը թարգմանելու է, հարկաւոր ուշագրութեամբ չեն լսում բառերի և դարձւածքների բացատրութիւնները, և կենդանի զրուցարական մեթօդը տեղի է տալիս մեռեալ թարգմանականին։ Օտար լեզով վատ է խօսում նա, ով որ մտքում շարունակ թարգմանում է մայրէնի լեզուից։

բ). Զպէտք է ամեն դասի չափազանց շատ նոր բառեր և դարձրածքներ տալ աշակերտներին, այլ սիստեմատիքաբար առաջ գնալով՝ աշխատել ամեն անգամ բազմակողմանի օգտուել արդէն սովորած բառամթերքից։ Այդ պատճառով դասապրքի յօդ-

ւածները պէտք է այնպէս դասառիքել, որ աշակերտը կարողանայ մի քանի բառերի և դարձածքների բացատրութիւնից յետոյ ինքը հասկանալ ամբողջ յօդւածը:

գ). Աշակերտաների հետ խօսելու և յօդւածների բովանդան-դակութիւնը պատմել տալու ժամանակ պէտք է անպայման պա-հանջել լիակատար պատասխաններ:

3. Ամբողջ գասրինթացքի ժամանակ գործնականը պէտք է առաջին տեղը բնէք քերականութեան հետ համեմատած: Դպրոց մտնելիս երեխանսերը արդէն խօսում են հայերէն և դպրոցը մի-միայն կարգի է բերում նրանց լեզուական հարստութիւնը: Խոկ ուսւելու խօսել պիտի նրանք վարժւեն հէնց դպրոցում: ուստի քերականութեան դասաւանդութեան նպատակն է այստեղ գլխաւորապիս կանոնաւոր խօսակցութեան ու գրութեան նպատելը:

Գործնական վարժութիւնների նիւթը դասաւորելիս պէտք է աչքի առաջ ունենալ, որ 1) բառամթերքը հետպհետէ, ասափառնաբար հարստացվի, որ 2) յօդւածների դարձւածքները շրջնիւմ՝ միշտ կը կնւեն հին բառերն ու նախադասութիւնները և աշակերտները ծանօթանան հոմանիշ բառերի հետ ու կարողանան նրանց ճիշտ իմաստով համապատասխան տեղերում գործածել և որ 3) վերջապէս՝ ամէն բառ վերցնելի ոչ թէ առանձին, այլ նախադասութեան մէջ, այնպէս որ իրացնելի նաև բառի կենզանի կապը ուրիշ բառերի հետ խօսակցութեան մէջ:

Թուսաց լեզվի ձևերի կանոնաւոր գործածութիւնը դժւարա-
նում է պիտառապէս այն պատճառով, որ այդ լեզուն մի շաբք
առանձնայատկութիւններով շատ է տարրերում մեր մայրենի
լեզվից: Անհրաժեշտ է, որ ուսուցիչը հէնց առաջին դասից լուրջ
ուշագրութիւն դարձնի այդ առանձնայատկութիւնների վրայ և
բաւակարաչափ գործնական վարժութիւններով լաւ սեփականաց-
նել տայ աշակերտներին աւելի առաջ, քան թէ ծրագրի մէջ նշա-
նակւած են նրանք, որպէս քերականական վարժութիւնների նիւթ:
Այդպիսի առանձնայատկութիւններից աչքի են ընկնում՝

ա). շեշտագրութիւնը և կուտ ու փափուկ սախեսները ար-
տասահմանվեն (մասնաւանդ եւ և լ),

—) սահմանականի սկզբ,

Համաձայնութեանը կ պոլականների համաձայնութեանը,

զ). ածականարր ու բարեկանարր սեռի համապատական գործընթացը կատարվել է առաջին անգամ 1990 թվականի մայիսի 2-ին:

4). նախողիրների և նախադաս մաթիւնը մաքի փոփոխութեան համեմատ

զ). բայերի տեսակների (կատարեալ և անկատար) գործառութիւնը, մանաւանդ ապանիի կազմութեան ժամանակ.

է). յաճախ գործածական բայերի խնդրառութիւնը (употребление падежей) այն գէպքերում, երբ տարբերում է հայերէնից:

Ծանօթութիւն, ցանկալի է, որ երեխաները որքան կարելի է շուտ սովորեն հայերէնի մէջ զանազանել տրականը հայցականից, որովհետև այդ հողովների շփոթելը հայենէնի մէջ մեծ խոչընդունակութ ուստերէն կանոնաւոր խօսելու համար:

4. Որպէսզի ուստերէն դասաւութիւնը, մանաւանդ նրաքերականական ձևերի իւրացնելը մեր ձեռքի տակ եղած կարճ ժամանակամիջոցում շօշափելի արդիւնքների համար, անհրաժեշտ է որ քերականական կանոնները լաւ պարզաբանւած լինեն նախ հայերէնի դասերին, այնպէս որ ուստերէնի ուսուցիչը կանդ առնի միայն տարբեր ձևերի բացատրութեան վրայ, իսկ մնացած գէպքերում բաւականանայ միայն հայերէն տերմինները թարգմանելով: Ընդհանրապէս, իրբե սկզբունք պիտի ընդունել, որ ուստերէն լեզւի գործնական-տեսական վարժութիւնները հետեւում են նոյնանման հայերէն վարժութիւններին:

5. Խօսակցական վարժութիւնների համար իրբենիւթ պէտք է ծառային բազմազան նիւթեր, այն է՝

ա). առօրեայ կեանքի երեսյթներ, մանաւանդ աշակերտական միջավայրը,

բ). պատկնրներ,

գ). դասազբի յօդւածներ, նոյնիսկ հայերէնի դասերին կարդացած յօդւածներ, մանաւարդ դասաւութեան առաջին տարում,

դ). առհասարակ բոլոր դպրոցական առարկաները (պատմութիւն, աշխարհագրութիւն, կրօն, թւարանութիւն, բնագիտութիւն և այլն), այնպէս որ վեցամեայ դասընթացը աւարտողը կարողանայ քիչ թէ շատ կանոնաւոր կերպով սուստերէն արտայայտել իր ձեռք բերած գիտութիւնները:

6. Գրաւոր վարժութիւնների միջոցին ընդհանրապէս պէտք է հետեւ այն կանոնին, որ ինչքան աշակերտը կարողանում է խօսել, այնքան էլ կարողանայ գրել. գրաւորը միշտ պէտք է զուգընթացարար ընթանայ բանաւորին, և պէտք է խոյս տալ նոր բանաւոր վարժութիւններին անցնելուց, եթէ նախորդների գրաւոր ձեակերպութիւնը իւրացւած չէ:

Ծ Բ Ա Գ Ի Բ

Բ. ԴԱՍԱՐԱՐԱՆ, երկրորդ կիսամեակից (շաբաթական 4 դաս).

ԲԱՆԱԿՈՐ

Վարժութիւններ բանաւոր, բառեր և նախագասութիւններ ցըապատող աշակերտական կեանքից և հայերէն անցած յօդւածներից: Փաղափար սեռի մասին մոյ., жен. и сред. роды (գործնականապէս՝ առանց վերջաւորութիւնները սովորելու), համարել մինչև հարիւր:

գ. ԴԱՍԱՐԱՐԱՆ (Շաբաթական 5 դաս).

Լ. ԲԱՆԱԿՈՐ

Գրագիտութիւն: Կանոնաւոր ընթերցանութիւն: Նախապատրաստական վարժութիւնների յօդւածների բովանդակութիւնը պատմելու հարց ու պատասխաններով: Բերանացի՝ կարճ ոտանաւորներ: Համարել մինչև 1000:

օ և ա կարդալը: Շեշտուած է ուսուցչի առաջնական աշխատանքը:

2. ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Զայնաւորներ և բազաձայններ. եղակի և յոգնակի թիւ: Նախագասութիւններ վերջերով հարցերով առանց տերմինների:

Ուղղագրութիւննից. Ե և գործածութիւնը եւ, յա ուսուցչի առաջնական աշխատանքը և գործածութիւնը առաջնական աշխատանքը:

Յ. ԳՐԱԿՈՐ

Արտագրութիւն: Թելագրութիւն անցած նիւթերից և գրաւոր վարժութիւններ քերականութիւնից: Անգիր սովորածի գրութիւն:

IV ԴԱՍԱՐԱՐԱՆ (շաբաթական 5 դաս).

Լ. ԲԱՆԱԿՈՐ

Վարժ ընթերցանութիւն: Պատմութիւն անցած նիւթի նախագրով և ապա առանց հարցերի: Բերանացի ոտանաւորներ: Հարցերով և ապա առանց հարցերի և նախագաս մասնիկների գործագարժութիւններ նախդիրների և նախագաս մասնիկների մեծ թւերով (քանակական ծութեան մէջ: Համարել ամբողջական մեծ թւերով (քանակական և դասական):

2. ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Առարկայի գործողութեան և որպիսութեան անուններ: Պարզ նախագասութեան վերլուծութիւնը տերմիններով: Գոյականի և գիմաւոր գերանւասն հոլովումը հարցերով. ներկայի, անցեալի և պատմութիւնների լուսաբանումը հարցերով: Փաղափար արապատմատի (անկատար) խոնարհումը հարցերով: Գաղափար արապատմատի, նախագաս և յետագաս մասնիկների մասին: Ուղղագրութիւննից անորոշ լուսող ձայնաւոր և բազաձայն հնչիւնների գրութիւններ:

թիւնը = е= Ենցլօե= ё= օ= Ֆ-յաճախ դործածւող արմատների
մէջ:

3. ԳՐԱՀՈՐ

Նարունակութիւն նախորդ վարժութիւնների: Գլաւոր պատասխաններ ուսուցչի տևած հարցերին:

V ԴԱՍԱՐԱՆ (Հաբաթական 5 դաս)

1. પૂર્ણાંત્ર

Հնիթելցանութիւն աւելի բարդ յօդւածների: Պատմութիւննարցերով և առանց հարցերի: Տերանացի ստանաւորներ: Վարժութիւններ մասնաւորապէս հայելենից առարկեր խնդրապութիւննեցող բայերի գործածութեան մէջ: Վարժութիւններ բայերի տեսակների (виды) գործածութեան մէջ:

2. ՔԵՐԱԿԱՏՈՒԹՅՈՒՆ

Գոյականի հոլովումը և բայի կանոնաւոր խոնարհումը տեր-
մինսերով: Վիճ, գերանուն, թւական անուն, մակրայ, շաղկապ,
նախդիրներ և ձայնարկութիւն:

Ուղղագլութիւնից.—օ և բարդ բառերի մէջ, կոկորդային բաղաձայնների վոփոխութիւնը: Եւնեցող գործածական արմատնորի աղիւսակը:

3. Frwing

Բացի նախորդ վարժութիւններից, փոխադրութիւններ անցած կարձ յօդածների:

VI. ՊԱՍՏՐԱՆ (Հաբաթական գ պատ).

1. *Բանակը*

Ըեթեքցանութիւն, պատմութիւն սեփակտն բառերով: Յօդւածի բաժանումը բաղկացուցիչ մասերի: Յօդւածի համառօտութիւն: Անգիր արած ոտանաւորների բովանդակութեան պատմութիւն այն գէպքերում, երբ դրանից ոտանաւորի գեղեցիութիւնը չի կորչում:

2. ՔԵՐԱԿԱԾՈՒԹԻՒՆ

Ածական, թւական անունների և գերանւան հոլովումը:
Մակրայի սովորական կազմութիւնը: Գլխաւոր և երկրորդական
նախագասութիւնների զանազանելք: Վարժութիւններ յարաբերա-
կան գերանւան զորձածութեան մէջ:

3. Frwing

Բացի նախորդ վարժութեանսերից, փոքրիկ շարադրութիւն-

Ներ նախօրօք դաստիանում ուսուցչի օգնութեամբ մշակւած նիւթի մասին:

X. Ø h ü ß ü ï ñ n h Ø h h ü

ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Թւաբանութեան գասաւանդութեան արդիւնքները նայելով նրան նուիրւած ժամանակին և ոյժերին՝ մինչև հիմայ նաև աւելի կուլտուրական երկրներում՝ համեմատաբար աննշան են եղել։ Այս երկութիւններագրւում է հետևեալ պատճառներին։

ա. Այս առարկայի վերացալիքն և միենոյն ժամանակ խիստ հետևողական բնաւորութիւնը։ Այս առանձնայատկութեան պատճառով մանկավարժութիւնը դիմել է զանազան գննական միջոցներին (միայն ներկայումս 200-ից աւելի տեսակ են դրանք) և մեթոդական այլ և այլ եղանակների օժանդակութեանը, բայց այս ամենը չարիքը մասսամբ մեղմացրել են, սակայն արմատախիլ անել այն, անկարող են եղել։ Զննական միջոցների՝ մատերի, խորանագրների, համրիչի և այլն չափազանց տեղի ու անտեղի գործածութիւնը շատ անգամ ստորին դասարաններում սպասածին հուկառակ հետևանքների է հասցրել։ Աշակերտները կարողանում են այդ միջոցներով խնդիրները լուծել, իսկ առանց դրանց անձարացած են մնում, քանի որ նրանց մէջ վերացուցումը (աբստրակցիա) անկատար է մնացած լինում։

բ. Շատ գպրցցներում գլխաւորապէս վերացական թւելով
ինդիբներ են լուծում կամ նաև խառն ի խուռն բարդ, անբնա-
կան կազմութեամբ անուանական թւերով ինդիբներ, որոնք չա-
փազանց շատ ժամանակ են խլում՝ ի վեաս զործնական բանաւոր
ինդիբների. Այդ եղանակներից թէ մէկը և թէ միւսը փոխանակ
հարցամիջութեան՝ միայն անտարբերութեան, թմբութեան և
յուսահատութեան պատճառ են լինում: Միայն կեանքից ու զըպ-
րոցական գիտելիքներից բնականօրէն բվխած ինդիբները մեծ և
օրգանական համախմբութեան վերածուած՝ կարող են վառ հար-
ցասիրութիւն առաջցնել մանկան մէջ և ցանկալի արդինք
տալ: Ներկայումս մանկավարժութիւնը շատ ծանրանում է այս
կէտի վրայ և այս սկզբունքով կազմուած ինդիբների ժողովածու-
ները առանձին ուշադրութեան են արժանացել:

սարը առանձին ուշադրություն է գտնելու համար: Եթե առաջարկ կատարվի առանձին առաջարկություն, ապա առաջարկը կատարվում է առանձին առաջարկություն է գտնելու համար:

աշակերտների մէջ ինքնավստահութիւնը և ինքնօգնութեան զգացմունքը իսպառ մեռնում է:

դ. Դասատուներն առհասարակ խաբում են ընդունակների յառաջադիմութեամբ, թոյլերն ու գանդաղամիտները հետզհետէ յետ են ընկնում և շուտով բոլորովին վճառում:

Ե. Թոյլ յիշողութեան ունեցող աշակերտները մնե գժուար-
ութեամբ և սովորում բազմապատկութեան աղիւսակը, մանա-
ւանդ երբ այս բանը յիշողութեան գիրակշռութեան շրջանում չի
վերջանում:

զ. Զարիքների մէջ մնձ տեղ են բանում աւանդելի նիւթի աւելորդ տարրերը և աննպատակ մանրամասնութիւններն ու կուտակումները, անյաջող բախչումն (գասաւորութիւն) ըստ հասակի, ինչպէս նաև թւարանութեան՝ միւս առարկաների հետ առնչութիւնից զուրկ, սոսկական դիրքը դասընթացքում։ Նիւթին վերաբերեալ ահա այս վերջին կէտերն են, որ ծրագրի համար մեզ գլխաւորապէս պէտք է զբաղեցնեն։

Թւաբանութեան չորս գործողութիւնները զործադրւելով
երեք տեսակ թւերի՝ ամբողջ, տասնորդական և հասարակ կո-
տորակների վրա՝ 12 տեսակ խնդիրներ են կազմում. և որպի-
հետեւ այս թւերը լինում են վերացական կամ անուանական, հե-
տեւաբար մենք իսկապէս 24 տեսակ գործնական ու տեսական
խնդիրներ լուծելու պահանջն ենք զգում: Այս հիմնական խնդիր-
ներն իրար հետ կապւելով ու զանազան խմբակցութիւններ կազ-
մելով՝ նորանոր բարդութիւններ են առաջացնում: Ահա այս տար-
երից կազմւած աննպատակ կերպով խճողւած խնդիրներն
են, որ չափազանց ծանրաբեռնում են թւաբանութեան դասաւան-
դութիւնը:

Վերջին ժամանակներս թւաբանութեան դիտակտիկայի մէջ բարենորոգչական ձգտումները առանձնապէս կենտրոնանում են նիւթի նպատակայարմար լնտրութեան շուրջը։ Այս նիւթերը բաժանում են կարևոր, ցանկայի և աւելորդ տարրերի։

Ա. Պարզ ժողովրդական դպրոցների համար աւելորդ նիւթեր համարում են.

ա. Միլիոնաւոր թւերով գործողութիւնները:

բ. Աւելի քան երկու անուանական թւեր պարունակող խընդուրաները:

գ. Թէի, կռտորակի և այլն գաղափարների սահմանաւորումը (գէֆինիցիաները):

Դ. Պարբերական կոտորակները հասարակի մեռածիու:

Ե. Խառնուրդի բարդ խնդիրները, շղթալի կանոնը, հատու-

Հատուցման ժամանակամիջոցին (մուրհակի) վերաբերեալ և այլ հանձու անընական ինդիքսներ, որոնք գործնական կեանքի պաշտպանութեան համար չեն բղխում:

Բ. Կարեւոր նիւթերի, որոնք նաև մեր գ տեսայ և օ առաջ
դասընթացքով դպրոցների համար պէտք էր ի նկատի ուսենալ,
հետեւաներն են.

բ. Միլիոնի շրջանում գրաւոր չորս գլուխութեան երկու տեսակ թւերով:

վերացական և անուամական՝ $\frac{1}{2}, \frac{1}{4}, \frac{1}{8}, \frac{1}{3}, \frac{1}{6}$,
 գ. Գործնական կեանըում՝ հանդիպող $\frac{1}{2}, 0,1-0,001$. չորս գործողութեանը և տասնորդականներից՝ $\frac{1}{10}$,

թիւնները: Ես այս կոնկրետ ամբողջ ու կոտորակ թւերով առ

գ. Գործնական խաղութեալ և ինպէտներ ժամանակի, տարածութեան,
ու ծախսի վերաբերեալ և ինպէտներ ժամանակի, տարածութեան,
շահի, զեղծի, խառնուրդի և ընկերութեան այն կազմութեամբ, ինչ
կազմութեամբ որ նրանք պահանջում են իրական կեանքում:

գ. Յանկալիք սու առ առ է
հանգամանքների մէջ գտնող քաղաքային զպրոցսով առ է
կոտորակների մանրամասնութիւնները և թւերի քառակուսի ու
խորանարդ արագմատները, գործնական թւաբանութեան աւել

բարդ պայմաններով լիւր Նիւթերի ընտրութիւնը տուարկայի կամ օթպար ու առաջ քննութեան առնելուց յետոյ՝ մենք պէտքէ ի նկատի ունենանք այս խնդրի նաև սուբէկտի կողմը, այսինքն աշակերտների մտաւոր զարգացման աստիճանները զանազան տարիներում, որպէսզի ուսուցացման նիւթի գասաւորութիւնը աւելի նպատակայարմար լինի:

Գերմանական սորտիվոյ հետազոտութեաց
Հարտմանը՝ այս նպատակով իր երկարամեայ հետազոտութեաց
հիման վրայ գտել է հետևեալ 6 հիմնական աստիճանները, նա-
և առաջարկական կեանքից սկսած, որ մասնագետների շրջանուն
կառապատճեն կազմակերպեն:

առանձին ուշադրութեան է արօմանյալ
ա. Աստիճանը 1—3 տարեկան հասակն է, երբ նրանց մէջ
ուսակեցում է տպաւորութիւնների ստացումը առանց այլ և

բ. 3-6 սարեկան հասակը—պարզ վերադարձն թեան ըլ-

Ճանճ է, երբ մանուկն սկսում է գիտակցօրէն վերաբերուել շրջապատին:

գ. 6—8 տարեկան հասակը ոյժը աղաւ զարգացման

գ. 9—11 տարեկան հասակում գերակշռությ մեքենայական
յիշողութիւնը:

